


ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

2․96



ՀԱՆՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԸՆԹԱՑԻ



*Հայաստանի Հանրապետության նախագահ
Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը
Միավորված ազգերի կազմակերպության ասամբլեայում*



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՍՁՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից
տարին չորս անգամ

2.1996

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ծիրխանյան Վ. Գ.

(նախագահ)

Քոթանջյան Հ. Ս.

(գլխավոր խմբագիր)

Աբրահամյան Մ. Ա.

Ավետիսյան Մ. Վ.

Գորդիենկո Ի. Վ.

Խորխորունի Վ. Վ.

Հայրապետյան Վ. Ա.

Հարոյան Հ. Վ.

Հարությունյան Ա. Թ.

Հարությունյան Գ. Բ.

Հարությունյան Մ. Հ.

Մարտիրոսով Լ. Ա.

Շահաուվարյան Ս. Ն.

Պետրոսյան Ա. Ա.

Պետրոսյան Ա. Ս.

Պետրոսյան Գ. Լ.

Սարգսյան Ա. Գ.

Սարգսյան Ա. Ե.

Սարգսյան Մ. Ս.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տեր-Թադևոսով Ա. Ի.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ռ. Գ. Սահակյան, Սարդարապատի խորհուրդը . . . 3

Ս. Հ. Գարամանուկյան, Հայկական լեզունը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ 14

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Քոթանջյան, Ռազմաքաղաքագիտական դաշտային հետազոտությունների գործիքակազմի մասին 26

ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Տ. Հովակիմյան, Մարտական տեխնիկայի պաշտպանությունը մագնիսական դաշտերի միջոցով հայտնաբերումից և խոցումից 46

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Ն. Ալիպյան, Ս. Ռ. Դավթյան, Ռազմական տեղագրաներկրաբաշխական և քարտեզագրական հետազոտությունները Հայաստանի և մերձակա շրջանների տարածքներում 55

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ս. Գ. Մելքոնյան, Թուրքիայի վիճված ուժերի օպերատիվ և մարտական պատրաստությունը 67

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. Խ. Բաղդասարյան, Համարի բառարան 78

«ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» («Армянская армия»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
N 2, 1996
Издается 4 раза в год

Редакционная коллегия:

*В. Г. Ширханян (председатель); Г. С. Котангжян (гл. редактор);
М. А. Абрамян; М. В. Аветисян; В. А. Айрапетян; А. В. Ароян; А. Т. Арутюнян;
Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; И. В. Гордиенко; Л. А. Мартirosов; А. А. Петросян;
А. С. Петросян; Г. Л. Петросян; А. Г. Саркисян; А. Е. Саркисян; М. С. Саркисян;
Н. Г. Тер-Григорьянц; А. И. Тер-Татевосов; В. В. Хорхоруни; С. Н. Шахсуварян.*

Научное консультирование и редактирование

генерал-майор *М. А. Абрамян*; подполковник, д. мед. н., профессор *Б. Н. Арутюнян*;
к. филос. н., доцент *В. Х. Багдасарян*; подполковник, д. ист. н., профессор *Б. П. Балаян*;
полковник, д. полит. наук, академик АВН (г. Москва) *Г. С. Котангжян*;
генерал-майор *С. С. Мартirosов*; д. ист. н., проф. *Р. Г. Саакян*;
майор, д. тех. н., академик АВН (г. Москва) *А. Е. Саркисян*;
генерал-лейтенант *Н. Г. Тер-Григорьянц*.

«ՆԱԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» («Armenian Army»)
MILITARY-SCIENTIFIC JOURNAL
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 2, 1996
Is published 4 times a year

Editorial board:

*V. G. Shirghanian (Chairman), H. S. Kotanjian (Editor-in-chief),
M. A. Abrahamian, M. V. Avetisian, I. V. Gordienko, V. A. Hairapetian, H. V. Haroian,
A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian, V. V. Khorkhoruny,
L. A. Martirosov, A. A. Petrosian, A. S. Petrosian, G. L. Petrosian, A. E. Sarkisian,
A. G. Sarkisian, M. S. Sarkisian, S. N. Shahsouvorian, N. G. Ter-Grigoriants, A. I. Ter-Tatevosov.*

Scientific Consulting and Editing:

*M. A. Abrahamian, Major-General; V. Kh. Baghdasarian, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
B. P. Balaian, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.;
B. N. Haroutunian, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Medicine;
H. S. Kotanjian, Colonel, Dr. of Polit. Sc., Academician of AMSc (Moscow);
S. S. Martirosian, Major-General; R. G. Sahakian, Prof., Dr. of Hist. Sc.;
A. E. Sarkisian, Major, Dr. of Tech. Sc., Academician of AMSc (Moscow);
N. G. Ter-Grigoriants, Lieutenant-General.
Consultation in English Military Terminology: A. Armenian, ph. D..*

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կցանկանայի, որ յուրաքանչյուր ընթերցող լրջորեն խորհեր գլխավոր շահի մասին. վտանգներով լեցուն այս շրջանում պահպանել ամեն մի հայի համար սուրբ այս օրրանը՝ Արարատյան դաշտն իր սովոր բնակչությամբ, իր քաղաքներով, հայ ժողովրդի հազարամյա մշակույթի կենտրոններով ու օջախներով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ընդունված է կրկնել անգլիական այն առածը, թե «պատմության ամենամեծ դասն այն է, որ նրանից ոչ մի դաս չեն առնում»: Որքան էլ համոզիչ թվա այդ ասույթը, դա այդպես չէ: Պատմությունից դասեր քաղում են, բայց երբեմն՝ անմիջապես, իսկ հաճախ՝ մեծ ուշադրմամբ:

Ներկայումս, երբ լսվում են որոշ պատմաբանների կոչերը՝ «անցյալը թողնել անցյալում», մեզ թվում է հույժ կարևոր և այժմեական վերստին անդրադառնալ հայոց պատմության ինչպես մոայն, այնպես էլ լուսավոր էջերին և փորձել նորովի, քննական-վերլուծական եղանակով ու պատմականության դիրքերից լուսաբանել այդ էջերը, մի խնդիր, որի լուծմանը մեծապես խանգարել են գաղափարական ճնշումները՝ մի կողմից, և միակողմանի, աչտու ու հողի մոտեցումները՝ մյուս կողմից:

Հայաստանի ու հայ ժողովրդի երեք-հազարամյա պատմության ամենալուսավոր էջերից մեկն էլ Սարգարապատում հայոց զորքի տարած հաղթանակն էր Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական կանոնավոր բանակի դեմ:

Այդ հաղթանակի նշանակությունն այսօր առավել խորն ըմբռնելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել այն իրադրությունը, որ ստեղծվել էր Անդրկովկասում հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Այդ հեղաշրջման, կամ հեղափոխության, անմիջական հետևականքներից մեկը երկրամասի անջա-

տումն էր Ռուսաստանից, Հայաստանի համար ձակատագրական մի քայլ, որը հնարավոր դարձավ առաջին հերթին մուսավաթական Ադրբեջանի և մենջևիկյան Վրաստանի ջանքերով:

Հայաստանի համար վնասաբեր էր ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Ուլյանով-Լենինի և ապագությունների ժողովրդական կոմիսար Ջուղաշվիլի-Ստալինի ստորագրությամբ 1917 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) ընդունված դիմումը «Ռուսաստանի և Արևելյի բոլոր աշխատավոր մուսուլմաններին», որում մասնավորապես ասված էր. «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման և նրանից Հայաստանը խլելու վերաբերյալ պայմանագիրը պատռվել է և ոչնչացվել»¹:

Ըստ էության վնասաբեր էր նաև «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը ընդունեց Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1917 թ. դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին): Վնասաբեր էր, որովհետև հայ ժողովրդին շնորհված ազատ ինքնորոշման իրավունքի երաշխիք էր դիտվում *ռուսական զորքերի դուրսբերումը Թուրքահայաստանից և «հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմավորումը Թուրքահայաստանի բնակչության անձնական և գույքային անվտանգությունն ապահովելու նպատա-*

¹ «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, с. 35.

կողմ², մի խնդիր, որը պարզապես անկարող էին լուծել եղեռն վերապրած արևմտահայության մնացորդները:

Եվ այսպես, ռուս սինվորի, նաև հայ կամավորների արյան գնով 1915—1916 թթ. գրավված տարածքները (Երզնկա, Էրզրում, Տրապիզոն, Վան, Բիթլիս և այլն) կամավոր կերպով թողնվեցին պարտության կրած կողմին՝ թուրքերին, որոնք չհապաղեցին նոր իրադրությունն օգտագործել իրենց հին ծրագրերն իրականացնելու համար:

Իրավացի է ֆրանսիական հայազգի պատմաբան Սերժ Աֆանասյանը՝ գրելով. «Հիմնվելով Կովկասում գտնվող իր գաղտնի գործակալների փետրվարի 6-ի հաղորդման վրա, որով հաստատվում էր ռուսական բոլոր Վորքերի դուրսբերումը տարածաշրջանից, Էնվեր փաշան գտավ, որ հասել է ժամը իրականացնելու պատերազմի սկզբին ձախողված իր երապանքը՝ ոտքի հանել Ռուսական կայսրության մահմեդական ազգաբնակչությանը և իր համար ճանապարհ հարթել դեպի «թուրքական» կենտրոնական Ասիա»³:

1918 թ. փետրվարի 12-ին թուրքական Վորքերը, խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5-ին (18-ին) Երզնկայում (Էրզնիջան) ստորագրված վիճակագրությունը⁴, անցան հարձակման և կարճ ժամանակում ոչ միայն հետ գրավեցին պատերազմի տարիներին կորցրած հողերը, այլև, հատելով 1914 թ. ռուս-թուրքական սահմանը, ներխուժեցին Արևելյան Հայաստան:

Հետաքրքրական է, թե թուրքական

² Նույն տեղում, էջ 75 (ընդգծումն իմն է — Ռ. Ս.):

³ Ս. Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, 1918 թ. մայիսի 21—29: Ֆրանսերենից թարգմանությունը և վերջաբանը՝ Ռ. Գ. Սահակյանի: Ե., 1991, էջ 21:

⁴ Հայ ռավական պատմաբան գեղապետ Աշոտ Հարությունյանն իրավացիորեն նկատել է, որ կովկասյան 3-րդ բանակի հրամանատար գեներալ Մեհմեդ Վեհիբ փաշան մտադիր չէր պահպանելու վիճակագրի՝ դեմարկայիոն գծի վերաբերյալ հողվածը: Տես Ս. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոլիվները: Ե., 1984, էջ 122:

կողմը պաշտոնական ինչ ձևակերպում էր տվել վիճակագրի խախտմանը: Օսմանյան պառլամենտի 1918 թ. փետրվարի 23-ի նիստում արտաքին գործերի նախարար Սիմեոն Ենիմի բեյը հայտարարել էր, թե թուրքական բանակի հարձակումն ուղղված չէ ռուսական բանակի դեմ, այլ միայն՝ «թուրքերին սպառնացող հայկական հրոսակների դեմ», «որոնք բնաջնջում են շրջանի մահմեդականներին»⁵:

Գրավելով Կարսի մարզն ամբողջությամբ՝ Էնվեր փաշան թուրքական կովկասյան բանակի մի քանի դիվիզիաներից ստեղծում է «Կարսի բանակը» գեներալ Յաղուբ Շևքեթ փաշայի հրամանատարությամբ՝ Կովկասը նվաճելու ակնկալությամբ:

Նույնիսկ այսօր, մոտ 80 տարիների հեռավորությունից քննելով Էնվերի պանթուրքական-պանթուրանական ծրագիրը, պատմաբանները դժվարանում են պատասխանել այն հարցին, թե ի վերջո գեներալխիմուս Էնվեր փաշան ինչ իրական երաջխիքների հետ էր կապում իր ծավալապաշտական պլանների իրագործումը, այն էլ այն պահին, երբ թուրքական բանակները լուրջ դժվարությունների էին հանդիպել Պաղեստինում և այլուր: Ավելին, պրոֆ. Ֆիքրեթ Ադանիրի կարծիքով, տակավին 1917 թ. վերջին իթթիհաթական կուսակցության ղեկավարները (որոնք երկրի տերերն էին պատերազմի ամբողջ ընթացքում) նախապզում էին, որ Կենտրոնական տերությունների բոլոր պատերազմը տանուլ է տալիս⁶: Էնվերի այդ արկածախնդրությունը թերևս կարելի է բացատրել մոտալուտ պարտության վախով, որն էլ նրան մղում էր վառանցական որոշումների փորձարկման:

⁵ Ssu Archive du Ministère des relations exterieures. Մեջբերվում է ըստ Serge Afanasyan. La victoire de Sardarabade Arménie, 21—29 mai 1918. L'Harmattan, Paris, 1985, p. 24—26.

⁶ Բոխումի համալսարանի պրոֆեսոր Ֆիքրեթ Ադանիրի գեկուցումից 1994 թ. հոկտեմբերին Երևանում կայացած հայ-գերմանական գիտաժողովում:

Եվ այսպես, 1918 թ. մայիսի 14-ին թուրքական ուժերը կանգնած էին Արփաչայի ու Արաքսի ափերին՝ այնտեղից գնդակոծելով Ալեքսանդրապոլը: Մինչ Անդրկովկասյան սեյմի կառավարությունը Ա. Չխենկելու գլխավորությամբ փորձում էր հավաստիացնել, թե թուրքերը չեն անցնի Արփաչայը, ի տարբերություն կորավար Անդրանիկի, որը մայիսի 13-ին տեղեկացնում էր, որ «թուրքերը մոտ օրերս կանցնեն հարձակման»⁷, մայիսի 15-ին հակառակորդը գրավեց Ալեքսանդրապոլը, իսկ մայիսի 19-ին թուրքական 36-րդ կովկասյան դիվիզիան ներխուժեց Արարատյան դաշտ՝ Երևանի վրա արշավելու անսքող մտադրությամբ:

Ստեղծված օրհասական վիճակը և դեպքերի հետագա ընթացքը նախընտրում ենք վերարտադրել ըստ ճակատամարտի մասնակից հայազգի Ժակ Կայալոֆի հուշերի, ինչպես նաև ճանաչված պատմաբաններ Ռիչարդ Հովհաննիսյանի, Ջոն Կիրակոսյանի, Աշոտ Հարությունյանի և Սերժ Աֆանասյանի գրքերի ու հոդվածներին: Ավելայնենք, որ հենց Կայալոֆի «Մարդարապատի ճակատամարտը» խորագրով գիրքն⁸ է ոգեշնչել Ա. Աֆանասյանին ձեռնամուխ լինելու իր պրպտումներին Ֆրանսիայի ու Հայաստանի պետական արխիվներում, որոնք պահվեցին նրա արժեքավոր աշխատության լույս աշխարհ գալով (1985 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով և 1991 թ. Երևանում՝ հայերեն):

Եվ այսպես, 1918 թ. մայիսի 20-ին, երբ թուրքերն արդեն հասցրել էին գրավել Ալեքսանդրապոլ—Երևան երկաթգծի վրա ընկած Արաքս կայարանը, Մարդարապատից 10 կմ հեռավորության վրա, Բաթումի կոնֆերանսում թուրքական պատվիրակության ղեկավար Հալի բեյը հայ պատվիրակներին (Խատիսով, Բաջալունի, Պապաջանով) հայտարար-



Սերժ Աֆանասյանի «Մարդարապատի հաղթանակը. Հայաստան, 1918 թ. մայիսի 21—29» ֆրանսերեն գրքի շապիկը

րում է, որ «հայերը պարտվել են և պետք է ենթարկվեն»⁹: Լուրը հասնելուն պես Երևանում և նրա շրջակայքում սկսվում է իրարանցում:

«Մեկ ամսվա ընթացքում,—գրում է Կայալոֆը,—300 հազար գաղթականներ Վանից ու Ալաշկերտից անցնում են քաղաքով՝ առաջ բերելով դժգոհություն բնակչության մեջ, որը, սակայն, չի կորցնում իր սառնասրտությունը: Բանկերն ու փոստատուները բաց էին, կինոյի միակ դահլիճում, որ գործում էր քաղաքում, հաջորդաբար ցույց էին տալիս երկու կինոնկար: Հիմնական Աստաֆյան փողոցը ամայի էր: Պողոտայով անցնող տրամվայը (կոնկան), որը քաջում էին երկու նիհար ձիեր, այլևս չէր աշխա-

⁷ Տես «Воспоминания генерала Ф. И. Назарбекова». «Բանբեր Հայաստանի արխիվների», հմ. 3, 1992, էջ 139:

⁸ J. Kayaloff. The Battle of Sardarabad. La Haye—Paris, 1973.

⁹ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 68/200, գ. 23, թ. 113: Մեջբերվում է ըստ՝ Ա. Աֆանասյան, նշվ. աշխ., էջ 40:

տում: Վանի գաղթականների հրատարակած միակ օրաթերթը՝ «Աշխատավորը», լույս էր տեսնում ժամանակ առ ժամանակ»¹⁰:

Բարեբախտաբար, այդ ժամանակ Երևանում էր գտնվում Վանի հերոսական ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ Արամ Մանուկյանը, որը Թիֆլիսում նստած Հայ ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչն էր: «Հենց այդ ողբերգական ժամերին էր, — գրում է դեպքերի ուշադիր հետազոտող Ս. Աֆանասյանը, — որ Արամը, ինչպես Վարդանը Ավարայրում, ի հայտ բերեց այդ հիշարժան հերոսապատմանը վայել քաջություն: Նրա անհողող դժոխականությունը՝ ամեն գնով պաշտպանելու քաղաքը, փոխանցվեց Սիլիկյանին մայիսի 20-ին: Եվ այս վերջինը, որ դեռ նախօրյակին տատանման մեջ էր, իր սևդակալ փոխգնդապետ Վեքիլովի հետ մշակեց գործողության պլան, որի իրականացումը վստահվեց գնդապետ Դանիել բեկ Փիրումյանին և նրա օգնական, նախկինում ցարական բանակում ծառայած, ծագումով էլզասցի կապիտան Շենուրին»¹¹:

Միաժամանակ Արամ Մանուկյանին հաջողվել էր ճակատամարտի նախօրյակին Կարսից ու Արևսանդրապոլից Երևան փոխադրել այնտեղ մնացած վիճակների մի որոշ մասը: Արևմտյան կողմից թուրքական 5-րդ հետևակային դիվիզիայի գետնայումը խափանելու նպատակով գեներալ Սիլիկյանը կարգադրել էր պայթեցնել Կարակալայի ու Մարգարայի կամուրջները, որոնք պաշտպանվում էին Վանի նրկու գնդերի կողմից:

Ինչ ուժեր էին հակադրվում թուրքական երեք դիվիզիաներին:

Պետք է ասել, որ այս հարցի ստույգ պատասխանը, հատկապես թվական կազմի մասին, տակավին սպասում է հետագա ուսումնասիրության ու ճշգրտման: Պրոֆ. Աշոտ Հարությունյանը, վկայակոչելով Սիլիկյանի իր ձեռքի

տակ եղած նամակը, գրում է հետևյալը. «Փետրվարին Երևանում գտնվում էին.

1. Պարտիզականական գունդը՝ հրամանատար գնդապետ Պերեկրյուստով.

2. Պարտիզականական հեծյալ գունդը՝ հրամանատար փոխգնդապետ Կորոլկով.

3. Վանի 1-ին գունդը՝ հրամանատար Վլադապետ Յուլբաշև.

4. Վանի 2-րդ գունդը՝ հրամանատար գնդապետ Չախմախչև.

5. 2-րդ հեծյալ գունդը (Քանաքեռում)՝ հրամանատար գնդապետ Ջալիևով.

6. 6-րդ գունդը (Ղամարլու)՝ հրամանատար գնդապետ Դոլուխանով.

7. 4-րդ գունդը (Վաղարշապատ)՝ հրամանատար գնդապետ Հովսեփյանյ.

8. Հրետանային բրիգադը.

9. Կամավորական խմբեր (2):

Բացի դրանից, Վանից ու Խնուսից նահանջող որոշ ստորաբաժանումներ գալիս էին Երևանի կողմերը»¹²:

Ընդամին պատմաբանն ընդգծում է Հայկական կորպուսի դերն ու նշանակությունը: Արդեն հիշատակված Սերժ Աֆանասյանը, որի գիրքը ֆրանսերեն լույս է տեսել 1985 թ. մայիսին, իր տրամադրության տակ չունենալով Աշոտ Հարությունյանի 1984 թ. տպագրված գիրքը, գտնում է, որ «դժվար է հավաստի ասել, թե ինչ ուժեր կային Սիլիկյանի տրամադրության տակ Մարգարապատի ճակատամարտը սկսվելուց առաջ»: Նա միայն հիշատակում է գեներալ Նազարբեկյանի նամակում բերված տվյալները թուրքական ուժերի մասին, որոնք բաղկացած էին Քյապիմ բեյի Կովկասյան 36-րդ դիվիզիայի երեք հետևակային գնդերից, մեկ հրետանային գնդից, մեկ հեծելապորային գնդից, մեկ հարվածային գումարտակից և մեկ ճարտարագործական գումարտակից: Ընդամենը՝ 6 հազար կովոդ և 40 թնդանոթ և, բացի դրանից, 1500 քուրդ հեծյալներ և մահմեդական անկանոն հրոսակներ»¹³:

Ինչ վերաբերում է հայկական ուժե-

¹⁰ Տ. Կայարժ, նշվ. աշխ., էջ 20—21:

¹¹ Ս. Աֆանասյան, նշվ. աշխ., էջ 41:

¹² Տես Ս. Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 182—183:

¹³ Տես Ս. Աֆանասյան, նշվ. աշխ., էջ 37—38:

րին, որոնք Միլիկյանը կենտրոնացնում է էջմիածնի շրջանում, դրանք ընդգրկում էին 5-րդ և 6-րդ հետևակային գրնդերը, 3-րդ հրաձգային բրիգադը՝ կապմ-



Մովսես Միլիկյան, գեներալ-մայոր

ված Վանի 1-ին և 2-րդ գնդերից մնացած մարտիկներից, Մակուի մեկ գումարտակից, Իդգիբի մեկ հետևակային գնդից, մեկ հեծելավորային գնդից, պեյթունցի հեծյալների ջոկատից, գլխավոր շտաբի մի հատուկ բրիգադից, մեկ սահմանապահ վաշտից և Մակեդոնի, Մուրադի, Պանդուխտի ու Մեպուռի պարտիզանների մեկ գումարտակից: 4-րդ գնդի մի գումարտակ էլ մնում է Երևանում որպես պահեստի ուժ: Հրետանին՝ չորս մարտկոցով, դրվում է գեներալ Արարատովի հրամանատարության տակ: Ամբողջը միասին՝ 5500 պինվոր ու սպա և 18 թնդանոթ¹⁴:

¹⁴ Տես նույն տեղում, էջ 37:

Մայիսի 21-ին գեներալ Միլիկյանը հաղթարդում է գլխավոր շտաբ. «Ժամը 17-ին մոտ տեղի ունեցավ կռիվ Սարդարապատում և երկաթգծի մոտ: Մեր զորքերը ետ քաշվեցին Կարա Խիանլու — Բյորփալու — իերին Չեյվա գիծը»: Իսկ նույն օրը ուշ երեկոյան թուրքական 36-րդ կովկասյան դիվիզիան գրավում է Սարդարապատ գյուղն ու կայարանը և, շարունակելով իր հարձակումը, գրավում Վերին Խերիբեկլու գյուղը՝ առաջ շարժվելով դեպի Ղամշլու (այժմ՝ Եղեգնուտ) կիսակայարանը, Երևանից 20 կմ հեռավորության վրա: Սակայն կապիտան Խորեն Իգիթիսյանի մարտկոցը կեսօրին կրակ է բացում թուրքական զորքերի վրա՝ ստիպելով նրանց գամված մնալ տեղում:


Հատուկ հիշատակության է արժանի հիմնականում դարաբաղյիններից բաղկացած 5-րդ հետևակային գունդը՝ բացառիկ խիպախությամբ օժտված գրնդապետ Պողոս բեկ Փիրումյանի հրամանատարությամբ: Դա այն գունդն էր, որ Գարեգին Հովսեփյանը՝ ապագա անվանի գիտնականն ու Կիլիկիայի կաթողիկոսը, մկրտել էր «մահապարտներ» անունով: Հենց նրանք էին, որ, առջևից գնացող Գ. Հովսեփյանի ու Էրպրումի Չավեն արքեպիսկոպոսի օրինակով ոգևորված, մայիսի 22-ին հարձակվեցին թուրքերի վրա Ղամշլուի մատույցներում:

Այդ օրը հայկական զորամիավորումները հետապնդում են թուրքական զորքերին մինչև Սարդարապատ: Թշնամին ռազմի դաշտում թողնում է 500 սպանված ու վիրավոր և իր ամբողջ շարժակազմը: «Որոշ թուրք սպաներ, — գրքում է Ս. Աֆանասյանը, — ձեռքները վեր բարձրացրած գթություն էին հայցում՝ գոռալով, որ իրենք Թրակիայից են և մասնակցություն չեն ունեցել հայկական ջարդերին»¹⁵:

Մայիսի 22-ի երեկոյան 5-րդ հետևակային գնդի առաջապահ մարտիկները Վարդան Ջաղինյանի ու Միքայել Օհանջանյանի հրամանատարությամբ սպա-

¹⁵ Տես նույն տեղում, էջ 43:

ՇՃԵՄԱ ԵՐԱ
ՄՈՒԾ ԵՐԱԲԱՐՄԱՅԱԾՈՒՄԸ
27-Յ ՄԱՐ 1918 Դ.
ՊՈԼՈՐՄԵՆԻ ՏՐՈՒՄԸ ԿՆ 15 ՎԱՅԱՆՑ /



Ճամբարաւարտարտի սխեման. 1918 թ. մայիսի 27, կողմերի դիրքերը ժամը 15-ին (տեսնաստույտ թղթն)

տում են Սարդարապատ գյուղն ու կայարանը: Հինգ ժամվա ընթացքում թուրքական զորքերը նահանջում են 15—20 կմ, սակայն տեսնելով, որ հայերն իրենց չեն հետապնդում, ամրանում են Թուլլի Թափա և Ջիմնի Գիր բարձունքներում՝ Արաքս կայարանից հյուսիս-արևելք:

Առաջին հաջողությունը մեծ խանդավառություն առաջ բերեց: Ամենայն հայոց կաթողիկոսը Էջմիածնի մայր տաճարում հանդիսավոր պատարագ է մատուցում, դրոշանջում են վանգերը: Սակայն վերջնական հաղթանակ տոնելը դեռ վաղ էր. Երևանի վրա հյուսիսից հարձակման վտանգը չէր վերացել, ուստի գեներալ Միլիկյանը մայիսի 24-ին դիմում է ժողովրդին մի կոչով, որտեղ, մասնավորապես, ասված էր.

«Հայեր, շտապեցեք ապստաղբելու ձեր հայրենիքը: Հասել է ժամը, երբ ամեն մի գիտակից հայ պետք է իր բոլոր ջանքերը գործադրի հարվածելու համար թշնամուն, որն ուզում է մեզ խաբառ բռնաջնջել մեր հողում: Եթե մենք պետք է բնաջնջվենք, ավելի լավ չէ՝ մենք մեզ պաշտպանենք զենքը ձեռքներին: Վերջին մարտերը ցույց տվեցին, որ մենք կարող ենք մեզ պաշտպանել թվական գերակշռություն ունեցող թշնամու դեմ, թշնամու, որը նահանջեց մեր հերոսական զորքերի հարվածների տակ:

Հայեր:

Բոլորը մինչև 50 տարեկան պետք է զենք վերցնեն հայրենիքը պաշտպանելու համար:

Հայեր:

Հիշեցեք Ավարայրի խիպախ կանանց, որոնք քաջալերում էին տղամարդկանց՝ Վարդանի գլխավորությամբ մղվող կռվում: Հետևեցեք նրանց օրինակին, եթե ուզում եք բարձր պահել ձեր պատիվը: Արհամարհեք վախկոտներին, որոնք տարբեր պատրվակներով խուսափում են ճակատ մեկնելուց: Ես խորապես համոզված եմ, որ իմ կոչը լսելի կը դառնա և 2-3 օրում մենք ոտքի կհանենք հերոսական մի ուժ, որն ընդունակ կլինի թշնամուն դուրս քշելու մեր երկ-

րից և ապահովելու հայ ժողովրդի գոյությունը»¹⁶:

Նույն օրը՝ մայիսի 24-ին, թուրքերն իջնում են դաշտի վրա իջտող բարձունքներից՝ լի վճռականությամբ՝ վրեժ լուծելու երեք օր առաջ կրած պարտության համար:

Մայիսի 24—26-ը ծավալված կատաղի կռիվները, որոնք պատկերացին հայկական զորամասերի վճռական հաղթանակով, նկարագրվել են ճակատամարտի անմիջական մասնակիցների կողմից: Մեծ բերենք մի հատված մարշալ Հ. Բաղրամյանի գնահատականից: Անդրադատարանով մայիսի 24-ին թուրքական զորքերի ձեռնարկած հարձակմանը՝ նա գրում է. «Ըստ էության այդ բարձունքները թուրքերի պաշտպանության դիրք-բանալին էին, որոնց անկումով նրանք գործնականում զրկվում էին ընդհուպ մինչև Արաքսը գրաված դիրքերն իրենց ձեռքում պահելու հնարավորությունից»¹⁷:

Այնուհանդերձ հայերին չի հաջողվում դուրս մղել թուրքերին իրենց դիրքերից, և գեներալ Միլիկյանը որոշում է շրջանցել նրանց՝ հարվածելով թիկունքից: Այդ պորաշարժը գնդապետ Կարո Ղասաբբաշյանի հրամանատարությամբ ստիպում է թուրքերին լքելու դիրքերը և փախուստի դիմելու Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Այդ հաջողությունից ոգեվորված՝ Դանիել բեկ Փիրումյանը Իգդիրի գնդին ու պարտիզանական ջոկատին հրամայում է գրոհել հակառակորդի վրա Ջիմնի Գիրում, ինչն ստիպում է թուրքերին դիմելու փախուստի: Թուրքական 36-րդ դիվիզիայի և քրդական հեծյալների մնացորդները անցնում են Արաքսի ու Արփաչայի աջ ափերը:

Մայիսի 26-ին ձեռք բերված վճռական հաղթանակից հետո գեներալ Միլիկյանն ու գնդապետ Վեքիլովը այն կարծիքին էին, որ պետք է շարունակել հետապնդումը և ապստաղբել Ալեքսանդրապոլը: Մայիսի 29-ին Միլիկյանը դիմում է ժողովրդին երկրորդ կոչով.

¹⁶ Տես նույն տեղում, էջ 45—46:

¹⁷ И. Х. Баграмян. Мои воспоминания. Е., 1979, с. 83—84.

«Հայեր»:

Մենք պետք է թուրքերից ետ վերջնենք Ալեքսանդրապոլը: Նրանք պահանջում են Մխարալարքի, Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի (մայր տաճարի հետ) գավառները, Երևանի նահանգի մեծ մասը և Նախիջևանը: Կարո՞ղ ենք թույլ տալ նրան վերավորանք: Երբե՞ք: Պետք է նրանց ձեռքից խլել Ալեքսանդրապոլը»¹⁸:

Գնդապետ Դանիել բեկ Փիրումյանը իր հերթին կազմել էր թուրքերին հետապնդելու պլան. անցնել Արփաշայր Գեներալուտում՝ շրջանցելով Ալեքսանդրապոլը¹⁹:

Պետք է նշել, որ այս հարցում տարբեր կարծիքներ կային ինչպես ժամանակի զորահրամանատարների ու հայ քաղաքական գործիչների, այնպես էլ անցյալի ու ներկայի հայ պատմաբանների շրջանում:

Այսպես, 1918 թ. մայիսի 30-ին Երևան գաղով, հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ Նավարբեկյանը կտրուկ կերպով հանդես է գալիս Ալեքսանդրապոլը գրավելու դեմ և արգելում է առաջարկված ռազմական օպերացիայի ձեռնարկումը՝ բավարարվելով աչքի ընկած կռվողներին պարզեվատրելով: Դանիել բեկ Փիրումյանը հայտարարում է. «Ես չեմ կարող իմ հաղթական վիճվորներին հայտնել այդ կործանարար հրամանի մասին և նրանց ստիպել նահանջել այն հողից, որը նրանք նվաճել են իրենց արյան գնով: Նահանջը նրանց լրիվ կբարոյալքի: Գընացեք ինքներդ կատարեք այդ նողկալի գործը»²⁰:

Հարցը ուսումնասիրած պատմաբաններից ոմանք, ընդունելով հանդերձ, որ Մյուխլյանի ու Վեքիլովի նախագծած օպերացիան մեծ վտանգ էր պարունակում՝ Երևանն անպաշտպան թողնելու իմաստով, այնուհանդերձ գտնում են, որ այդ պահին չափազանց կարևոր էր պահպանել վիճվորների մարտական ոգին: Մյուսները հիշատա-

կում են գեներալ Նավարբեկյանի ծեռությունը, անվճռականությունը, թեկուզ եղածը պահպանելու ձգտումը և այլն:

Բոլոր դեպքերում անվիճելի է, որ



Դանիել բեկ Փիրումյան, գնդապետ

Սարդարապատի հաղթանակը ոգևորեց Բաշ-Սպարանի պաշտպաններին և նրպատեց նրանց հաղթանակին թուրքական գերակշռող ուժերի դեմ²¹:

²¹ Պետք է ասել, որ Սարդարապատի ճակատամարտում կողմերի կրած կորուստների վերաբերյալ այսօր էլ դեռ չկան ստույգ տվյալներ: Թուրք հեղինակները, որպես կանոն, շրջանցում են կամ ուղղակի լուրջյան են մատնում այն դեպքերը, որոնք առնչվում են թուրքերի, թուրքական բանակի կրած պարտությունների կամ նահանջների հետ: Գեներալ Մ. Վեհիբ փաշայի խոստովանությունը՝ «Սարդարապատում մենք ջախջախվեցինք», լուրջ կակի մի փաստ է: Ինչ վերաբերում է հայ հետազոտողներին, պրոֆ. Ա. Մնացականյանն, օրինակ, այն կարծիքն է հայտնել, որ հայերի կորուստների թիվը 1800 էր, իսկ թուրքերինը՝ 3000: Իսկ Ա. Հարությունյանի բերած տվյալները վերաբերում են Ղարաբաղի հայի ճակատամարտին: Այս թվերը վկայակոչելով՝ Ս. Աֆանասյանը միաժամանակ նշում է, որ թուրքերը թաքցնում էին իրենց իրական կորուստները (այս մասին ավելի մանրամասն տես «Սովետական Հայաստան» ամսագիր, 1968, հմ. 5):

¹⁸ Տես Ս. Աֆանասյան, նշվ. աշխ., էջ 55:

¹⁹ Տես նույն տեղում, էջ 96:

²⁰ Տես նույն տեղում, էջ 55:

Մենք բաժանում ենք Ս. Աֆանասյանի, Ա. Հարությունյանի, Բ. Ուլուբաբյանի, Ռ. Հովհաննիսյանի գնահատականները. ռազմական հաջողությունները չուղեկցվեցին համապատասխան դիվանագիտական քայլերով, ամեն գնով թուրքերի հետ հաշտություն կնքելու քաղաքականությունն ի վերջո հանգեցրեց դիվանագիտական պիշումների ու տարածքային ծանր կորուստների. «Այն, ինչ ետ էր վերցվել թուրքերից արյան գնով, վերադարձվել էր նրանց Բաթումի թանաքով»²², ինչը բարոյաբեկ հայկական բանակը, սասանեց իրենց սեփական ուժերով հայրենի հողը պաշտպանելու ծայր առած հավատն ու վճռականությունը:

Բանն այն է, որ, ի տարբերություն Վանի ու Մուսա լեռան հերոսամարտերի, որտեղ բնաջնջման սպառնալիքը վերացվեց մի դեպքում ռուսական զորքերի, իսկ մյուս դեպքում ֆրանսիական հաժանավերի օգնությամբ, բացի դրանից այստեղ հայերը ռազմական հաջողության հասան շնորհիվ ինքնապաշտպանական ոչ կանոնավոր ջոկատների արիության, Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հաղթանակները, ինչպես և Ղարաքիլիսայի հերոսամարտը արդյունք էին հայկական կանոնավոր զորամասերի խելամիտ կերպով պլանավորված և իրականացված ռազմական գործողությունների: Դրանք վկայեցին, որ հայերը կարող են դասվել լավագույն կովոդների շարքը, ինչպես հետագայում խոստովանել էր գոռոպամիտ Վեհիբ փաշան, և ստիպեցին թուրքերին հաշվի նստել հայերի հետ: Վեհիբ փաշան, անշուշտ, տեղյակ էր հայկական ուժերի տարած հաղթանակներին՝ «մեծահոգաբար» համաձայնելով «վիջել» հայերին 1.200 ք. կմ լրացուցիչ տարածք²³:

Բաթումի կոնֆերանսում հայկական պատվիրակության և նրա ղեկավար Ա. Խատիսյանի համաձայնողական-պարտավորական դիրքորոշման մասին առավել

հստակ ու աներկիմաստ գրել է Վորավար Անդրանիկը. «Վեց հարյուր տարվա ստրկությունից հետո դուք նորից թուրքերի թակարդն ընկաք: Ես չեմ կարող հանդուրժել այս վիճակը և ոչ էլ մոռանալ այս վերջին երեսուն տարում ընկած իմ վիճվորներին, ոչ էլ մեկ միլիոն ևս հատակներին»²⁴:

Բերված կարծիքներն ու գնահատականները գաղիս են հիշեցնելու, որ Հայաստանի առաջին հանրապետության հռչակմանը նախորդած դեպքերի, ինչպես և բուն հանրապետության կարճատև պատմությունը հարկ է նորովի ուսումնասիրել և շարադրել անկողմակալ, պատմության քննությունը բռնած փաստերի, վկայությունների, վավերագրերի հիման վրա և, որ ամենակարևորն է՝ ոչ թե կուսակցական կամ գաղափարախոսական, այլ պատմականության դիրքերից:

Ո՞րն է Սարդարապատի հերոսամարտի խոհուրդը:

Խոսելով Սարդարապատի հերոսամարտի մասին՝ մեր կարծիքով, ամենից առաջ պետք է առանձնացնել այն փաստը, որ այդ ճակատամարտին մասնակցում էին և՛ արևելահայերը, և՛ արևմուտահայերը, հայ ազգն ամբողջությամբ վերցրած, միասնական կամքով, հայրենիքի մի վերջին կտորը թշնամուհ չտալու վճռականությամբ, հայ ազգն իր հասարակ մարդկանցով, իր վիճվորներով, իր մտավորականությամբ, իր հոգևոր առաջնորդներով:

Պետք է նշել և այն հանգամանքը, որ մահու և կենսաց այդ կովի մասնակիցների համար կուսակցական պատկանելությունն ու ազգությունը կարևոր նշանակություն չունեին: Կողք կողքի կովում էին ռուսական կովկասյան բանակի զենեքալներն ու սպաները՝ Մովսես Սիլիկյանն ու Դանիել բեկ Փիրում-

²² Տես *Ս. Աֆանասյան*, նշվ. աշխ., էջ 70:

²³ Տես *R. Hovannisian. Armenia on the Road to Independence, 1918. Berkeley—Los Angeles—London, 1967, p. 196.*

²⁴ Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 12: Գեներալ Նապարեկյանը հունիսի 4-ին իր օրագրում նշել է, որ Անդրանիկը 1918 թ. խայտառակ պայմանագրի ստորագրման պատճառով հեռանում է ճակատից (տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, հմ. 3, էջ 146):

յանը, Պողոս բեկ Փիրումյանն ու Կարո Ղասաբբաշյանը, Վասիլի Պերեկրյոստովն ու Սակիլարին, Գարեգին Հովսեփյանն ու Էրպրումի Չավեն արքեպիսկոպոսը: Առանձնահատուկ դեր խաղաց Վանի հերոսամարտի ղեկավարներից մեկը՝ դաշնակցության հայտնի գործիչ Արամ Մանուկյանը:

Սարգարապատը որպես երևույթ պարտավորեցնում է Հայաստանի նոր՝ երրորդ, հանրապետության բոլոր քաղաքացիներին, երիտասարդ սերնդին հատկապես, քաջ գիտակցել, որ մի ժողովուրդ, որը ձգտում է ապաստության, ինքնուրույն կյանքի և, ի վերջո, անկախ գոյատևման ու վարգաքման, ամենից առաջ պետք է կարողանա պաշտպանել իրեն, իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ իր մարտունակ և ժամանակակից մակարդակով կազմակերպված պրոֆեսիոնալ բանակը:

Հայրենիքի, հարապատ հողի հանդեպ տածած սերը պիտի դրսևորվի անձնագոհության, հայրենիքը հնարավոր հարձակումից պաշտպանելու պատրաստակամության ձևով:

Սարգարապատի հերոսամարտում ձեռք բերված հաղթանակը հավաստում է, թե որքան կարևոր է ռազմական պատրաստականությունը՝ չուզակցված անձնական քաջության ու հայրենասիրական ոգու մշտական առկայության հետ:

Այսօր անհեթեթ են հնչում առանձին պատմաբանների փաստագրերի այն պնդումները, թե իբր Սարգարապատում հաղթանակ տարան բաի ու եղանով վիճված գյուղացիները, այլ ոչ թե ռուսական ռազմական արվեստի դրպրոցն անցած հայ զորահրամանատարների հմուտ ղեկավարությամբ կոմոդ հայկական նորաստեղծ բանակը:

Մոտ 80 տարի տարի է մեկ բաժանում Սարգարապատի հիշարժան օրերից, սակայն մեր պատմաբանները դեռ պարտք են ընթերցողին: Չկան ծանրակշիռ, բազմակողմանի, հավաստի աղբյուրների հիման վրա գրված մենագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ: Սարգարապատի հերոսները սպասում են իրենց ճանաչմանը, իրենց սիրանքի արդարացի գնահատականին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները: Երևան, 1984:
2. *Աֆանասյան Սերժ*, Սարգարապատի հաղթանակը. Հայաստան, 1918 թ. մայիսի 21—29): Ֆրանսերենից թարգմանությունը և վերջաբանը՝ Ռուբեն Սահակյանի: Երևան, 1991:
3. *Саркисян Е. К.* Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Е., 1962.
4. *Арутюнян А. О.* Кавказский фронт в 1914—1917 гг. Е., 1971.
5. *Аветисян Грант*. Брест-Литовск. Е., 1994.
6. *Hovannisian Richard.* Armenia on the Road to Independence, 1918. Berkeley—Los Angeles—London, 1967.
7. *Kayaloff Jacques.* The Battle of Sardarabad. La Haye—Paris, 1973.
8. *Walker Christopher.* Armenia. The Survival of a Nation. London, 1980.
9. *Afanasyan Serge.* L'Arménie, l'Azerbaïdjan et la Géorgie de l'indépendance à l'instauration du pouvoir soviétique 1917—1923. Paris, 1981.
10. *Afanasyan S.* La victoire de Sardarabad. Arménie, 21—29 mai 1918. Paris, 1985.
11. *Korganoff Gabriel, gén.* La participation des Arméniens sur le front du Caucase après la défaite de l'armée russe (1914—1918). Paris, 1927.
12. «Армянский корпус против турецких войск (ноябрь 1917—июнь 1918 гг.). Воспоминания генерала Ф. И. Назарбекова». «Բանբեր Հայաստանի արխիվներ», հվ.3, 1992:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆՆ
ՊԱՏՄԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ
ԼՈՒՅՍԻՆ ՏԱԿ

Ա. Հ. ԳԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ, գեներալ-լեյտենանտ, իրավաբանության դոկտոր

Սիրիական բանակի գեներալ-լեյտենանտ իրավաբան Արամ Հակոբյի Գարամանուկյանը ծնվել է 1910 թ. Այնթապում: 1915 թ. Մեծ եղեռնից հետո հաստատվել է Հայկում: 1934 թ. ավարտել է Ֆրանսիական բանակի սիրիական գնդերի համար սպաներ պատրաստող՝ Դամասկոսի պինվորական դպրոցի հրետանային բաժինը, այնուհետև կատարելագործվել է Փարիզում: 1948 թ. եղել է սիրիական բանակի հրետանային գնդի հրամանատար, 1949 թվականից՝ սիրիական բանակի հրետանու ընդհանուր հրրամանատար: 1972 թ. Փարիզում պաշտպանել է «ատենախոսություն»՝ ստանալով իրավաբանության դոկտորի գիտական աստիճան: Ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում:



Ա. Գարամանուկյանի հիշյալ ատենախոսության մի գլուխը իրապարակվել է Բեյրութի «Հայկական հայագիտական հանդեսի» 5-րդ հատորում (1974 թ.) «Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ և վավերագրեր» վերնագրով: Մենք արտատպում ենք այդ հոդվածը՝ կրճատելով վերջին երկու բաժինը (արխիվային վավերագրերի վերաբերյալ): Հոդվածի ընկալումը դուրսացնելու նկատառումով այն ներկայացվում է նոր ուղղագրությամբ, իսկ տողատակի ծանոթագրություններով (աստղանիշով) տրվում են բացատրություններ արևմտահայերենի որոշ բառերի ու արտահայտությունների մասին:

Այս հոդվածն անշուշտ ավելի կխորացնի հանդեսի նախորդ համարում Հայկական լեգեոնի վերաբերյալ իրապարակված հոդվածից մեր ընթերցողների կազմած պատկերացումն այդ լեգեոնի մասին, նրանց հայտնի կդառնան նաև որոշ ռազմագիտական տեղեկանքի արևմտահայերեն համարժեքները:

ՀԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

1972 թ. հունիսին Փարիզի իրավագիտության, տնտեսագիտության և ընկերային գիտություններու համալսարանի մեջ պաշտպանեցի իրավագիտության դոկտորի թեկ մը: Ավարտաճառիս նյութն էր «Օտարականները և պինվորական ծառայությունը», այսինքն՝ ուսումնասիրած էի, միջպագային իրավունքի լույսին տակ, անհատի մը, կամավոր կամ ստիպողաբար, իր ազգային բանակին դուրս, օտար դրոշի տակ պինվորագրվելու հարցը: Ավարտաճառիս մեջ գրուի մը հատկացուցած էի Արևելյան (Հայկական) լեգեոնին: Գրությանս այս մասին պատրաստության համար օգտագործած էի, մասնավոր արտոնությամբ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարության և ֆրանսական բանակի պատմական սպասարկության ար-

խիվները: Թեպ իրավագիտական ըլլալուն ես հետաքրքրված էի Հայկական լեգեոնի վերաբերյալ վավերագրերին միայն անունյւմով, որոնք իրավական հանգամանք կներկայացնեն: Սակայն պրպտումներու ընթացքին նոթագրած էի նաև կարգ մը տեղեկություններ, որոնք թեև տեղ պիտի չբռնեն ավարտաճառիս մեջ, բայց կարևորություն ունենին, ըստ ինձի, լեգեոնի պատմության համար:

Իրավագիտության դոկտորի թեկ պաշտպանելու և ավարտաճառիս մեջ Հայկական լեգեոնին գրուի մը հատկացնելու ատենին* արձագանք գտան սփյուռքի հայ մամուլի մեջ: Եղան թերթեր, որոնք շեշտեցին կարևո-

* Ստեն—ժամանակ:

րությունը Հայկական լեգեոնի վերաբերյալ իմ ձեռք բերած վավերաթուղթերուն: Ասոր իբր հետևանք կարգ մը մտավորական բարեկամներ փափագ հայտնեցին, որ հանրության սեփականություն դարձնեմ այն տեղեկությունները, կորս քաղած էի ֆրանսական պետական թուղթերին և որոնք, թեպիս իրավագիտական հանգամանքին պատճառով, գրությունս մեջ տեղ չէին գտած:

Ընդառաջելով հայտնված փափագներուն և նկատի առնելով, որ իմ ձեռք ձգած տեղեկությունները կրնան օգտակար ըլլալ Կիլիկիո 1915—1921 թթ. շրջանի պատմությանը հետաքրքրվող մտավորականներու, ըստորև կուտամ, ինչ որ քաղեցի Ֆրանսայի արտաքին գործոց նախարարության և ֆրանսական բանակի պատմական սպասարկության արխիվներին:

Նախքան այդ պարտք կհամարեմ նշել հետևյալ կետերը:

— Իմ ներկայացնելիք տեղեկությունները չեն կազմեր վերոհիշյալ արխիվներու պարունակածին ամբողջությունը: Ինչպես վերը արտահայտվեցաւ, ես կփնտրեի իրավական բնույթ ներկայացնող և թեպիս հետ անմիջական կապ ունեցող վավերաթուղթեր, սակայն նոթագրած էի կարգ մը այլ կետեր: Կընդունիմ, որ թերևս հանցավոր եմ ավելի շատ տեղեկություններ քաղած չըլլալու: Արդարացումս այն է, որ չէի կրնար բավականաչափ ատեն հատկացնել թեպիս աշխատանքներու պատճառով և, երկրորդ, չէի կարծեր, որ իմ տեսած վավերաթուղթերը պիտի կրնային օգտագործվիլ ամբողջությամբ՝ նը-

կատի առնելով, որ Հայկական լեգեոնի մասին պատմական ուսումնասիրություն մ'ընելու միտք չունեի: Այսուհանդերձ իմ նոթագրած տեղեկությունները վավերաթուղթերու մեջ գտնվողներու կարևորագույններն են և կրնան բավականաչափ նյութ հայթայթել պատմաբաններու:

— Բոլոր վավերաթուղթերը բառ առ բառ չեմ ընդօրինակած, այլ գոհացած եմ անոնց պարունակության համառոտագրությունները նոթագրելով: Սակայն այն մասերը, որ կարևոր նկատած էի, առած եմ իրենց խկության մեջ. անոնք այս էջերու մեջ չափերսոված են:

— Այս գրությամբ ես նպատակ չունիմ Հայկական լեգեոնի պատմականը ընելու և կամ որևէ դիրքավորում ունենալու այդ գուղտի մասին մինչև հիմա եղած հրատարակություններու հանդեպ: Ես միմիայն պիտի նշեմ արխիվներին քաղած տեղեկություններս՝ պատմաբաններուն ձգելով անոնց խոհական օգտագործումը:

Այս գրությունը կբաղյանա երեք մասեր:

— *Առաջին մաս.* ավարտաճառիս Արևելյան, կամ Հայկական, լեգեոնի հատկացված գլուխին թարգմանությունը:

— *Երկրորդ մաս.* նորեն լեգեոնի մասին՝ քաղված Ֆրանսայի արտաքին գործոց նախարարության արխիվներին:

— *Երրորդ մաս.* նոթեր լեգեոնի մասին՝ քաղված ֆրանսական բանակի պատմական սպասարկության արխիվներին:

Ա. Գ.

Առաջին աշխարհամարտի (1914—1918 թթ.) ընթացքին ազգային բանակներու մեջ օտարներու կամավոր հանձնառությանը* տարածումը ստացավ հավաքական բնույթ միևնույն ազգի պատկանող օտարներն բաղկացած ամբողջական միավորներու կազմության պատճառով: Այս իրողությունը կբացատրվեր գերվարյալ ժողովուրդներուն՝ պատե-

* Հանձնառություն—համաձայնություն, պարտավորություն, նաև՝ համաձայնագիր, պարտավորագիր:

րավմին մասնակցելու փափագով՝ թըշնամի ճակատներու վրա այն պետության կողքին, որուն ակամա հպատակներն էին: Ժողովուրդներ, որոնք այդ ձևով, այսինքն՝ պիրենք ճնշող պետության պարտությամբ, կուզեին մոտեցնել իրենց՝ ազգային ապստաղության ժամը: Հիշենք ամենն ավելի ծանոթ պարագաները. լեհերը և չեխոսլովակները՝ Եվրոպայի մեջ, արաբները՝ Միջին Արև-

Բայց մենք կուզենք խոսիլ քիչ ծա-

նոթ պարագայի մը մասին, որ հետաքրքրական է սակայն մեկն ավելի պատճառներով: Խոսքը կվերաբերի Արևելյան լեզգոնին: Այս միավորին կազմությունն ու գոյությունը տեղի տվավ* իրավական խնդիրներու, որոնք կապ ունենին նաև քաղաքականության հետ: Սակայն իրողությունները հասկնալու համար անհրաժեշտ է հիշել կարգ մը պատմական դեպքեր:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1914 թ. նոյեմբերին Թուրքիա, կեդրոնական կայսրության կողքին, պատերազմի կմտներ դաշնակիցներու դեմ: Թուրք կառավարությունը, օգտվելով այն իրողությունեն, որ Եվրոպայի մեջ հանրային կարծիքը սրտաբաժ էր տեղի ունեցող պատերազմով, ուզեց իրագործել իր տիրապետության տակ ապրող հայերու ամբողջական բնաջնջման իր ծրագիրը: Դիվային ծրագիր մը, որուն մշակման իրենց մասնակցությունը բերին գերման խորհրդականներ, գործադրության դրվեցավ: Ավելի քան մեկուկես միլիոն հայեր ջարդվեցան Արևմտյան Հայաստանի մեջ, 1915—1918 թթ.¹: Հայերը իրենց տկար միջոցներով դիմադրեցին թուրք բաշխեցուկներուն և բանակին հոն, ուր կարելի էր, սակայն պարտվեցան գրեթե միշտ թուրքերու թվական գերազանցության հետևանքով: Հավազյուտ շրջաններեն մեկը, որուն բնակիչները փրկվեցան, եղավ Մուսա-դաղը, կամ Ջեբել-Մուսան:

Այս անունով կկոչվի, Ալեքսանդրեոսի ծոցին դիմաց, Հյուսիսային Սուրիո մեկ շրջանը, ուր հայ գյուղացիներ

կապրեին անհիշատակ ժամանակներն ի վեր²: Շուրջ հինգ հազարի հասնող այս լեռնյիները մեկուկես ամիս շարունակ կատաղորեն դիմադրեցին ջարդարաներուն³: Սակայն, իրենց վիսամթերքն ու պաշարը սպառելով, անոնք ալ պիտի ենթարկվեին իրենց հայրենակիցներուն ճակատագրին, երբ հրաշալի դիպվածով մը հաջողեցան կապ հաստատել ֆրանսական ռազմաավերու հետ, որոնք կշրջեին Ալեքսանդրեոսի ծոցին մեջ: Շնորհիվ Սուրիո նավաբաժինի հրամանատար ծովակալի վճռակամության և անոր նավազներու⁴ քաջության բոլոր վերապրողները նավ առնվեցան և փոխադրվեցան Պորտ-Սա իդ, Եգիպտոս, 1915 թ. սեպտեմբերին⁵: Բոլոր անոնք, որոնք վենք վերցնելու ընդունակ էին, երախտագիտությունն թե առած, ուզեցին վիսամթերքովի ֆրանսական բանակին մեջ՝ կռվելու համար թուրքերուն դեմ և պատագրելու իրենց օջախները: Ֆրանսական կառավարությունը տեղյակ պահվեցավ հայերու այս փառագին, և, սպասելով Փարիզի որոշումին, կամավորները ստացան իրենց նախնական վարժությունները ֆրանսացի նավազներու կողմն⁶:

Սակայն ֆրանսական դրոշի տակ հայ վիսամթերական միավորի մը կազմությունը ամբողջ տարի մը ուշացավ քաղաքական պատճառներով: Անգլիա, որ այն օրերուն ստանձնած էր Եգիպտոսի հոգատարությունը, ինքը կուզեր հայերը

² Ջեբել-Մուսան, որ Սուրիո մաս կկազմե, Թուրքիո փոխակազմեցավ 23 հունիսի 1939 թ. ֆրանկո-թուրք դաշնագրով: Ալեքսանդրեոսի սանջաքի փոխակազմը Թուրքիո, հոգատար** պետության կողման, օրինական չէր: Սուրիա չճանչցավ վայն:

** Հոգատար—հովանավոր:

³ Frantz Werfel. Les Quarante Jours de Moussa Dagh. Traduction française, Paris, 1934.

*** Նավազ—նավաստի:

⁴ Ծովակալ Դարոնիժ դը Ֆուրնե ուզեց աղետյալները Կիպրոս տանիլ, սակայն տեղվոյն անգլիական իշխանությունները ասոր հակառակեցան: Ծովակալը այս վերջինները կատարված իրողության առջև դրավ՝ հայերը ցամաք հանելով Պորտ-Սաիդ անուց արտոնություն ուզելու (տես Commandant Benoist d'Azy. L'Origine de la Légion d'Orient. Paris, 1939, p. 5):

⁵ Նույն տեղում, էջ 7:

* Տեղի տալ—տեղիք տալ:

¹ Համաշխարհային առջին պատերազմի ընթացքին թուրքերու կողմն հաղոց դեմ գործադրված ցեղասպանության մասին տես՝ J. Bricaud. L'Arménie qui Agonise. Paris, 1916; H. Gibbons. La Page la Plas Noire de l'Histoire Moderne. Paris, 1916; J. Lepsius. Rapports Secrets. Paris, 1920; J. de Morgan. Contre les barbares de l'Orient. Paris, 1918; H. Morgenthaw. Les Faits les Mus Horribles de l'Histoire, Paris, 1918.

մուծել Արևելքի իր բանակին մեջ: Սակայն հայերը կանգնեին ֆրանսական բանակին մեջ ծառայել: Խնդիրը լուծվեցավ միայն 1916 թ., երբ Ֆրանսա և Անգլիա, Ժորժ Պիկո—Մայքս համաձայնագրով, հասկացողության եկան* Միջին Արևելքի իրենց ապագա քաղաքականության մասին:

Անգլիացիներուն հետ համաձայնությունը մը գոյացավ հայկական կամավորական կորսվածքի մը կազմակերպության մասին: Ֆրանսական կառավարությունը յուրացուց Լոնդոնի թեխնիկությունը՝ «Կիպրոսի մեջ համախմբելու այն հայերը, որոնք կփախագնեին գործակցիլ, ֆրանսական դրոշի տակ, իրենց հայրենիքի ազատագրության»⁶: Բարձրաստիճան սպա մը որկվեցավ Պորտ-Սաիդ ուսումնասիրության համար: «Նոր տեղեկություններ ստացված ըլլալով, որոնք ցույց կուտային, թե սուրիացիներ ևս փախագ կհայտնեն կովելու թուրքերու դեմ», նույն սպան հրավիրվեցավ «ընդլայնելու իր ուսումնասիրությունը Եգիպտոսի, Ֆրանսայի և Ամերիկայի մեջ ապրող սուրիացիներու հավանական օգտագործման հարցին վրա»⁷:

Մինչ այդ հայ ազգային պատվիրակությունը գործը ձեռք առած էր այն բանակցությանց շրջագիծին մեջ, զոր կվարեր դաշնակցի պետությանց հետ հայկական հարցին շուրջ⁸: 27 հոկտեմբերի 1916 թ. ան նույն կամաձայնությունը մը կնքեց Կիլիկիո մասին Լոնդոնի մեջ, ուր Անգլիա և Ֆրանսա ներկայացված էին Մայքսի և Ժորժ Պիկոյի կողմն, երկու դիվանագետներ՝ հեղինակներ իրենց անունը կրող և Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ հռչակավոր դաշնագրին: Երկու պետությունները

կերաշխավորեին հայերու ինքնորոշման իրավունքը Կիլիկիո մեջ, որ պիտի դրվեր ֆրանսական հոգատարության տակ: Հայ ազգային պատվիրակությունը հանձնը կառնեք, Ասիո մեջ Թուրքիո դեմ կովելու համար, բոլոր հայ գաղութներն կամավորներ հայթայթել:

15 նոյեմբերի 1916 թ. նախարարական որոշումով ստեղծվեցավ կամավորներու գունդը: Որոշման առաջին հոդվածը կտրամադրեր** «Կիպրոսի մեջ պիտի ստեղծվի Արևելյան լեգեոն մը օսմանյան ծագումով կամավորներն, որոնք հանձն պիտի առնեն իբրև օժանդակ ծառայել ֆրանսական դրոշի տակ, պատերազմի ընթացքին, օգտագործվելու համար Ասիական Թուրքիո մեջ»⁹: «Արևելյան լեգեոն» անունը երվեցավ անոր ազգային պատվիրակության առաջարկով, խուսափելու համար թուրք կառավարության վրեժխնդրությունն Թուրքիո հայոց մնացորդացիին դեմ: Նույն պատճառով «հար» բառին փոխարեն գարծածվեցավ «օսմանյան ծագումով կամավորներ» արտահայտությունը:

Կամավորներու թիվը չէր ճշտված. նախարարական որոշման երկրորդ հոդվածը կնախատեսեր, որ «դասակներու թիվը համեմատական պիտի ըլլա ըստանձնված հանձնառությանց»:

Հայ կամավորները եկան ամեն կողմն: Շատ հասկնալի է, որ վենքի ընդունակ ջեբել-մուսայիները, որոնք բնակված էին Պորտ-Մայիդի մեջ, լեգեոնի կորիզը կազմեցին: Ամերիկահայ գաղութը շատ մեծ թիվով կամավորներ տվավ մինչև 2 ապրիլի 1917 թ., երբ Միսյալ Նահանգներ պատերազմի մեջ մտան, և արգիլվեցավ ամերիկահայերու կամավոր ծառայությունը Արևելյան լեգեոնին: Ուրիշ կամավորներ եկան Եգիպտոսեն, Ֆրանսայեն: Միջազգետքի և Միևայի ճակատներն անգլիացիներու կողմանն թրջական բանակեն առկված հայ ռազմագերիները ևս կամավոր արձանագրվեցան:

** Հոդվածը կտրամադրեր—հոդվածը սահմանում էր:

⁹ Նախարարական որոշում, 15 նոյեմբերի 1916 թ. (Ֆ. ք. պ. ս. ա., Levant, Carton I, L. O.):

* Համապատասխան գալ—փոխըմբռնման գալ:

⁶ «Տեղեկագիր պատերազմական նախարարին, թիվ 7549—9/11 և 14 նոյեմբերի 1916 թվակիր» (ֆրանսական բանակի պատերազմական սպասարկության արխիվներ (հետ այտու՝ ֆ. ք. պ. ս. ա.), Levant, Carton I, L. O.):

⁷ Նույն տեղում:

⁸ Այս պատվիրակությունը, որուն վստահված էր հայկական դատին պաշտպանությունը մեծ պետությանց մոտ, հաստատված էր ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմն 1914—1918 թթ. պատերազմի նախօրյակին:

Կազմված և մարզված Կիպրոսի մեջ՝ լեգեոնը Պաղեստինի ճակատը մեկնեցավ միայն 1918 թ.: Այս ուշացումին պատճառը մասնավորաբար անգլիացիներու ձգտումն էր, քաղաքական հետին մտքով, խուսափելու այս ճակատին վրա ֆրանսական զորքերու ներկայութենեն: Արևելյան լեգեոնը, կազմված իբրև արշավագունդ, 1918 թ. սեպտեմբերին փայտու մասնակցություն մը բերավ պորավար* Ալենքիի հարձակողականին¹⁰: Օգտագործելով ճակատին քայքայումը, սրարշավ, ան գրավեց Լիբանանը: 30 հոկտեմբերի 1918 թ., Թուրքիո հետ Մուդրոսի պինադադարի¹¹ ստորագրութենեն ետք, Արևելյան լեգեոնը, պորայված չորրորդ գումարտակով մը, որ տեղվույն վրա կազմվեցավ թուրք բանակեն գերի առնված հայ պինվորներն, ձեռնարկեց Կիլիկիո գրավման: 1918 թ. դեկտեմբերի վերջը այդ գրավումը ավարտած էր¹²:

Մինչ այդ հայ ազգային պատվիրակությունը, տրված ըլլալով որ*** օրվան քաղաքական կացությունը այլևս արգելք չէր, պահանջած էր, որ Արևելյան լեգեոնը առնեն Հայկական լեգեոն անունը: Արևելքի ֆրանսական քաղաքային և պինվորական իշխանությունները Փարիզի այս մասին հարցուցած խորհուրդին նպաստավոր կարծիք հայտնած էին:

* *Չորավար*—գնեերալ:

¹⁰ Արևելյան լեգեոնը գրավեց Արարայի կարևոր դիրքը Ռաֆաթի մոտ: Չորավար Ալենքի իր 20 սեպտեմբերի 1920 թվակիր օրակարգին** մեջ կհայտարարեն. «Արևելյան լեգեոնը, կամ Հայկական լեգեոնը, կարևոր բաժին մը ունեցավ 19 սեպտեմբերի 1918 թ. Պաղեստինի ճակատին վրա տեղի ունեցած մեծ ճակատամարտի ընթացքին: Ես ասով հպարտ եմ» (*Colonel L'Hospitalier. Historique des Anciens Combattants Arméniens, 1914—1918. Paris, 1956, p. 41*):

** *Օրակարգ*—գնեույյ:

¹¹ Մուդրոսի պինադադարի պայմանագրություն, 30 հոկտեմբերի 1918 (*Martens. Nouveau Recueil Général de Traités 3-e Série, t. 2, p. 159*):

¹² Արևելքի ֆրանսական պորագունդերու հրամանատար պորավարին թիվ 9018/3 և 28 դեկտեմբերի 1918 թվակիր տեղեկագիրը՝ ուղղված անգլիական 21-րդ պորամարմինի հրամանատարին, որին ենթակա էր (Ֆ. ք. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

*** *Տրված ըլլալով որ*—բանի որ:



Պորոս Կուրգոս փաշա
(1851—1930),
հայ ազգային
պատվիրակության ղեկավար

Այսպես, 1919 թ. սկիզբը Արևելյան լեգեոնը իրավականորեն երկու միավորներու վերածվեցավ. Հայկական լեգեոնը՝ չորս գումարտակներով և Սուրիական լեգեոնը՝ մեկ գումարտակով¹³: Այս բաժանումը իրականության մեջ արդեն եղած էր, քանի որ բոլոր հայ կամավորները Կիլիկիա դրկված էին, մինչ սուրիացիները պահված էին Լիբանան¹⁴: Այսպես կազմված երկու միավորները պահեցին Արևելյան լեգեոնի իրենց իրավական վիճակը: Հայկական լեգեոնը Կիլիկիո մեջ մասնակցեցավ ֆրանսական բանակին

¹³ «Պատերազմական նախարարին թիվ 546—9/11 և 18 հունվարի 1919 թվակիր ծանոթագիրը Արևելյան լեգեոնի կազմության և անոր Հայկական լեգեոնի և Սուրիական լեգեոնի բաժանման մասին» (Ֆ. ք. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

¹⁴ Արևելքի ֆրանսական պորախումբերու հրամանատար պորավարին թիվ 53/G և 12 հունվարի 1919 թվակիր հեռագիրը՝ ուղղված պատերազմական նախարարին, հետևյալ թվանշանները կուտա Արևելյան լեգեոնի միավորներուն համար. հայկական չորս գումարտակներ՝ 4124 պինվոր, սուրիական մեկ գումարտակ՝ 698 պինվոր (Ֆ. ք. պ. ս. ա., Levant, Corton 5, L. O.):

կողմն քննարկական զորքերու դեմ մղված կռիվներուն և լուծարքի ենթարկվեցաւ 1 սեպտեմբերի 1920 թ.: Իսկ Սուրիական լեգեոնը ավելի ուշ վերածվեցաւ «Արևելքի մասնավոր պորախուսներու»՝ բաղկացած սուրիացի և լիբանանցի կամավոր պինվորներե, որոնք ծառայեցին ֆրանսական դրոշի տակ և այս երկու երկիրներու անկախութենէն ետք հիմը կազմեցին անոնց ազգային բանակներուն:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԳԵՈՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԲԸ

Արևելյան լեգեոնի կազմությունը հարուցեց մեկն ավելի իրավական խընդիրներ, զորս հետաքրքրական է ուսումնասիրել:

Առաջին հերթին, միջազգային իրավունքի տեսակետեն, օրինակաւության հարցը կար այն մասին, թե Ֆրանսա կրնա՞ր ծառայության կոչել օտարներ՝ հպատակները պետության մը, որուն դեմ ինքը պատերազմի մեջ էր: Արտոնված էր նման քայլ մը: Կարելի է դրական պատասխան տալ: Ազգերը գործնականին մեջ միշտ ընդունած են, որ պատերազմի մեջ գտնվող պետություն մը իր բանակին մեջ առնէ թշնամի պետության հպատակները: Հեղափոխական կամ ապատագրական պատերազմներու ընթացքին թշնամի կողմի քաղաքացիները հաճախ պինվորագրվեցան հակառակորդներուն կողմն: Օրինակ՝ ֆրանսացի տարագիրներ, որոնք անգլիական բանակին մեջ ծառայեցին ֆրանսական հեղափոխության ընթացքին, և ավստրիահպատակ իտալացիներ՝ պիեմոնտական բանակին մեջ 1859 և 1866 թթ. պատերազմներու ընթացքին: Եվ միջազգային պայմանագրական իրավունքի մեջ ոչինչ կարգիլն նման արարք մը: Ճիշտ է, որ Լա Հեյի 18 հոկտեմբերի 1907 թ. չորրորդ պայմանագրության* հավելվածի 23-րդ հոդվածը վերջավորության կտրամադրեր**, որ «պատերազմող կողմին արգիլված է նույնպես թշնամի կողմին հալա-

տակները ստիպել մասնավորապես բերելու իրենց դեմ ուղղված պատերազմական գործողություններու, նույնիսկ այն պարագային, երբ անոնք իր պինվորական ծառայության մեջ գտնվեին պատերազմը սկսելին առաջ»: Սակայն կարելի է ուշադրության հանձնել, որ այս տրամադրությունը չէր վերաբերեր Արևելյան լեգեոնի պինվորներուն: Արդարև, լեգեոնականները դաշնակիցներու կողմն բռնադատված չէին կռվելու Թուրքիո դեմ. Արևելյան լեգեոնը բաղկացած էր հայերի և սուրիացիներե, որոնք կամավորաբար հանձն առած էին պատերազմիլ պիրենք ճնշողին դեմ: Մնաց որ*** Ֆրանսան չէր ծածկած ազգությունը անոնց, որոնք եկած էին պինվորագրվելու իր դրոշին տակ. նախարարական որոշումը հստակորեն նշած էր անոնց «օսմանյան ծագում» ու նենալու հանգամանքը: Եթե այս կամավորներուն ցեղին անունը տալիս խուսափած էին, այն միակ մտահոգության էր, որ անոնց հայրենակիցներուն խնայվի թրքական վրեժխնդրությունը:

Ընդհակառակը, Արևելյան լեգեոնի կազմությունը ֆրանսական ներքին իրավունքի տեսակետեն կետեր հարուցեց: Բանակի պինվորագրության 21 մարտի 1905 թ. օրենքը (հոդ. 3) միայն օտար լեգեոնին մեջ կթույլատրեր օտարներու ընդունումը և 5 տարվան շրջանի մը համար: 3 օգոստոսի 1914 թ. հրամանագրով կառավարությունը արտոնած էր օտարներու ընդունումը այս միավորին մեջ պատերազմին տևողության համար, սակայն, այնուհետև, 16 օգոստոսի 1915 թ. օրենքը նախատեսած էր. «Ներկա պատերազմի ամբողջ տևողության և ֆրանսական հողամասի ամբողջ տարածքին վրա արգիլված է ֆրանսական բանակին մեջ ընդունիլ, օտար լեգեոնի անունով, Ֆրանսայի կամ անոր դաշնակիցներուն հետ պատերազմի մեջ գտնվող պետությանց հպատակներ»¹⁵:

Այսպիսով, այս օրենսդրությունը

*** Մնաց որ—մանավանդ որ:

¹⁵ «16 օգոստոսի 1915 թ. օրենք» (Duvergier, Collection Complete des Lois, Décrets, Ordonnances, Nouvelle série, t. 15, p. 244):

* Պայմանագրություն—պայմանագիր:

** Հոդվածը վերջավորության կտրամադրեր—հոդվածի վերջում ավարտ էր:

արգելք մըն էր օտար լեզուներն մեջ հայերու և սուրիայիներու վիճակորացրոթյան, որովհետև, իբրև օսմանյան հայատակներ, դաշնակիցներուն հետ պատերազմի մեջ գտնվող պետության մը հայատակներն էին: 16 օգոստոսի 1915 թ. օրենքի լայն մեկնաբանությունը կթույլատրենր Պորտ-Սաիդի հայերու և Եգիպտոսի մեջ անգլիացիներու ապատագրած ռազմագերիներու վիճակորացրոթյունը, որովհետև տեղի կունենար ֆրանսական հողամասեն դուրս: Սակայն բոլոր անոնք, որոնք կգտնվեին Ֆրանսայի մեջ, և գլխավորաբար Ամերիկայեն ևկող հայերն ու սուրիայիները, որոնք լեզունականներու մեծամասնությունը կազմեցին և որոնց արձանագրությունը տեղի կունենար Սարսելի և Բորդոյի մեջ, իրենց ցամաք ելլելն էտք չէին կրնար վիճակորացրվիլ օտար լեզուներն: Կթվի, թե ֆրանսական կառավարությունը մտածած է շրջանցել օրինական արգելքը՝ հայերն ու սուրիայիները բանակի մեջ մուծելով իբրև օժանդակներ¹⁶:

Սակայն դժվար էր գիտնալ, թե այս բառը ինչ կնշանակեր: Ֆրանսական վիճակորական իրավունքը կանգիտանար օժանդակ վիճակորի վիճակեն բխող իրավական կայությունը, վիճակ մը, որ հասարակաց ոչինչ ուներ «օժանդակ ծառայությանց» սահմանված վիճակորի վիճակին հետ՝ իր ֆիզիկական անընդունակության պատճառով¹⁷: Այս բառին ընթացիկ իմաստը ևս մեկ չի լուսաբաներ: Լիտրեի համաձայն, օժանդակը, վիճակորական տեսակետեն, ան է, «որ կօգնե իր վեները»¹⁸: Այս բնորոշումին համաձայն, եթե պետք է պատերազմի մեջ

երկրորդական դեր մը վերագրել օժանդակին, ինչպես հաղորդակցությանց գիծերու և պահեստներու պահպանությունը, ահկա չի համապատասխաներ Արևելյան լեզուների վիճակորներուն իրավական կայության, որոնք վիճակորացրված էին պատերազմելու համար, ֆրանսական հետևակազորքի գումարտակի տիպով միավորներով կազմված էին և որոնք իրապես պատերազմ ըրին թուրքերուն դեմ Պաղեստինի ճակատին վրա և Կիլիկիո մեջ: Մյուս կողմ, լեզունականին ստորագրած հանձնառության ակտը կպարունակեր հետևյալ արտահայտությունը. «Ան հայտարարեց... թե կուզե վիճակորացրվիլ Արևելյան լեզուների մեջ պատերազմի տևողության, կռվելու համար Թուրքիո դեմ»¹⁹:

Գիտնալու համար, թե պատերազմական նախարարությունը ինչ կհասկնար «օժանդակ» ըսելով, պետք է ուսումնասիրել թիվ 7966—9/11 և նոյեմբեր 1916 թվակիր նախարարական հրահանգը, որով կճշտորոշվեին Արևելյան լեզուների կազմակերպության մանրամասնությունները, շատ ամփոփ կերպով կբնորոշվեր լեզունականի իրավավիճակը և կճշտվեին այն տարբեր հատկացումները, որոնց իրավունք ուներ ան: Բազմաթիվ սրբագրություններն ու հավելվածները, զորս կատարվեցան այդ հրահանգին մեջ, ցույց կուտան այն խնդիրները, որոնք հառաջ եկան ստեղծված դրության անորոշությունն և հաստատված տարականություններն:

Ինչ կվերաբերի վիճակորացրության, հակառակ լեզունականներու իրավական կայության տարտամության, ոչ մեկ դժվարություն ծագեցավ ուզված թվով կամավորներ արձանագրելու: Հայերը թենն անոց գոյացած դաշնագրի մը տրամադրությանց* համաձայն, երրորդ պետության մը կողման հայթայթված գունդերուն: Բայց որևէ բարդատություն կարելի չէ վերոհիշյալ գունդերու և օտար բանակի մը մեջ կամավոր կերպով ծառայող «օժանդակ» վիճակորներու միջև:

*Տրամադրություն և—դրույթ, պնդում:

¹⁹ «Նախարարական հրահանգ, թիվ 7966—9/11 և 26 նոյեմբերի 1916 թվակիր, Արևելյան լեզուների կազմակերպության մասին»: Հարակից մաս, թիվ 2 (Ֆ. ք. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O):

¹⁶ «Պատերազմական նախարարի 15 նոյեմբերի 1916 թվակիր որոշումը» (Ֆ. ք. պ. ս. ա., Levant, Carton 1, L. O):

¹⁷ Օժանդակ ծառայության մեջ վիճակորացրվիլ ֆրանսական բանակին մեջ անոցին անգամ հաստատվեցավ 27 հուլիսի 1872 թ. օրենքով: Այս դրության վերջ տրվեցավ 7 հունվարի 1959 թ. օրենքով:

¹⁸ Պատմաբաններ «օժանդակ գունդեր» բառերը կգործածեն, երբ կանկարկեն Հռոմի կողման իր կայսրության սահմաններուն մեջ վիճակորացրած գունդերուն: Իսկ իրավաբաններ նույնը կընեն կովող կողմերուն, պատերազմի հայտարարու-

անհամբեր էին օր առաջ կռվելու թուրքերուն՝ մեծ ցեղասպանության ընթացքին իրենց անմեղ ծնողներու ջարդարարներուն դեմ, այն ցեղասպանության, որ դեռ անպատիժ կմնա հակառակ դաշնակիցներու հայտարարության, թե պատասխանատու պիտի բռնեն, «մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիո գործած այս նոր ոճիւրներուն համար, օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաև անոր այն գործակալները, որոնք փաստորեն մասնակցած պիտի ըլլային նման ջարդերու»²⁰: Այսպես, ո՛չ կամավորները, ո՛չ հայ ապագային պատվիրակությունը նվազազույն ուշադրություն ըրին այն իրավական դրության, որուն ֆրանսական կառավարությունը կենթարկելը լեգեոնականները: Արևելյան լեգեոնի գոյության ամբողջ տևողության կամավորներ չչալկսեցան:

Չինվորագրության համար պահանջված պայմաններուն գալով՝ կբավեր օսմանյան հպատակ ըլլալ, բարի վարույս վկայական և ներկայացնել և ընդունակ ըլլալ ֆիզիկապես: Տարիքի սահման ճշտված չէր:

«Օժանդակի» իրավական կացութենեն բխող առաջին մեկ դժվարությունը երևան եկավ հրամանատարական իրավունքի կիրարկման մեջ: 26 նոյեմբերի 1916 թ. նախարարական հրահանգի հինգերորդ հատվածը կտրամադրեր, որ «անոնք (կամավորները), ինչ ալ ըլլա իրենց աստիճանը, համահավասար չեն ո՛չ ֆրանսական զինվորականներուն, ո՛չ ալ իբրև օտար ծառայող նույնաստիճան զինվորականներուն և իրենց հրամանատարությունը, հետևաբար, կրնան կիրարկել միայն օժանդակ լեգեոնականներուն վրա»: Նման տրամադրության մը գոյությունը անհավատարի կը

թվի: Ըստ կանոնադրության, լեգեոնականները կրնային բարձրանալ օժանդակ հարյուրապետի աստիճանին, ուրեմըն հրամանատար ըլլալ դասակի, որ իր շարքերուն մեջ կրնար ունենալ սպաներու, ենթասպաներու և մասնագետ զորքերու ֆրանսական անձնակազմ մը: Այսպես, կարելի էր գտնվիլ հետևյալ կացության առջև, որ զինվորականորեն անըմբռնելի է. միավորի մը հրամանատարը չէր կրնար հրաման տալ բաժնյակի իր պետին, ոչ ալ իր պահեստապետին, ոչ նաև իր երկրորդ կարգի հեռախոսի զինվորին*, և ապիպա՝ զորանոցի մեջ թե կռվի դաշտին վրա²¹: Հավանական է, որ երբ օժանդակ աստիճանավորներ հասան կամ անվանվեցան լեգեոնին, այս տարականոնության ծանր անպատեհությունները հստակորեն երևան եկան, որովհետև 1918 թ. մայիսին 26 նոյեմբերի 1916 թ. նախարարական հրահանգին վրա կատարված սրբագրություն մը հետևյալ ձևով բարեփոխեց օժանդակ զինվորականներուն կանոնադրության հրամանատարական իրավունքի վերաբերյալ մասը. «Ընչ ալ ըլլա իրենց աստիճանը, անոնք համահավասար են նույնաստիճան զինվորականներուն, որոնք իբրև օտար կծառայեն. հրամանատարության տեսակետեն անոնք կվայելեն ուրեմն ֆրանսական անձնակազմին հավասար նույն իրավունքներն ու առանձնաշնորհումները, այն վերապահությամբ, որ հավասար աստիճանի վրա հրամանատարությունը միշտ կպատկանի ֆրանսացի աստիճանավորին»²²:

* Հեռախոսի զինվոր—հեռախոսավար զինվոր:

²¹ Այս միջոցառումները ցեղային խտրության արդյունք չէին. արդարև Արևելյան լեգեոնի այն հայ զինվորները, որոնք առաջ օտար լեգեոնի մեջ զինվորագրված և հետո Արևելյան լեգեոն անցած էին, նույնպես չէին ենթարկվել «օժանդակ» անվան տակ ծառայող իրենց հայրենակիցներու հրամանին:

²² «Սրբագրություն թիվ 3431—9/11 և 13 մայիսի 1918 թվակիր, թիվ 7966—9/11 և 26 նոյեմբերի 1916 թվակիր նախարարական հրահանգին» (Ֆ. Բ. պ. ս. ա., Levant, Carton 1, L. O.):

(Շարունակությունը հաջորդ համարում)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

УРОКИ САРДАРАПАТА

Р. Г. СААКЯН, доктор исторических наук, профессор

РЕЗЮМЕ

Победа, одержанная армянскими войсками в Сардарапате над вторгшейся в Восточную Армению турецкой регулярной армией, является славной страницей новейшей истории армянского народа.

Для более полного осмысления значения этой победы в судьбах армянского народа необходимо четко представить обстановку, сложившуюся в Закавказье после октябрьского переворота в России. Одним из непосредственных последствий переворота было отделение этого региона от России — роковое событие для Армении, ставшее возможным в основном из-за предательской политики мусаватистского Азербайджана и меньшевистской Грузии. Таким образом, территории Западной Армении, освобожденные в 1915—1916 гг. от векового турецкого ига ценой крови русского солдата и армянского добровольца, вновь были отданы терпевшей поражение стороне — Турции. Последняя не замедлила воспользоваться благоприятной обстановкой для осуществления своей экспансионистской политики, одним из проявлений которой было стремление к полному уничтожению армян.

Многотысячная турецкая армия под командованием генерала Вехиба-паша захватила Карс, Александрополь и двинулась на Ереван. Положение было угрожающим. К этому времени в Ереване и близлежащих районах скопились сотни тысяч беженцев из Западной Армении, захваченной турками. Захват Еревана привел бы к ликвидации и Восточной Армении.

И тогда военное руководство Армянского корпуса совместно с политическими и религиозными руководителями армянского народа приняли решение дать сражение превосходящим силам турецкой регулярной армии. Это сражение произошло 21—29 мая 1918 г. в районе Сардарапата, недалеко от религиозного центра Армении — Эчмиадзина, и завершилось блестящей победой армян.

Отметим одну существенную особенность Сардарапатской битвы. В Ване и Муса-гаге угроза истребления была ликвидирована с помощью русских войск (Ван) и французских крейсеров (Муса-гаг), а армяне добились определенных военных успехов благодаря героическим действиям иррегулярных отрядов самообороны. Победа же под Сардарапатом (как и победа под Баш-Апараном и героическое сражение под Караглисом) была одержана регулярными войсковыми подразделениями Армянского корпуса. Эти битвы поставили армян в число лучших воинов в мире, как это позднее вынужден был признать и командующий турецкой армией Вехиб-паша. Они заставили турок в определенной мере считаться с армянами.

Французский историк Серж Афанасян, автор ценного научного труда «Победа Сардарапата. Армения, 21—29 мая 1918 г.», изданного в Париже на французском языке в 1985 г. и в Ереване на армянском в 1991 г., отмечает: «Сардарапат — это символ борьбы за честь и свободу, борьбы, которая требовала самоотречения и сверхчеловеческих жертв. Это было чудо, сотво-

րենное волею целого народа, решившего скорее умереть с оружием в руках на Араратской равнине, у стен Эчмиадзина, нежели позволить варварству завершить свое дело. Эта победа является неисчерпаемым источником вдохновения. Она доказывает, что в венах народа-мученика, как пятнадцать веков назад в Аварайре, все еще течет кровь героев, сотворивших звездные часы своей истории».

Характерно, что в Саргарапатском сражении участвовали выходцы почти из всех областей Армении, как Западной, так и Восточной. В этой судьбоносной битве бок о бок сражались крестьянские массы и горожане, офицеры русской кавказской армии Назарбекян, Силикян, Даниел-бек и Погос-бек Пирумяны, Араратян, Касаббашьян, Перекрестов, Корольков, Шнеур, Сакиллари и другие и партизанские отряды Македона, Пандухта, Сепуха. Душой и вдохновителями победы были известный политический деятель, один из руководителей героической обороны Вана Арам Манукян и шедший впереди войска Гарегин Овсепян, будущий католикос киликийских армян.

Говоря об уроках Саргарапата, особо следует подчеркнуть тот факт, что для участников этого сражения партийная и национальная принадлежность не играли никакой роли.

Истинная любовь к Отечеству проявляется в готовности к самопожертвованию, отдаче всех своих сил для его защиты от агрессии. Саргарапат наглядно показал, сколь важное значение имеют профессиональная военная подготовка в сочетании с личной храбростью, отвагой и стойкостью, патриотическим духом каждого защитника Родины. Сегодня нельзя повторять неаргументированные утверждения некоторых наших историков о том, что, якобы, победа в Саргарапате была одержана только «вилами и мотыгами крестьян», а не умелым руководством таких командиров, как Силикян, Даниел-бек Пирумян и другие талантливые военачальники, прошедшие русскую школу военного искусства. Уроки Саргарапата заставляют не забывать о том, что народ, стремящийся к свободе, к самостоятельной жизни и независимому существованию, прежде всего должен научиться защищать себя, и для этого ему необходимо иметь свою хорошо подготовленную современную армию.

Почти 80 лет отделяют нас от Саргарапатской битвы, однако по сей день наши историки в долгу перед читателем. Нет отдельных монографий, сборников документов, герои Саргарапата ждут еще своего признания, объективной оценки совершенного подвига. Существующие мнения и оценки со всей очевидностью показывают также, что события, предшествовавшие провозглашению первой Республики Армения, как и сама ее короткая история требуют новых исследований и непредвзятого осмысления на основе выдержавших испытание временем фактов, свидетельств и документов.

MILITARY HISTORY

LESSONS OF SARDARABAD

R. G. SAHAKIAN, *Doctor of History, Professor*

SUMMARY

The victory at Sardarabad of the Armenian Army over the Turkish regular army invading Eastern Armenia, is a glorious page of the modern history of the Armenian nation.

For a better understanding of the importance of this victory in the destiny of the Armenian people, it is necessary to know the situation in Transcaucasia after the October 1917 upheaval in Russia. The separation of this region from Russia—a crucially negative event for Armenia because of the treacherous policies of Moussavatist Azerbaijan and Menshevist Georgia—was one of the immediate consequence of this upheaval.

The territories of Western Armenia, liberated in 1915—1916 from the centuries-old Turkish yoke with the blood of Russian soldiers and Armenian volunteers, were once more returned to the defeated side: Turkey. The latter was quick to take advantage of favorable conditions to implement its policy of expansion. One of the expressions of this policy was the intent to annihilate all Armenians.

Thousands of troops of the Turkish Army under the command of General Vehib Pasha captured Kars, Alexandropol and advanced towards Yerevan. The situation was critical. By this time, thousands of refugees from Armenia's regions occupied by the Turks were crowded in Yerevan. The seizure of Yerevan would open the road to Baku for the Turks—the ultimate goal of their campaign.*

That is why the military leadership of the Armenian Corps, together with the political and religious leaders of the Armenian nation took the decision to give battle to the superior forces of the Turkish regular army. This battle took place in May 21—29, 1918 in the Sardarabad area, not far from the spiritual center of Armenia—Etchmiadzin. The battle ended with a brilliant victory for the Armenians.

*We may note a significant fact which shows the difference between the battle of Sardarabad and the heroic fighting in Van and Moussa Dagh (Mount Moses)**. The threat of annihilation for Armenians during the self-defense of Van and Moussa Dagh was eliminated by the arrival of Russian troops in Van and the French cruisers in the case of Moussa Dagh. The victories of Sardarabad, Bash Abaran*** and Karakilisa**** placed Armenians in the company of the best soldiers in the world. Vehib Pasha himself, the Commander-in-Chief of the Turkish Army, was later forced to admit it.*

The French historian, Serge Athanassian, authored a valuable scientific work: «The Victory of Sardarabad. Armenia, 21—29 of May 1918». This was published in Paris, in French, in 1985 and in Yerevan, in Armenian, in 1991. Dr. Athanassian noted that:

«Sardarabad is the symbol of a struggle for honor and freedom. A struggle which demanded self-sacrifice and super-human victims. It was a miracle, based on the will of a whole nation which decided sooner to die with weapons in hand in the Ararat Valley near the walls of Etchmiadzin, than allow barbarism to complete its business. This victory is an inexhaustible source of inspiration. It proves, that in the veins of a martyr-people, just as fifteen

* Present-day Gyumry, Armenia.

** Presently in Syria.

*** Present-day Aparan, Armenia.

**** Present-day Vanadzor, Armenia.

centuries ago in Avarair*, there still flows the blood of heroes which creates stellar moments of its history».

It is significant that Armenians by birth from all regions of Armenia took part in the battle of Sardarabad. Armenians from Western and Eastern Armenia as well as Armenians from different parts of Russia hurried to help.

In this fateful battle, urban and rural people fought side-by-side, as did officers of the Russian Caucasian Army Nazarbekian, Silikian, the brothers Daniel Bek Pirumian and Poghos Bek Pirumian, Araratian, Kassabashian, Perekrestov, Korolkov, Chnmour, Sakillari and others. One may note the active participation of the Makedon, Pandoukht and Sebouh guerrilla detachments.

*The soul and inspiration of this victory included such famous political leaders as the head of the heroic defense of Van, Aram Manoukian and, marching in front of the troops, Garegin Hovsepants, future Catholicos** of Cilician Armenians.*

It is necessary to underline the fact, that membership to a party or other such national identification did not play a role for the participants of this battle.

True love of country was displaying in the readiness for self-sacrifice and the exertion of all energy for the defense of the homeland from aggression. Sardarabad clearly demonstrated the important significance of professional military training combined with personal bravery. Courage, steadfastness, and patriotism all contributed to the defense of the Motherland. Today no one should repeat the unreasoned allegations of some Armenian historians who state that the victory in Sardarabad was gained only by means of peasants' pitch-forks and hoes and not through the skillful command of such officers as Silikian, Daniel Bek Pirumian and other talented military leaders who had been through the Russian school of military art. The lessons of Sardarabad force us not to forget that a Nation, craving for freedom and independence, should learn to defend itself. It is therefore necessary to have a well-trained, modern army.

About eighty years separate us from the battle of Sardarabad. but to this day, our historians have a debt to our readers. There are no monographs or collected documents on this topic. The heroes of the battle of Sardarabad wait for recognition and an objective evaluation of their exploit. Current opinions and evaluations clearly show that the events preceding the proclamation of the First Republic of Armenia, as well as its short history, require new researchers and an unprejudiced understanding of facts, evidence, and documents which have stood the test of time.

* Presently in Iran. Battle-grounds of Christian Armenian and Zoroastrian Persian forces (451 AD).

** Head of Armenian Church.

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ (ԱՅՂԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈՐՁԻԾ)

*Հ. Ս. ԲՈԹԱՆԶՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր,
նազմական գիտությունների ակադեմիայի (ք. Մոսկվա) իսկական անդամ*

Պատերազմը մարդկության պատմական ուղեկիցն է եղել, և յուրաքանչյուր նոր սերունդ ջանացել է, հանրագումարի բերելով նախորդ փորձը, դասեր քաղել անցյալից: Բոլոր մեծ պորավարների գործնական հաջողությունների գրավականը անցյալի դասերի յուրացումն է՝ ոչ միայն գործնական, այլ նաև տեսական գիտելիքների մակարդակով: Անհամեմատ քիչ ուշադրության է արժանացել հակառակորդի ժողովրդական վանգվածների վարքն ու բարքը որպես պատերազմի վրա ազդեցություն թողնող գործոն: Անշուշտ եղել են մեծ պորապետներ, որոնք վարպետորեն օգտվել են նվաճվող երկրի ազգաբնակչության առանձնահատկությունների մասին տեղեկությունից: Սակայն մինչև վերջերս ռազմական նպատակներով նման ուսումնասիրությունները չեն կրել գիտահետազոտական բնույթ:

Աֆղանստանի դեմ ԽՍՀՄ-ի «չհայտարարված պատերազմում» ազգաքաղաքական գործոնը ռազմաքաղաքագիտական հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ հատկապես Լ. Ի. Բրեժնևի վախճանից հետո, երբ քաղաքական ուժերի նոր հարաբերակցությունը հանգեցրեց հօգուտ ռազմական բախումից դուրս գալու ռազմավարության ընտրության: Համապատասխան փոփոխություններ կատարվեցին ռազմական քաղաքականության մեջ՝ հայեցակարգային և կիրառական մակարդակներում, փոփոխվեց նաև խորհրդատվական գործունեությունը՝ նրա բովանդակության մեջ վերլուծական բաժինների ինտենսիվ ներմուծմամբ: Քաղաքական ու հա-

կաքարոզչական ավանդական հակազդման հիմնահարցերի շարունակվող մշակումների հենքի վրա մի շարք մասնագետներ ներգրավվեցին ձևավորվող համաձայնահակամարտային ուղեգծի տեսական-մեթոդաբանական հիմքերի վերախմաստավորման գործում:

Հետզհետե պարզ դարձավ, որ աֆղանական հակամարտության ներքին և արտաքին քաղաքական կարգավորմանը անցնելու բարդությունները պակասակամ թխում են նրա մոդելի հիմնարար ձևախախտումից: Խորհրդային պորքերի մուտքն Աֆղանստան արդարացնելու, «ագրեսիա» և «պալթում» կարգի միջազգային-իրավական գնահատականները չեզոքացնելու նպատակով ժամանակին մշակվել էին «աֆղան ժողովրդի դեմ ինսուլտի» չհայտարարված պատերազմի» մեթոդաբանական հայեցակարգը և մոդելը: Այդ երևակայական մոդելը ԱԺՀ-ում խորհրդային պորքերի ներկայության արդարացմանն ու արտաքին ագրեսիայի հետմղմանն իր կողմնորոշվածությամբ քողարկում էր աֆղանական հակամարտության հիմնակառույցը: Դրանով իսկ երկար ժամանակով կասեցվել էր սեփական ներքին քաղաքական հիմքերի վրա հակամարտության դինամիկայի հնարավոր սցենարների համաձայնական ներուժի դրսևորումը:

Հակամարտության հիմքային մոդելի էության գիտական խմաստավորումը, նրա կառուցվածքի և դինամիկայի որոշումը մեթոդաբանական հիմք դարձան համաձայնական գիտափորձերի կատարման հնարավորության մա-

սին վարկածի քաղաքագիտական հիմնավորման համար: Այս գիտափորձերի նպատակն էր ճշտել և փորձարկման ենթարկել դեպի ազգային հաշտություն տանող ուղեգծի քաղաքական գործիքակազմը:

Տվյալ վարկածի տեսական միջուկը այն հայեցակարգն էր, ըստ որի միջազգայնացված (խորհրդային ներկայությամբ) պինված հակամարտությունը պետք է վերադառնար ընդդիմության և Աֆղանստանի պաշտոնական վարչակարգի միջև քաղաքացիական հակամարտության սկզբնական հունը¹: Ներազգային հակամարտության մասնակիցների՝ աֆղանների կողմից սկզբնապես ընտրված դերերի վերադարձումը հենց իրենց՝ աֆղաններին, հիմք դարձավ խորհրդային կործանող դուրսբերման ուղիների մասին չարոզվող, սակայն իրատեսական վարկածի համար:

Այսպիսով՝ հենվելով համամեթոդաբանական և ընդհանուր քաղաքական սահմանափակումների վրա, դիտարկվում էին այն լրացուցիչ կոնկրետ սահմանափակումները, որոնք «ռազմական դրության» վարչակարգի կողմից դրվում էին համաձայնական գիտափորձի մրջակման վրա՝ այդ վարչակարգի էությունից բխող բոլոր հանգամանքներով հանդերձ:

«Ճգնաժամային ազգաքաղաքականության» կողմից դրվող սահմանափակումները հիմնականում պայմանավորված էին հուսալի տեղեկությունների, համաձայնահակամարտային պրոքսիակայի սուբյեկտների և օբյեկտների

¹ «Աֆղան ժողովրդի դեմ չհայտարարված պատերազմի» մոդելում մարմնավորված հայեցակարգի քաղաքական-գաղափարախոսական ուղղվածությունը տարիներ շարունակ բացառում էր ընդդիմության ներկայացուցիչների իրավահավասար մասնակցությունը միջազգային բանակցություններում և պայմանագրերում: Աֆղանական ընդդիմության նման արհեստական չեզոքացումը բացառում էր այդ պայմանագրերի պահպանման պարտավորության ընդունումը նրա կողմից, քանի որ ընդդիմությունը չէր մասնակցում այդ պայմանագրերի կնքմանը: Փաստորեն այդպիսի մոտեցումը անուղղակիորեն խթանում էր պատերազմի շարունակումը:

րի ինքնարտահայտման միջավայրի հետ անմիջական շփումների խիստ սահմանափակվածությունը: Աֆղանական պատերազմի պայմաններում կոնկրետ ազգաքաղաքագիտության գործիքակազմից գործնականում բացառվում էին քաղաքական սոցիոլոգիայի մեթոդների կիրառմամբ կատարվող պանգվածային հետապոտությունները: Դրա հիմնական պատճառներն էին. երկրում ցանկացած ուղեվորության ժամանակ իրական վտանգ էր ստեղծվում հետապոտողի կյանքի համար², բնակչության մեծ մասն անզրագեւ էր, պանգվածային հարցումների համար պատրաստված կադրեր և համապատասխան ավանդույթներ չկային և այլն: Քանի որ բնակչությունը հարցապրույցները ընկալում էր որպես անձնական կյանքին միջամտություն, ուստի պանգվածային ուսումնասիրություններին արդյունքների իսկությունը անհնարին էր ստուգել քիչ թե շատ հուսալի կերպով:

Գիրառական ազգաքաղաքագիտության գործիքակազմում հատուկ տեղ էր գրավում իր բովանդակությամբ ու կառուցվածքով առավել բարդ մեթոդը՝ գիտափորձը՝ կապված վերլուծության արդյունքների մշտական գործնական ստուգման, ինչպես նաև ռազմաքաղաքական կառավարման պրակտիկայում դրանց ներդրման անհրաժեշտության հետ:

Աֆղանստանում շիհադի ռազմաքաղաքական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հետևանքով գիտափորձերը կարող էին անցկացվել միայն հետապոտվող օբյեկտների բնական ինքնարտահայտման դաշտային պայմաններում: «Կախյալ փոփոխականների» վրա ազդեցության վերահսկման նպատակով նախապես «անկախ փոփոխական» ընտրելու և գրանցման նախապատրաստելու հնարավորություն հիմ-

² Այն մասնագետները, որոնք 1982—1983 թթ. աշխատել են ԱժՀ-ում, ի հակադրություն աֆղանական պաշտոնական քարոզչության գնահատականների, գիտեն, որ անգամ ցեղակային ժամերին Աֆղանստանի տարածքի շուրջ 80 %-ը վերահսկվում էր պինված ընդդիմության կողմից:

նականում չէր լինում: Ոմստի հետապոտողները մեծ մասամբ գործում էին «բնական փորձի» աշխատակարգով, երբ ստիպված էին ուշադիր դիտարկել դրա օբյեկտները և սպասել մինչև համաձայնության-հակամարտության հետապոտվող գործընթացում հստակորեն արտահայտվի այն համաձայնական կամ հակամարտային տարրերի փոփոխությունը, որոնք կարող են հանդես գալ փաստորեն միջնորդավորված կերպով վերահսկվող անկախ փոփոխականի դերում:

Համաձայնական գիտափորձում՝ որպես հետապոտման և ուղղակի կամ միջնորդավորված կերպով վերահսկվող ազգաքաղաքականության օբյեկտներ դիտարկվում էին ռազմական և քաղաքական ռեալ իշխանության կառույցները, որոնք գոյություն ունեին ինչպես ԱԺՀ պաշտոնական հաստատություններում, այնպես էլ վիճված ընդդիմության ռազմաքաղաքական ստորաբաժանումների գործունեության ոլորտում: Ի դեպ, վերջիններս թեև ճանաչված չէին որպես օրինական իշխանության սուբյեկտներ, սակայն բավականաչափ ազդեցիկ էին:

Որպես անկախ համընդհանուր փոփոխականներ դիտվում էին օբյեկտների այն բնութագծերը, որոնք վկայում էին նրանց՝ վինադադարի և համագործակցության վիճակ մտնելու մասին (բանակցություններ բանակցությունների վարման մասին, տնտղիչ բանակցություններ, միջնորդական առաջարկությունների իրականացնելիության, անմիջական բանակցությունների մեջ մտնելու գլխավոր հատկանիշների քննարկում և համաձայնեցում, վինադադարի պայմանների վերահսկելիության, բանակցությունների և բուն վինադադարի վերաբրտադրման երաշխիքների պահպանում և այլն):

Տվյալ դեպքում գործող վիճված կազմավորումների վարքին ուղղակի միջամտության ուղղությամբ յուրահատուկ դաշտային գիտափորձ կատարելու խընդիր էր դրված: Գործն ավելի էր բարդացնում այն հանգամանքը, որ գի-

տափորձի օբյեկտը՝ ԱԺՀ-ում հակամարտության կողմերը, գերպայուն վերաբերմունք էին ցուցաբերում թեկուզ որոշ չափով ներգործիչ տարր պարունակող ցանկացած միջամտության նկատմամբ:

Այսպիսով՝ դաշտային գիտափորձը գործնականում բացառում էր իր ընթացքի վերահսկման անմիջական ձևերը և ենթադրում էր հետապոտական ու գործնական աշխատանք պատերազմող և բանակցող կողմ-հակընկերակիցների (կոնտրպարտնյորներին) ներխմբային և արտախմբային բնական ինքնարտահայտման պայմաններում: Գիտափորձի տվյալ ձևը հետապոտվող և կառավարվող օբյեկտների բնույթով մի այնպիսի հասարակական գործունեության բարդ համալիր էր, որը չէր սահմանափակվում միայն վիճված կազմավորումների ռազմաքաղաքական վարքի ոլորտով: Թեև խմբային վարքի կարգավորման հարցում արտաքնապես գերակշռում էին ռազմաքաղաքական գործունեությունը, այնուամենայնիվ այդ վարքն զգալի չափով պայմանավորված էր օբյեկտի սոցիոմշակութի և ազգամշակութի առանձնահատկություններով:

Հարկ է ուշադրություն դարձնել այդ գիտափորձի հետապոտական և գործնական կողմերի սերտ կապին: Ի դեպ, հետապոտական մասն առաջին հերթին ներառում էր օբյեկտների՝ ռազմական հակամարտության կողմերի վերաբերյալ տեղեկությունների հավաքում և վերլուծում, այդ թվում նաև գիտափորձի այնպիսի առարկայի մասին, ինչպես համաձայնական ու հակամարտային ներուժը:

Հետապոտման ընթացքում կիրառվում էին այն հետապոտական գործիքները, որոնք հնարավորություն էին տալիս բացահայտելու և նկարագրելու վիճված խմբավորումների սոցիալական, առաջին հերթին՝ ռազմաքաղաքական և ազգաքաղաքական վարքի որոշման գործունեություն մեխանիզմները:

Զինված ընդդիմության կազմավորումների ընդհանուր և առանձնահատուկ բնութագծերի, շահերի, նպատակ-

ների, ինչպես նաև նրանց համաձայնական կամ հակամարտային վարքի կարգավորման մեխանիզմների միջև պատճառահետևանքային կապի բացահայտման համար հիմնականում օգտագործվում էին այնպիսի գործիքներ, ինչպես փաստաթղթերի ուսումնասիրումը, արտաքին և ներառական դիտարկումները, փորձագիտական տեղեկությունների հավաքումը ու վերլուծումը, «բանակցությունների տեխնոլոգիաների» տարրերը:

Ուսումնական իրադրության յուրահատկությունը, ինչպես վերև արդեն նշվել է, կանխորոշում էր համաձայնական գիտափորձի օբյեկտի և առարկայի համակողմանի ուսումնասիրման հնարավորության սահմանափակությունը: ՈՒստի գիտական բնույթի փորձի ծրագրի մշակման մեջ ներգրավվում էին մի քանի գերատեսչությունների ու ծառայությունների վերլուծաբաններ, որոնք օգտվում էին տեղեկության հավաքման և մշակման տարբեր աղբյուրներից ու մեթոդներից: Տվյալ փուլում ուսումնասիրման օբյեկտներ էին ոչ միայն պետական հաստատություններն ու կազմակերպությունները (կուսակցություններ, շարժումներ և ռազմաքաղաքական կառավարման կառույցներ), այլև աֆղանական ավանդական հասարակության այնպիսի կարևոր տարրեր, ինչպես ցեղերը, տոհմերը, կլանները, դրանց առաջնորդները, հեղինակավոր կրոնական գործիչները:

Հետազոտվող օբյեկտների գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը կառուցվում էր աֆղանական և խորհրդային կողմերի վերլուծական ծառայությունների աղբյուրագիտական հիմքի վրա: Հիմնական ուշադրությունը դարձվում էր իսլամական ընդդիմադիր կուսակցությունների կենտրոնական մարմինների և տեղերում նրանց «իսլամական կոմիտեների» ծրագրերի, կանոնադրությունների, ուղղորդող փաստաթղթերի ու հրահանգների ռազմաքաղաքական և իրավաքաղաքական վերլուծությանը: Հետազոտական գիտափորձը ուղեկց-

վում էր նաև վիճված ընդդիմության և նրա արտասահմանյան դաշնակիցների մամուլի՝ որպես պաշտոնական գնահատականների և իրադարձությունների ուսումնասիրման լրացուցիչ աղբյուրի պնակական վերլուծությամբ:

Սոցիոլոգիական պնակվածային հարցումների անկախման բացարձակ անհնարինության հետևանքով պնակվածային տեղեկատվության միջոցների ուսումնասիրումը որոշ չափով լրացնում էր նաև աֆղանական հասարակությունում հասարակական կարծիքի արժանահավատ և ներկայացուցչական գնահատումների պակասը: Տվյալ հրապարակումների ուսումնասիրման ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում էր առաջնորդող հոդվածներին և հակամարտության կողմերի ռազմական ու քաղաքական գործունեության հետ կապված փաստերի վերաբերյալ տեղեկությանին հաղորդումներին: Հատուկ ուշադրության առարկա էր խորհրդային և աֆղանական հակաքաղաքական դիմակայելու, ինչպես նաև հոգուտ ցի-հադի ապագրանկչության հասարակական տրամադրվածությունն ստեղծելու նպատակ հետապնդող նյութերի ուսումնասիրումը: Տվյալ դեպքում հաշվի էր առնվում նաև այն փաստը, որ մոջահեդների մեծամասնության անգրագիտության պատճառով ընդդիմությունը հատուկ քարոզչական նյութերը դիմադրության լայն շրջաններին էր հասցնում իր ակտիվիստների կողմից կատարվող խմբակային ընթերցումների և մեկնությունների միջոցով³:

Գիտափորձի նախապատրաստման հետազոտական մասը ներառում էր աֆղանական ընդդիմության առավել հեղինակավոր առաջնորդների՝ Գուլբեդդին Հեքմաթիարի, Բուրիանուդդին Ռաբբանիի, Սեբբաթուլլա Մոջադադդիի և ուրիշ-

³ Տես Գ. Շ. Կոտանջյան. Краткая характеристика некоторых исламских контрреволюционных организаций и основных направлений их подрывной пропаганды. - Кабул, август 1982 г., - 13 с., նաև *Առլիկ*, Մոջահեդի բարոյահոգեբանական կողմնորոշումների հարյի շուրջ: «ՀԲ», 1996, հմ. 1:

ների մասին, կենսագրական բնույթի տեղեկությունների, նրանց աշխատությունների և ելույթների ուսումնասիրումը: Նման նյութերի համեմատական վերլուծությունը հնարավորություն էր տալիս ավելի ճշգրիտ որոշելու այդ գործիչների ռազմական և ազգաքաղաքական վարկանիշը, ազդեցության ոլորտներն ու ձևերը, ռազմական քաղաքականության մեջ նրանց առաջնորդական ռճի առանձնահատկությունները⁴:

Գիտափորձի նախապատրաստման վերլուծական մասում հատուկ տեղ էր վրադնչնում ընդդիմության ռադիոհաղորդումների ծրագրերի այն ընդհանրացված տեսությունների տեքստերի համեմատական ուսումնասիրությունը, որոնք մշակվում էին ԱժՀ պաշտոնական տեղեկատվական հաստատությունների հակաքարոզչական ծառայությունների կողմից: Լուծվում էր ընդդիմության քարոզչության նպատակների, փաստարկման, ձևերի և մեթոդների, ինչպես նաև ունկնդիրների համախմբի մասնագիտական և ազգամշակութային առանձնահատկությունների նույնականացման խնդիրը:

Չնայած ռազմաքաղաքական քարոզչության արտահայտչամիջոցների դուրանական կանոնակարգման ինտրյուսիային՝ աֆղանական վիճված հակամարտության ընթացքում ընդդիմությունը գունեղ պլակատներում, թռուցիկներում, բուկլետներում բավական լայնորեն օգտագործում էր կերպարվեստի, այդ թվում դուրանական բովանդակությամբ իսլամական այնքան հեղինակավոր գեղագրության ստեղծագործությունները, սրբավայրերի պատկերները, իսլամական ականավոր գոր-

ծիչների ու շահիդների (ջիհադում հավատի համար զոհված հերոսներ) դիմանկարները, հակառակորդների ծաղրանկարները և այլն: Համաձայնական գիտափորձի սցենարներ մշակողների կողմից այս և այլ տեսակի փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն էր տալիս պատկերացում կազմելու բնակչության բազմազան խմբերի վրա ընդդիմական կոնկրետ կազմակերպությունների կողմից հուլզագեղարվեստական ներգործման ձևավորված եղանակների և սրբական պատերազմում ցուցաբերվող ռազմաքաղաքական ակտիվության նմուշների և ստերեոտիպների մասին:

Նման ազգաքաղաքական և ռազմաքաղաքական վերլուծության էր ենթարկվում կողմերի գործունեությունն արտացոլող կինո-, տեսա- և ֆոտոփաստաթղթերի մշտապես համալրվող փանգվածը: Փաստերի արժանահավատության կամ աղճատվածության պարզումից հետո բովանդակային վերլուծման էին ենթարկվում այն տեսողական փաստաթղթերը, որոնք պատկերում էին ցեղային պատերազմի և «կադմերի» ազգաքաղաքական սահմաններում ջիհադի առանձնահատկությունները, ինչպես նաև հակամարտության կողմերի ռազմական հակամարդասիրական գործողությունները միմյանց դեմ:

Չայնագրական փաստաթղթերը վերլուծելիս բացահայտվում էին սովորաբար ձայնահղովակների վրա վերարտադրված տեքստերի բովանդակային (նպատակադրումը և փաստարկումը) և ազգալեզվական առանձնահատկությունները՝ կապված տեքստերի հեղինակների և ունկնդիրների լարանի հետ:

Փաստաթղթերի վերլուծությունը ուղեկցվում էր տեղեկատվական աղբյուրների արժանահավատության և հուսալիության ուսումնասիրմամբ: Հարկ էր լինում նաև մշտապես հաշվի առնել հետաքրքրող տեղեկությի աղբյուրների և այդ տեղեկությի կրողների քաղաքական-գաղափարախոսական նախա-

⁴ Shu Себкатулла *Моджагади*. Цели национального спасения Афганистана. -Б. м., 6. г.; «Коротко о жизни одного моджахеда: Биография С. Моджадади». -Изд. НФС Афганистана. -Б. г.; *Бурхануддин Раббани*. Мухаммад-первый воспитатель и учитель человечества. -Б. м., 6. г.; *Его же*. Обращение к народу Афганистана. -Б. м., 6. г.; *Гульбегдин Хекматияр*. Требования веры и ее защиты (текст выступления 28.08.1360 г. Хиджры в лагере N 2 ИГИА).

պաշարվածությունը, ինչպես նաև նրանց ապատեղեկատվական պաշտպանվածությունը: Հատկապես էական էր այն վիճակագրական տեղեկատրվության անհավաստիությունը, որն արտացոլում էր աֆղանական հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացի դինամիկան: Չուրկ լինելով պետական վիճակագրության ստորաբաժանումների ինչ-որ չափով լուրջ ցանցից և ավանդույթներից, իրենց պրակտիկայում ընդօրինակելով բյուրոկրատական հավելագրումների խորհրդային փորձը՝ ԱժՀ պետական մարմինները հաճախակի էին ապրիլյան հեղափոխության մտապածին վարգայման մասին տրվող տվյալներով մոլորության մեջ գցում վերլուծական խղմբերին: Իսկ դա, իր հերթին, սխալ եզրակացությունների տեղիք էր տալիս:

Աֆղանական հասարակության քաղաքական կտրուկ շերտավորման հետևանքով նկատելի դարձավ ռազմաքաղաքական և ազգաքաղաքական տեղեկությունի կրողների հակվածությունը դեպի գաղտնի կամ կեղծ-գաղտնապահական տեղեկությունների այսպես կոչված վերահսկվող, կամ պլանային, սորակորստի կազմակերպումը: Այդ միջոցներին դիմակայելու անհրաժեշտությունը, տվյալների ապատեղեկատվական բավայի պատման ուղղությամբ աշխատանքները լրացուցիչ ջանքեր էին պահանջում ուսումնասիրվող օբյեկտների ռեալ վիճակի պարզման ուղղությամբ:

Ընտրված մեթոդիկաների համակցումը հնարավորություն էր տալիս վերահսկելու իրադարձությունների համաձայնական վարգայման հիմքերի ընդունելի հուսալիությունը (վալիդությունը) և բավարար փաստարկվածությունը: Փաստաթղթերի բնագրաբնույթ լինելու և ընդհանրապես ազգաքաղաքական ու ռազմաքաղաքական տեղեկությունի հավաստիության հաստատմանն զգալի չափով նպաստում էր երկրագիտական և պատմալեզվաբանական պատրաստություն ունեցող խորհրդատու

մասնագետների, ինչպես նաև թարգմանիչների մասնագիտացված խմբի մասնակցությունը:

Քանի որ հետազոտվող հակամարտային շահերն ու հարաբերությունները պահանջում էին ծայրաստիճան նրբանկատություն, ապա ազգաքաղաքագիտական վերլուծության ժամանակ հարկ էր լինում մշտապես վերահսկելու ըստացվող տեղեկությունի հավաստիությունը: Դա հիմնականում իրականացվում էր լրացուցիչ վերլուծակիրառական մեթոդիկաների օգտագործմամբ, օրինակ՝ տարբեր ժամանակներում, ճշգնաժամի աստիճանով տարբեր իրավիճակներում միևնույն աղբյուրից ստացվող տեղեկությունների բովանդակությունների համեմատությամբ: Ի լրումն այս ամենի, անկախ աղբյուրների համեմատական վերլուծության մեթոդը հնարավորություն էր ընձեռում ազգաքաղաքական օբյեկտների համաձայնահամարտային ներուժի՝ վերլուծաբանների հետաքրքրող պարամետրների բաղդատման ճանապարհով ապահովելու ինչպես տեղեկությունի, այնպես էլ օբյեկտների նկարագրման տեսանկյունների բավարար բազմապատկություն: Հայտնի սահմանափակումները առաջին պլան էին մղում գիտափորձի հավաստիության ապահովման նաև այնպիսի մի յուրահատուկ հնար, ինչպիսին է տվյալների և դրանց վրա հիմնված եզրակացությունների համեմատումը ստանդարտների հետ: Տվյալ դեպքում որպես գիտափորձի օբյեկտի և առարկայի ընդհանուր գնահատականների և բնութագրերի ձևավորման ստանդարտներ ամենից հաճախ քըննրվում էին փորձագիտական և հրահանգային, ցավոք, ոչ միշտ հիմնավոր գնահատականներն ու կողմնորոշումները: Գիտափորձի մեթոդաբանական և ընդհանուր-տեսական ապահովումը կատարվում էր ակադեմիական և կիրառական գիտությունում ձևավորված ստանդարտների հիման վրա:

Փաստաթղթերի և ընդհանրապես տեղեկությունի ուսումնասիրման բազմա-



Գրվագ ԱԺՀ-ի իշխանությունների հետ
համագործակցության միտված ցեղերի ջիրգայից
(Քարուլ, 1981 թ., «Բախթար» գործակալություն)

տեսակ գործիքակազմի կիրառումը, հավաստիության ապահովումից բացի, հնարավորություն էր տալիս ավելի լիարժեքորեն հարաբերակցելու գիտափորձի օբյեկտի ընդհանուր, առանձնահատուկ և միավորիչ ազգաքաղաքագիտական և ռազմաքաղաքական չափումները, գնահատելու համաձայնական կոնկրետ գիտափորձի հնարավոր վերարտադրելիությունը:

Հարկ է նկատի ունենալ, որ միայն վերլուծության պահանջները պայմանավորեցին Աֆղանստանում ռազմաքաղաքական փորձագիտական աշխատանքի գիտակիրառական առումների նախապատրաստման ու անցկացման համալիր գործիքակազմի զուտ մտահայեցողական ստարաթանման անհրաժեշտությունը: Ավելացնենք, որ, չնայած կոնկրետ վերլուծական ծառայությունների որոշակի մեթոդիկագործիքային մասնագիտացման, իրադրությունը թեղադրում էր բոլոր ներգրավված վերլուծական խմբերի աշխատանքի արդյունքների ու հնարների համակարգում: Դրանով էին պայմանավորված վերլուծական աշխատանքի մեթոդիկաների հնարավոր ընդհանրականացումը, ինչպես նաև այդ խորհրդ-

դատվական ծառայությունների մասնագետների առավել սերտ համագործակցությունը⁵:

Աֆղանստանում քաղաքացիական հակամարտության հեռանկարների իմաստավորման համաձայնական մոտեցումների մերժումը և դրանց հանդեպ անվստահությունը էապես բարդացնում էին նոր մասնագետների անմիջական մուտքը ռազմաքաղաքական այն միջավայր, որտեղ ձևավորվում ու վերարտադրվում էր հակամարտային ներուժը պատերազմի «հեղափոխական» և «հակահեղափոխական» մասնակիցների փոխհարաբերություններում: Ուստի արտաքին և ներառական դիտարկման մեթոդները դարձան զինված հակամարտության սուբյեկտների հետ փոխգործակցության և համագործակցության աշխատանքային կապերի հաստատման, իրենց բնական ռազմաքաղաքական ինքնարտահայտման պայմաններում քաղաքացիական պատերազմի տվյալ սուբյեկտների՝ որպես համաձայնական գիտափորձի օբյեկտի, ուսումնասիրման առանցքային գործիք:

Մարտնչող կողմերին հաշտության

⁵ Տվյալ միտումը երևան եկավ 1982 թ. ԽՍՀՄ-ում ղեկավարության փոխվելուց հետո:

միտելու վերաբերյալ առաջին համաձայնական սցենարների մշակումների ինտենսիվացումը նպաստեց աֆղանական կողմի տարբեր կազմակերպություններում որպես ներառված դիտորդ-խորհրդականներ աշխատող վերլուծաբանների մշտապես գործող կորդիկնային խորհրդակցության կազմակերպմանը:

ԽՍՀՄ ռազմաքաղաքական դոկտորինի՝ Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման առումով վերաիմաստավորման առաջին փուլում տրվելու կորդիկնային խորհրդակցության մասնակիցները հետևողականորեն նախապատրաստում էին, ինչպես այն ժամանակ դա անվանվում էր՝ պինված ընդդիմության բանդկազմավորումներին ժողովրդական իշխանության հետ համագործակցության տրամադրելու ուղղությամբ առաջին փորձերը: Այդ կապակցությամբ ներառական դիտարկման բովանդակությունն ու կառուցվածքը սկսեցին հագեցվել վերլուծական աշխատանքով՝ հակամարտահամաձայնական նյութի տեսական իմաստավորման տարբեր մակարդակներում:

Հետապոտական խնդիրների շարքում հեղինակի մասնակցությամբ, ներառական դիտարկման գծով գործընկերների հետ համատեղ, լուծվել են նաև յուրահատուկ վերլուծակառավարային խնդիրներ: Այստեղ օգտավետ է բացահայտել ռեալ քաղաքական գործընթացների վրա կիրառական ռազմաքաղաքական տեխնոլոգիաների ներգործության որոշ գործիքային առանձնահատկությունները: Բավականին յուրահատուկ կիրառական քաղաքագիտական գործունեության այդ ոլորտի գնահատման համար կարելի է հիմնվել սոցիալական ուսումնասիրության օբյեկտի և գործիքի փոխազդեցության հիմնարար սկզբունքների վրա: Հայտնի է, որ դիտարկվող կամ հարցվող սոցիալական օբյեկտների չափումներում և գնահատումներում ուսումնասիրողի կողմից հնարավոր աղավաղումների նվազեցման համար նախատեսվում են

լրացուցիչ մեթոդիկաներ: Այլ խոսքով՝ դիտորդի առջև կանգնած է հետևյալ մեթոդական խնդիրը՝ նախատեսել դիտարկվող սոցիալական օբյեկտի հետապոտման արդյունքների ամփոփման ժամանակ կոնտրագենտի հետ իր փոխազդեցության արդյունքի բացատրումը:

Իրադրության վերլուծության, կառավարման ենթախորհրդատվական ապարատի կողմից որոշումների նախապատրաստման, ընդունման ու կատարման կազմակերպման գործընթացին մշտապես մտածագործունեաբար ուղեկցող քաղաքական խորհրդականի և խորհրդատուի կարգավիճակն իր մեջ կրում էր ինչպես լիակատար ներառման, այնպես էլ բնական միջավայրում (օբյեկտի հետ իրական անմիջական շփման պայմաններում) նրա դաշտային դիտարկման դերային տարրեր: Դաշտային յուրահատուկ ներգործություն (ինտերակցիա) էին աֆղան ղեկավարության և պինված ընդդիմության անդամների հետ շփումները: Գիտորդի ներառման դոկավորվածությունը տրվելու դեպքում ցուցադրականորեն իրականացվում էր կողմերի շփումների միջնորդավորվածությամբ, որն արտահայտվում էր բանակցությունների արձանագրության թարգմանության ու ձևակերպման կարգի միջոցով:

Գիտորդի և դիտարկվողի փոխհարաբերությունների հաշվառման հիշյալ մեթոդական սկզբունքի իրացման մյուս կողմը շարունակական համագործակցության նպատակաուղղված օգտագործումն էր ոչ միայն ուղղակի կառավարային, այլև միջնորդավորված, մի շարք դեպքերում՝ հակընկերակցի քաղաքական վարքի վրա արժեքակողմնորոշումային ներգործման նպատակով:

Վերլուծակառավարային ներառման երկմիասնությունը հնարավորություն էր տալիս աստիճանաբար հաղթահարելու քաղաքացիական պատերազմի մասնակիցների հակամարտային դիմակայման կողմնորոշումը: Ներառված դիտորդի դերը պահանջում էր որոշակի նրբանկատություն. նա պետք

է պահպաներ ոչ միայն պաշտոնական վարվելակարգը, այլև արևելյան բավականաչափ խիստ վարվեցողական և բարոյական նորմերը: Կառավարային համագործակցության ընթացակարգաբյուրոկրատական կողմերով հաճախակի քո-



Խորհրդային բանակի զինծառայողների նրասարքության միտելու նպատակով աֆղանական զինված ընդդիմության կողմից օգտագործվող հակաքարուչական նյութի նմուշ
(Մարտնչող ցեղերից մեկի մոտ գերի ընկած խորհրդային զինվորը.
«Military Review» հանդես, 1995 թ., հմ. 6)

ղարկվում էին խորհրդային և աֆղանական կողմերի իրական շահերը՝ կապված նախկին հակամարտային ուղեգիծը ներագգային ու միջազգային մարդասիրական համաձայնության վերափոխելու ընթացքում «համբավի փրկման» համար միջոցների մշակման հետ:

Փորձենք ընդհանրացնել տեսական և կիրառական ազգաքաղաքագիտության այն խնդիրները, որոնք վերլուծական խմբերի կողմից մշակվել են Աֆղանստանի նկատմամբ ԽՍՀՄ քաղաքականության փոփոխման կապակցությամբ:

Վերլուծաբանները հանգեցին «չը-

հայտարարված պատերազմի» այն մոդելի տեսական և մեթոդաբանական թերարժեքության գաղափարին, որը վերջին հաշվով խոչընդոտում էր պորքերի դուրսբերմանը:

Ապահովվեց զինված ընդդիմության կուսակցությունների և այլ կազմակերպությունների փաստաթղթերի վերլուծման աղբյուրագիտական հիմքը:

Կատարվեց ընդդիմական կազմակերպությունների և դրանց առաջնորդների ռազմաքաղաքական և ազգաքաղաքական վարկանիշի փորձագիտական գնահատումը⁶: Դաշտային դիտարկումների հիման վրա առաջարկվեցին ընդդիմության զինված կազմավորումները իշխանությունների հետ համագործակցության մղելու ուղղությամբ առաջին ստուգիչ գիտափորձերի օբյեկտները:

Անցկացվեց ընդդիմության այն դաշտային հրամանատարների առաջին ջիրգան (համաժողով), որոնք անցել էին կենտրոնական իշխանությունների հետ համագործակցության:

Մշտապես գործող կոորդինացիոն խորհրդակցության⁷ մասնակիցների կատարած վերլուծական աշխատանքի շրջանորհիվ մշակվել են՝

— ընդդիմության ազդեցության գոտիների քարտեզը՝ ցեղերի և «կադմ» միջցեղային միությունների բնակեցման ազգակրոնական բնատարածքի (արեալի) վրա վրադրմամբ,

— ազգաքաղաքագիտական վերլուծության և բանակցությունների արդյունքներով որպես համաձայնական գիտափորձի օբյեկտներ առաջարկվել են Ահմադ Շահ Մասուդի (Փյանջիրյան հովիտ) և Սաիդ Ջագրանի (Հավարաջաթ) ռազմական կազմակերպությունները: Դրանք աֆղանական զինված ընդդի-

⁶ Տես Գ. Շ. Կոտանջյան. Контрреволюционные партии и организации, ведущие борьбу против народной власти ДРА, и их идеологические платформы. — Кабул, март 1983. с. 14—17:

⁷ ԱժՀ-ում ԽՍՀՄ դեսպանության տարածքում ամսական երկու անգամ անցկացվող այդ խորհրդակցության համակարգողը 1982—1983 թթ. եղել է սույն հոդվածի հեղինակը:

մուտքան ոչ փուշտունական կազմավորումների թվում ճանաչվել էին որպես ազգային համաձայնության ուղեգծին առավել համապատասխան,

— Աֆղանստանում ջիհադի վերաբերյալ աշխատությունների մատենագիտություն,

— ընդդիմական կուսակցությունների, դրանց գաղափարաքաղաքական պլատֆորմների և ռազմաքաղաքական պրակտիկայի վերաբերյալ հավաքական վերլուծական նյութեր,

— Սաիդ Ջագրանի ռազմական կազմավորումներին համագործակցության միտելու ուղղությամբ կիրառական ազգաքաղաքագիտական և գործնական գիտափորձի սցենար:

Մեր կարծիքով, կիրառական ազգաքաղաքագիտության հետազոտական գործիքակազմի տեսական-մեթոդաբանական և մեթոդական հուսալիության հաստատման համար օգտակար է այստեղ քննարկել մեթոդական գործիքների օգտագործման այսպես կոչված «կենդանի փորձը», որում գործիքները կիրառվել են և՛ միջին տեսության մակարդակով ընդհանրացումների համար (օրինակ՝ «Աֆղանստանում վիճված հակամարտության ազգաքաղաքագիտություն»), և՛

կոնկրետ-իրավիճակային ռազմաքաղաքական վերլուծությունում («Խլամական քաղաքական կազմակերպությունները և նրանց առաջնորդները՝ որպես Աֆղանստանում ջիհադի նոր սուբյեկտներ»):

Աֆղանստանում քաղաքացիական պատերազմի կողմերի հակամարտահամաձայնական ռեսուրսների և փոխհարաբերությունների բնագավառներում ռազմաքաղաքագիտական հետազոտությունների յուրօրինակ համադրական արդյունք է այն համաձայնական գիտափորձի ուրվագծային սցենարը, որը 1982 թ. մշակվել է սույն հոդվածի հեղինակի գիտագործնական ղեկավարությամբ: Մեր կարծիքով, այդ բնօրինակ սցենարի պետեղումը հոդվածում իմաստավորված է ռազմադաշտում հակամարտաբանական տեսության պրակտիկ կիրառման կարևորությամբ, քանի որ, նախ՝ միմյանց հանդեպ մեղապարտ պատերազմող կողմերի միջև խաղաղարար գիտափորձի մշակման մեջ ներդրված գիտագործնական բազում ջանքերի յուրահատուկ կենտրոնացում է, երկրորդ՝ տվյալ սցենարն ինքը ռազմաքաղաքագիտական հետազոտության և պրակտիկ ռազմաքաղաքական գործողության համալիր գործիքակազմի օրինակ է:

ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍՑԵՆԱՐ⁸

Բաժին Ա. Հետաքրքրող օբյեկտի վերաբերյալ վերլուծական նյութի հավաքում հակաքարոզչական փաստարկների մշակման նպատակով

1. Ինչ քաղաքական, սոցիալական և այլ արտոնություններ ստացան հապարակները 1978 թ. դեկտեմբերից հետո (օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի վերլուծություն, կրթության, գիտության և մշակույթի, տնտեսության, վիճված ուժերի և այլ ոլորտների վերաբերյալ ընդհանրացնող նյութեր), ինչ է պլանավորված առաջիկայում:

2. Երկրում և արտասահմանում շիական համայնքի նկատմամբ ժողովրդական կառավարության դրական վերաբերմունքի (հապարակների ներկայացուցչությունը ուլիմների բարձրագույն խորհրդում, իսլամի գործերով գլխավոր վար-

⁸ Սցենարը տպագրվում է ըստ Գ. Ս. Կոտանջյան. Этнополитология консенсуса – конфликта. Цивилизационный аспект национальной безопасности. Монография. М., «Луч». 1992, с. 171-177. Այստեղ պահպանված է «Աֆղանստանում շիախարիված պատերազմի» շրջանի քաղաքական բառապաշարի առանձնահատկությունը: Տես նաև *Լույնի*, Схема ориентирования мероприятий по организационному, политическому, агитационно-пропагандистскому и военному обеспечению перехода вооруженных отрядов хазарейского населения на сторону народной власти (на примере предположений по склонению к сотрудничеству бандформирований Сайда Джаграны). – Кабул, 1982 г.

չությունում, ուսումը կրոնական ուսումնական հաստատություններում, այդ թվում և Քաբուլի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում) փաստարկումը (հաջ, կառավարության նյութական օգնություն շիական համայնքին, մվկիթների ու սրբավայրերի նորոգում, բարելավում և շինարարություն...):

3. Կառավարության և խոռվարարների կողմից վերահսկվող տարածքներում հազարական բնակչության կենսամակարդակի բնութագրումը (այն հարյի փաստարկման համար, թե ինչ արտոնություններից և դրական փոփոխություններից են զրկվում հազարացիները իրենց բնակության տարածքները հակառակորդի վերահսկողության տակ անցնելու դեպքում):

Մանթություն 1, 2, 3 կետերի վերաբերյալ: Հատուկ ուշադրություն դարձնել կուսակցական և պետական մարմիններում հազարացիների ներկայացուցչությանը (ընկ. Քեջմանդ և ուրիշներ, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ներկայացվածության տեսակարար կշռի դիտարկվան):

1, 2 կետերում նշված բնութագրերի դիտարկման նպատակահարմար է տալ (առավել շահավետ պահերը) փուլերի կտրվածքով՝ մինչ 1978 թ. հեղափոխությունը, նրա նոր փուլում և այլն:

4. Բանդկավամվորումների ազգասոցիալական կազմի, ստորաբաժանումների հրամանատարների բնութագրումը՝ հակաքարոզչական նյութերում խոռվարարների շահերն արտացոլելու նպատակով (այդ թվում՝ նրանց դասակարգային շահերին հնարավոր ապավինման համար):

5. Մաիդ Ջագրանի բանդկավամվորումների դեմ անցյալում ձեռնարկված ռազմական, քաղաքական, ազիտացիոն-քարոզչական բնույթի միջոցների բնութագրումը (թոռույիկների, ռադիոհաղորդումների ծրագրերի, բանակցությունների արձանագրությունների տեքստեր, հատուցման գործողություններ՝ ի պատասխան բանդիտների հանցագործությունների, հնարավոր սխալ գործողություններ՝ ի խախտումն օրինականության, պայմանավորվածությունների, սովորույթների և այլն):

6. Մաիդ Ջագրանի և խոռվարար այլ կազմակերպությունների, խմբերի միջև հակասությունների վերլուծություն (նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել քաղաքական, կրոնական, ազգային և միջցեղային տարաձայնություններին, ինչպես նաև վիրավորանքներին, փոխադարձ հավակնություններին, հակահեղափոխական կազմակերպությունների և բանդկավամվորումների դեկավարների միջև չլուծված վրեժին):

Մանթություն 6-րդ կետի վերաբերյալ: Նպատակահարմար է համակարգել միմյանց դեմ բանդկավամվորումների կատարած հանցագործությունների փաստերը:

Բաժին Բ. Որոշ առաջարկություններ բանդկավամվորումներին ժողովրդական իշխանության հետ համագործակցության միտելու գործընթացի կազմակերպական, քաղաքական, ազիտացիոն-քարոզչական և ռազմական ապահովման վերաբերյալ

1. ԱժՀ պինված ուժերի, ինչպես նաև խորհրդային 40-րդ բանակի խորհրդրդատվական ապարատի համապատասխան ծառայությունների լիազոր ներկայացուցիչներից հատուկ խմբի ստեղծում՝ տվյալ հարյի շուրջ փոխգործակցության ծրագրի մշակման համար (նախանշել միջոցառումներ ըստ կոնկրետ տարածքների՝ ժամկետներով և կատարողներով):

Մանթություն 1-ին կետի վերաբերյալ: Փոխգործակցության սխեմայի մշակումից հետո նպատակահարմար է աֆղանական կողմից գործի դնել նախապատրաստված և ստուգված մասնագետների (ըստ հնարավորին՝ հազարացիների կամ շիական համայնքի և նրանց բանդկավամվորումների վերահսկողության ներքո գտնվող տարածքներում ծաված անձանց):

2. Երաշխավորական նամակի տեքստի մշակում (ժողովրդական իշխանության կողմն անցնելու անհրաժեշտության փաստարկում, անցման պայմանների ձևակերպում...):

Հարկ է հաշվի առնել 1-ին բաժնի կետերի (1—6) վերաբերյալ մշակված փաստարկները, ընդ որում նպատակահարմար է, հենվելով «Ներման մասին հրամանագրի» վրա, ավելի շեշտել պետական իշխանության դիրքորոշման հետ հազար-



Ցեղերը համագործակցության միտելու նպատակով օգտագործված հատուկ քարոզչական նյութի նմուշ
(ԱԺՀ-ի խորհրդայնամետ վարչակարգի ղեկավար Բաբրակ Զարմալը ապգային պգեստ հագած, ցուցադրում է փոխըմբռնման և համագործակցության հարաբերություններ մարտնչող ցեղերից մեկի ղեկավարի հետ)

րական բնակչության, շիական համայնքի որոշակի շահերի համընկնումը, բանդկավաճավորումների վիճված պայքարի անհեռանկարայնությունը:

Ժողովրդական իշխանության կողմն անցնելու պայմանները ձևակերպելիս հարկ է նախատեսել նաև ռավմական, քաղաքական, սոցիալական, տնտեսական (այդ թվում՝ ֆինանսական) պահեստային պայմանները:

Ծանոթություն 2-րդ կետի վերաբերյալ: Նպատակահարմար է ժողովրդական իշխանության կողմն անցնելու պայմանների ձևակերպումից առաջ տալ հակառակորդի կողմից առաջադրվող պայմանների վերլուծությունը (վստահելի աղբյուր-միջնորդների տեղեկատվության հիման վրա):

3. Բանակցություններ ու այլ շփումներ վարող խմբերի համալրումը կատարել գերազանցապես ի հաշիվ հեղինակավոր հավարացիների՝ ժողովրդական իշխանության, ԱԺՀ ՁՈՒ-ի և այլ գերատեսչությունների լիազոր ներկայացուցիչների: Ուշադրություն դարձնել բանակցող կողմերի աստիճանակարգերի և լիազորությունների իրավահավասարության (համապատասխանության) վրա, ինչպես նաև պայմանավորվածությունների պահպանման հանդիպական երաշխիքներին: Միջնորդների կազմի համապատասխան ընտրություն (հեղինակություն, վստահություն և այլն):

Ծանոթություն 3-րդ կետի վերաբերյալ: Նպատակահարմար է երաշխիքային նամակի բանավոր մեկնաբանությունների բովանդակության և բանակցությունների վարման ընթացակարգի վերաբերյալ հրահանգավորումը, ինչպես նաև այդ բանակցությունների ընթացքի հնարավոր տարբերակների «խաղարկումը»: Կոնկրետ բանակցությունների ընթացքի անվտանգության ապահովման նպատակով կարելի է երաշխիքային նամակներ ուղարկել նաև այլ բանդկավաճավորումների (Սաիդ Ջագրանի կողմից վերահսկվող տարածքին հարող գոտիներում):

4. Կուսակցական և պետական տեղական մարմինների (դրանց ղեկավարների) կազմի համապատասխանեցում գերազանցապես հազարացիներով բնակեցված տարածքների ազգային կազմին: Նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել Ջագրանի ազդեցության գոտում կազմմիջուկների ազգային կազմի վրա:

5. Իսլամի (շիական համայնքի) որոտում կոնկրետ (ցուցադրական) գործողությունների մշակում.

ա) շիական առավել հարգի մկիթների և սրբավայրերի նորոգում, վերակառուցում, շինարարություն, բարեկարգում,

բ) ԱԺՀ բարձրագույն կրոնական մարմիններում, ԱԱԸ-ում*, Բաբուլի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների շրջանում շիական համայնքի ներկայացուցչության համապատասխանեցում հավատացյալ հազարական բնակչության տեսակարար կշռին,

գ) Ժողովրդական իշխանությունը պաշտպանող շիական հեղինակությունների դիմում հավատացյալների հոտին (հնարավոր է նաև կոնկրետ դիմում Սաիդ Ջագրանին և Բեհեշթիին)՝ պինված պայքարը դադարեցնելու կոչով:

6. Վերահսկել հազարական բնակչությամբ տարածքներում պլանավորված նյութական և բժշկական օգնությունը (հատկապես Սաիդ Ջագրանի ազդեցության գոտում): Հարկ եղած դեպքում նախատեսել լրացուցիչ օգնություն (քարուղչական ապահովմամբ):

Ստանդություն 6-րդ կետի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ խոսվածքարների կողմից հնարավոր է ցուցաբերված օգնության օգտագործումը պատերազմող բանդկազմավորումների նյութական օժանդակության, հանդերձավորման համար, ինչպես նաև հուլիական ազդեցություն գործելու նպատակով իմաստ ունի օգնություն ցույց տալ հիմնականում դեղորայքով, ինչպես նաև երեխաների, կանանց և ծերերի համար հագուստով և կոշիկներով:

Բացառիկ դեպքերում կարելի է ցույց տալ ավելի լայն նյութական օգնություն՝ ներառյալ ֆինանսական օգնությունը, ինչպես նաև հրազենի որոշ տեսակներ (համապատասխան ղեկավար մարմինների հատուկ որոշմամբ):

7. Անհրաժեշտության դեպքում նախատեսել նշանավոր հազարացիների (ընկ. Բեշթմանդի և այլոց) մեկնումը Ղազնի կամ Հազարաջաթի որևէ այլ բնակավայր (ընկ. Բարմալի՝ Սազարի-Շարիֆ կատարած այցի սխեմայով): Նպատակահարմար է այցերը կապել համակուսակցական կամ պետական միջոցառումների հետ (ԱԺԳԿ** Կենտկոմ և ԱԺՀ կառավարության որոշումների կատարում, ժողովրդատնտեսական օբյեկտների այցելություն և այլն):

8. Ժողովրդական իշխանության կողմից ռազմական օգնություն ցուցաբերելու պատրաստակամության ցուցադրման ուղղությամբ միջոցառումներ: Նման ցուցադրական գործողությունները կարելի է իրականացնել Սաիդ Ջագրանին՝ ընդդեմ կոնկրետ մրցակից բանդկազմավորման ծառայություն մատուցելու ձևով (նրա ինդրանքի առկայության դեպքում):

Ստանդություն 8-րդ կետի վերաբերյալ: Նման գործողությունները կարող են նպաստել բանակցությունների ժամանակ ժողովրդական իշխանության ներկայացուցիչների դիրքերի ամրապնդմանը: Մինևույն ժամանակ պետք է միջոցառումներ ձեռնարկել բանակցող մյուս կողմի դեմ շիամաձայնեցված ռազմական գործողությունները (բանակի, ցարանդոյի և ԽՍԳ-ի***) բացառելու ուղղությամբ:

9. Հազարացիների ջիբգանների հետ (կամ տոհմացեղային հեղինակությունների համանման «խորհուրդների» հետ՝ օգտագործելով եղած դրական փորձը, օրինակ՝ Գարդիկ և այլն) աշխատանքի գծով միջոցառումների մշակում: Այդ աշխատանքը նպատակահարմար է անցկացնել ԱԱԸ-ի կամ ցեղերի ու ազգությունների գործերով նախարարության հովանու ներքո:

* ԱԱԸ՝ ազգային-ազատագրական ճակատ:

** ԱԺԳԿ՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցություն:

*** Ցարանդոյ՝ ԱԺՀ ՆԳՆ ներքին գործեր, ԽՍԳ՝ ԱԺՀ պետական տեղեկատվական ծառայություն (անվտանգության ծառայություն):

10. Հապարական բնակչության շիական համայնքի նկատմամբ ժողովրդական իշխանության դրական քայլերը լուսաբանող թոուցիկների, պլակատների, լուսանկարչական ցուցահանդեսների նախապատրաստում, հրատարակում և համապատասխան միջոցներով տարածում (օգտագործել I բաժնի 1—3 կետերի, ինչպես նաև II բաժնի 4, 5, 6, 9 կետերի փաստարկները): Հատուկ ուշադրություն դարձնել «Ներման մասին հրամանագրի» քարտմանը՝ գունեղ և մատչելի ձևավորված թոուցիկների հրապարակման միջոցով:

Օանտություն 10-րդ կետի վերաբերյալ: Հաշվի առնելով հավատացյալ հապարակների որոշակի մասի կրթական ցածր մակարդակը և կրոնական մոլեռանդությունը, ինչպես նաև ռադիոհաղորդումների միջոցով իրանական գործունեւ գեղեցությունը հապարական բնակչության վրա, օգտագործելով տարբերության առումով գրավիչ թոուցիկներ, պլակատներ՝ նպատակահարմար է սուգվիր արտադրանքի բովանակության մեջ հմտորեն օգտագործել շիական դավանանքի յուրահատկությունը՝ նախապատվությունը տալով իրանական համարնույթ նյութերի կրոնական ձևավորում ունեցող պատկերներին:

Մեծ ուշադրություն է պահանջում թշնամական քարուչչության արտադրանքի հետ ձևավորմամբ գունեւ մրցակցող հակաքարուչչական հրատարակությունների գրավչության նյութատեխնիկական ապահովման երմնախնայրի լուծումը:

11. Կենտրոնական և տեղական ռադիոհաղորդումների ծրագրերի մշակում (2-րդ բաժնի 10-րդ կետում նշված նյութերի բովանդակության հաշվառումով):

Նախատեսել հայտնի հապարակների ելույթներ հեռուստատեսությամբ և ռադիոյով, ձայնա- և տեսահոլովակների առաքում տեղեր՝ նպատակ ունենալով դրանք օգտագործելու ալտոնում էներգակիրներով սնվող տեղական ռադիոտեսաընդունիչներով և բարձրախոս սարքերով հաղորդելու, ինչպես նաև Սալիդ Ջագրանի ազդեցության գոտու ազգաբնակչության և այնտեղ եղած բանդկազմավորումների անձնակազմերի շրջանում հատուկ կապուղիներով տարածելու նպատակով:

12. Կազմակերպել ԱԺԿԿ, ժողովրդական իշխանության, բանակի, ցարանդոյի, տնտեսության, մշակույթի, գիտության և կրթության համակարգերում հալարական ծագում ունեցող հայտնի ներկայացուցիչների ելույթները կենտրոնական մամուլի օրգաններում (դրանք պարտադիր կերպով արտատպելով տեղական թերթերում):

13. Կինո- (հեռուստա-) հոլովակների պատրաստում հալարական բնակչության, շիական համայնքի նկատմամբ ժողովրդական իշխանության դրական քայլերի մասին (օգտագործել I բաժնի 1—3, ինչպես նաև II բաժնի 4, 5, 6, 7 և 9 կետերում շարադրված փաստարկները):

Հեռուստատեսությամբ, կինոթատրոններում, շարժական կինոսարքերի միջոցով կինոհոլովակների ցուցադրման կազմակերպում (հատկապես հիմնականում հալարակներով բնակեցված վայրերում):

14. Հալարակների հիմնական բնակչության տարածքում (հատկապես Սալիդ Ջագրանի ազդեցության գոտում) հետաքրքրող ժամանակահատվածում ԱԺՀ վինված ուժերի, խորհրդային վորքերի մարտական հակաքարուչչական ջոկատների օպտիմալ տեղաբաշխում:

Ապահովել այդ ջոկատների համալրվածությունը կադրերով, հատկապես քարուչչական և բժշկական, համապատասխան ազդեցիկոն-քարուչչական նյութով (հայտնի հալարակների ելույթների մագնիսոֆոնային ձայնագրություններ, կինոնկարներ՝ II բաժնի 13-րդ կետով, ինչպես նաև «Ներման մասին կրամանագիրը», «Բիմում ցեղերին դարի լեվոլ» և այլ տեքստեր՝ II-րդ բաժնի 10-րդ կետով), զգեստով և կոշիկով՝ երեխաների, կանանց և ծերերի միջև բաշխելու համար, դեղորայքով և մթերքով: Նպատակահարմար է, որ ջոկատի մեջ մտնի սանիտարաբժշկական բրիգադ, ինչպես նաև համերգային խումբ՝ գերապանցապես հալարական համերգապանկով:

Ընդհանուր կարգի ծանոթագրություններ

ա) նպատակահարմար է ստեղծել միջոցառումների պատրաստումն ու իրականացումը վերահսկող խումբ (տեղերում ստուգումներով),

բ) ունևիդիոների վրա հուզական ազդեցության ուժեղացման նպատակով ցանկայի է 10, 11, 12, 13, 14 կետերը կենսագործելիս այլ նյութերի հետ տալ նաև խոտվարարների ցինված պայքարի դաշարեցմանն ուղղված նյութեր, որոնք հնչեն «երկու մայրերի», «երկու քույրերի», «երկու հայրերի» (ժողովրդական իշխանության և հակահեղափոխության շահերի համար փոխվածների հարազատների) և այլոց շուրթերից,

գ) լսարանի հոգեբանական հակվածության ամրապնդման համար նպատակահարմար է հարյուրումներում և տպագիր տեքստերում հաշվի առնել դարի-հազարի լեզվի յուրահատկությունները:

* * *

Կարծում ենք, որ սույն հոդվածում շարադրված դատողությունները և գործնական միջոցառումները կհետաքրքրեն դարաբաղյան հավամարտության կարգավորման ուղղությամբ աշխատող մասնագետներին: Անտարակույս, ուղղակի ընդօրինակումը անհնարին է, սակայն կարծում ենք, որ նշված մեթոդիկան որոշ վերապահումներով կիրառելի է դարաբաղյան հավամարտության դեպքում հակառակորդի արգաքաղաքական, արգակրոնական և սոցիոմշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ (ինչպես այն ընդհանուր առմամբ ներկայումս կիրառվում է Չեչնիայում):

ВОЕННАЯ ПОЛИТИКА

ОБ ИНСТРУМЕНТАРИИ ВОЕННО-ПОЛИТОЛОГИЧЕСКОГО
ПОЛЕВОГО ЭКСПЕРИМЕНТА
(ИЗ ОПЫТА АФГАНСКОЙ ВОЙНЫ)

Г. С. КОТАНДЖЯН, полковник, доктор политических наук,
действительный член Академии военных наук (г. Москва)

РЕЗЮМЕ

После кончины Л. И. Брежнева в СССР в результате новой расстановки политических сил был взят курс на выход из афганского военного конфликта. Стала изменяться заданность советнической деятельности с интенсивным внедрением в ее содержание аналитических разделов. На фоне продолжающихся разработок проблем традиционного политического и контрпропагандистского противодействия ряд специалистов стал привлекаться к переосмыслению теоретико-методологической базы формирующегося консенсусно-конфликтного курса.

Со временем стало очевидно, что в основе сложностей перехода к внутривосточному и внешнеполитическому регулированию афганского конфликта лежит фундаментальная деформация его модели. В свое время для оправдания ввода советских войск, нейтрализации таких международно-правовых оценок, как «агрессия» и «оккупация», были выработаны методологическая концепция и модель «необъявленной войны империализма против афганского народа». Данная мифологизированная модель скрывает базовую структуру афганского конфликта, заблокировав консенсусные потенции возможных сценариев его динамики на собственной внутривосточной основе.

Научное раскрытие сущности базовой модели конфликта, определение

ее структуры и динамики стало методологической базой для политологического обоснования гипотезы о возможности проведения консенсусных экспериментов, предвещающих и апробирующих политический инструментарий курса на национальный мир. Теоретическое ядро данной гипотезы содержало концепцию возвращения интернационализированного (советским присутствием) вооруженного конфликта в изначальное русло внутривнутриполитического конфликта между оппозицией и официальными властями Афганистана с целью смены или поддержки режима.

Ограничения, накладываемые «кризисной этнополитикой», в основном были обусловлены резкой лимитированностью доступа к источникам надежной информации, в непосредственную среду самовыражения субъектов и объектов консенсусно-конфликтной практики. В связи с реальной опасностью для жизни исследователя каких-либо передвижений по стране, неграмотностью большинства населения, отсутствием традиций и кадров для проведения массовых опросов, невозможностью надежной верификации результатов массовых обследований населения, предрасположенного воспринимать интервьюирование как вмешательство в сферу личной жизни, из инструментария конкретной этнополитологии практически исключались массовые обследования методами политической социологии.

В связи с необходимостью постоянной практической апробации результатов анализа и их внедрения в практику военно-политического управления особое место в инструментарии прикладной политологии занимал наиболее сложный в своем содержании и структуре метод — эксперимент.

В качестве объектов исследования, а также прямо или опосредованно контролируемой этнополитики в консенсусном эксперименте рассматривались структуры реальной военной и политической власти как официальных институтов ДРА, так и в сфере действия непризнанных в качестве субъектов законной власти, но не менее влиятельных военно-политических подразделений оппозиции. Как независимые интегративные переменные рассматривались характеристики объектов, свидетельствующие об их вхождении в состояние перемирия и сотрудничества.

В связи с военно-политической и социально-психологической спецификой джихада в Афганистане эксперименты могли проводиться только в полевых условиях естественного самовыражения исследуемых объектов. Положение усугублялось тем, что полевой эксперимент необходимо было проводить в условиях крайне чувствительного реагирования его объекта — воюющих сторон конфликта — на вмешательство в поведение вооруженных формирований, содержащее сколь-либо манипулятивный элемент внешнего воздействия.

Таким образом, практически исключалась возможность прямого контроля за ходом эксперимента по склонению воюющих сторон к консенсусу и сотрудничеству. Для выявления причинно-следственных связей между общими и особенными характеристиками формирований вооруженной оппозиции, их интересами, целями, а также механизмами регулирования их консенсусного или конфликтного поведения в основном использовались такие инструменты, как изучение документов, внешнее и включенное наблюдение, сбор и анализ экспертной информации, элементы «переговорных технологий».

Специфика военной обстановки предопределяла лимитирование возмож-

ности для всестороннего изучения объекта и предмета эксперимента. На данном этапе объектами изучения являлись не только институты и организации (партии, движения, структуры военно-политического управления), но и такие важнейшие элементы традиционного афганского общества, как племена, роды, кланы, их вожди, авторитетные религиозные деятели.

Изучение документов, связанных с деятельностью исследуемых объектов, строилось на источниковедческой базе аналитических служб афганской и советской сторон. Основное внимание уделялось военно-политическому и политико-правовому анализу программ, уставов, директивных документов и инструкций центральных органов и местных исламских комитетов оппозиционных партий. В качестве дополнительного источника для изучения официальных оценок и событий, исследовательский эксперимент сопровождался мониторинговым анализом прессы вооруженной оппозиции и ее зарубежных сторонников. Предметом особого внимания являлись оппозиционные спецпропагандистские материалы, преследовавшие цели противодействия советской и афганской контрпропаганде, а также формирования общественного мнения в пользу джихада. Учитывался тот факт, что в связи с неграмотностью большинства моджахедов оппозиция доводила спецпропагандистские материалы до широких кругов посредством групповых зачитываний и толкований через своих активистов.

Изучались также авторские труды и выступления наиболее авторитетных лидеров оппозиции. В дополнение к биографическим данным, сравнительный анализ этих трудов давал возможность точнее установить реальный военный и политический рейтинг лидеров оппозиции, сферы и формы влияния, особенности стиля их лидерства.

В аналитической части подготовки эксперимента специальное место занимало сопоставительное изучение текстов обобщенных обзоров радиовещательных программ оппозиции.

Несмотря на инерцию коранической регламентации изобразительных средств пропаганды, в процессе афганского вооруженного конфликта оппозиция достаточно широко использовала изображения святых мест, портреты видных деятелей и шахидов, карикатуры на противников, издаваемые в виде красочных плакатов, листовок, буклетов и т. д.

Актуальность исследовательской разработки аудиовизуальных документов на стадии научной подготовки консенсусного эксперимента была обусловлена достаточно широким использованием оппозицией на местах видеоманитофонов, кино-, фото- и видеодокументов (на базе автономных энергоисточников).

При анализе фонетических документов выявлялись содержательные и этнолингвистические особенности текстов.

Анализ сопровождался изучением достоверности и надежности источников информации. В связи с резким политическим расслоением афганского общества отмечалась склонность носителей военно-политической и этнополитической информации к организации так называемых контролируемых или «плановых утечек» секретных или псевдоконспиративных сведений.

Сопряжение выбранных методик давало возможность контролировать приемлемую надежность и валидность оснований для консенсусного развития событий. Установлению аутентичности документов и адекватности военно-политической и этнополитической информации помогали консульти-

рующие специалисты со страноведческой и историко-лингвистической подготовкой, а также специализированная группа переводчиков. Методологические и общетеоретические основания обеспечения валидности эксперимента строились на стандартах, сложившихся в академической и прикладной науке. В качестве таких стандартов чаще всего рассматривались экспертные оценки.

Использование разнообразного инструментария изучения документов и информации в целом, кроме обеспечения надежности, создавало возможности для более полного соотнесения общих, особенных и единичных этнополитических и военно-политических измерений объекта эксперимента. Данный подход содействовал также последующему научному обобщению совокупности предварительно обработанных в Афганистане фактов в контексте дальнейшего, более углубленного исследования уже на более высоких уровнях анализа этносоциальных систем.

Следует подчеркнуть, что именно требования анализа обусловили необходимость чисто умозрительного расчленения комплексного инструментария подготовки и проведения научно-прикладных аспектов военно-политической экспертной работы в Афганистане. Однако, несмотря на определенную методико-инструментальную специализацию конкретных аналитических служб, ситуация диктовала необходимость координации результатов и приемов работы всех привлеченных аналитических групп. Этим обуславливалась универсализация методик аналитической работы, а также более тесное взаимодействие специалистов советнических служб (с этой целью было организовано постоянно действующее координационное совещание аналитиков, работавших в качестве включенных наблюдателей-советников в различных организациях афганской стороны; в 1982—1983 гг. координатором этого совещания был автор данной статьи).

В кругу аналитиков, сотрудничавших с автором, реализовывались такие актуальные исследовательские задачи, как систематизация аналитической информации по всем основным аналитическим службам советской и афганской сторон; разработка гипотез о целесообразных инновациях в политических курсах участников вооруженного конфликта; подготовка аналитической основы для проведения консенсусного эксперимента; подготовка и практическая апробация в переговорах между воюющими сторонами сценариев склонения вооруженных формирований оппозиции к сотрудничеству с властями.

В статье приводится примерный сценарий полевого консенсусного эксперимента в Афганистане в 1982—1983 гг. с целью разработки контрпропагандистской аргументации и выработки конкретных предложений по организационному, политическому и военному обеспечению склонения отдельных формирований вооруженной оппозиции к сотрудничеству с официальными властями Афганистана.

В заключение подчеркивается, что обсуждаемые в статье методика и политический инструментарий могут быть использованы в целях разрешения и других вооруженных конфликтов. Однако при этом необходимо учитывать специфические этнокультурные, в частности — этноконфессиональные и социокультурные, особенности сторон конкретного вооруженного конфликта. Следует отметить, что по идентичному консенсусно-конфликтному сценарию развиваются в настоящее время события в Чечне.

MILITARY POLITICS

ON AN INSTRUMENTARIUM OF A MILITARY-POLITICAL FIELD EXPERIMENT (FROM THE EXPERIENCE OF THE AFGHAN WAR)

*H. S. KOTANJIAN, Colonel, Doctor of Political Sciences,
Actual member of the Academy of Military Sciences (Moscow)*

SUMMARY

After the death of Leonid Brejnev in the USSR, as a result of a re-distribution of political power, a new course was set to come out of the Afghan war. Within the background of the problems of traditional politics and propaganda, a number of specialists reviewed the theoretical and methodological basis of the «consensus-conflict» continuum.

It soon became obvious that the fundamental deformation of the model created the difficulties of transition to a regulation of the Afghan conflict.

The past justification for the entry of Soviet troops included such international-legal appraisals as «aggression» and «occupation». The methodological concept was an «undeclared war of imperialism against the Afghan people». This mythical model concealed the basic structure of the Afghan conflict. It blocked the potential for the consensus of possible scenarios at its own internal political base.

The scientific insights as to the essence of the conflict's model and the determination of its structure and dynamics became the methodological basis for the political substantiation of a policy towards a national peace. The theoretical substance of this hypothesis was the return to the original internal aspect of the conflict (between the government and the opposition) away from the internationalization of the conflict through the presence of Soviet troops.

There were personal limitations set on the possibility of gathering information. Danger to life, illiteracy, unfamiliarity with surveys, and the feeling that information gathering was an invasion of privacy excluded the possibility of running a survey of interest to political sociology. Further difficulties related to this experimental method deal with the problems of approvals and adoption within a tense military-political context.

As objects of research, the structures of actual military and political authorities as official institutions of the Democratic Republic of Afghanistan were considered. The activities of unrecognized but influential authorities (military-political opposition units) were also considered.

Because of the particular military, political, social, and psychological features of the «Jihad» in Afghanistan, experiments could be conducted only by means of narratives. The study of documents, external and internal observations, the collection and analysis of expert information and the sociology of the negotiation process were used as research instruments.

Specific features of the military situation set limits on the study. Not only institutions and organizations (parties, movements, structures of military-political organizations) were studied, but also such important elements of traditional Afghan society, such as tribes, their leaders, and religious figures.

The documents were analyzed by the services of the Afghan and Soviet sides. A military, political, and legal analysis of programs, manuals, directives and instructions of central bodies and local «Islamic Committees» of opposition parties was carried out. As an additional source of study of official estimates and events, the research experiment monitored the press of the armed opposition and its foreign centers. In connection with the illiteracy of the majority of mojaheds, the opposition brought special propaganda materials to the notice of

many by means of group readings and speeches by its activists. The works and statements of the more authoritative leaders of the opposition were also studied. In addition to biographical facts, a comparative analysis of these works permitted the organization of a realistic military and political «rating» of opposition leaders, together with their sphere and form of influence and the peculiarity of their leadership style.

In the analytic part of the experiment, the comparative study of texts of summaries of opposition views from broadcasts predominated.

Despite the Koranic rules against the pictorial representation of life forms, the opposition widely used pictures of holy places, portraits of famous leaders and shahids (soldiers slain during a «Jihad»: holy heroes), and caricatures of opponents. These were published as color posters, leaflets, and booklets.

To determine the authenticity of documents, the identity of military, political, and ethnic information, the consulting specialists were helped by leading historians and linguists. There also was a specialized group of translators-interpreters.

It should be emphasized that the demands of analysis necessitated the breaking down of the complex instrument set to conduct this scientific work in Afghanistan. However, despite the specialization of such analytical services, it was necessary to coordinate the results and methods. It required the integration of the work of advisors. In this regard, a permanent working coordination conference of analysts, including observers and advisors in various Afghan organizations, was coordinated by the author in 1982—1983.

The analysts who cooperated with the author systematized the information on all basic analytic services of the Soviet and Afghan sides. They hypothesized about reasonable innovations in the political course of participants of the armed conflict. They prepared the analytic basis to implement the preparation of the consensus experiment. The preparation and practical approval during negotiations between the warring sides of scenarios designed to persuade the opposition's armed units to cooperate with the authorities was also realized.

The article deals with the scenario of a field consensus experiment in Afghanistan. The scenario was to work out the counter-propaganda argumentation and, by means of organizational, political and military methods, to persuade some units of the armed opposition to cooperate with the Afghan authorities of the day.

In conclusion, it emphasizes that this methodological and political instrument may be used to regulate other armed conflicts. However, one must consider the special ethnic, cultural, religious, and social features of the sides of any specific armed conflict. In fact, an identical «consensus-conflict» scenario is developing in Chechnya.

ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԳՆԻՒՍԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԻՑ ԵՎ ԽՈՑՈՒՄԻՑ

Ա. Տ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, փոխգնդապետ

Ռազմական տեխնիկայի և սպառազինության, այդ թվում և հետախուզման միջոցների վարձագրման ներկայիս մակարդակը հնարավորություն է տալիս հակառակորդի մարտական միջոցները հայտնաբերելու և խոցելու գործնականում ցանկացած հեռավորության վրա, ցանկացած եղանակի պայմաններում, ն' ցերեկը, ն' գիշերը: Հայտնաբերման այդ հետախուզական միջոցների աշխատանքի հիմքում դրված են տարբեր ֆիզիկական երևույթների օգտագործման վրա հենվող գիտական և ճարտարագործական մշակումներ: Մետաղական մեծ վանգված ունեցող մարտական տեխնիկայի հայտնաբերումը կարող է կատարվել ըստ նրանով ստեղծվող մագնիսական դաշտերի: Սա ներկայումս կիրառվող հիմնական մեթոդներից մեկն է:

Մագնիսական դաշտերով ռազմական տեխնիկայի հայտնաբերման և խոցման միջոցները վերջին ժամանակներս ավելի ու ավելի լայն տարածում են գտնում: Մագնիսական կապուղիները օգտագործվում են հակատանկային ականների պայթուցիչներում, ականանետների ականներում, հրթիռների ինքնուղորդման սարքերում ու պայթուցիչներում, իսկ բարձր պզայունության անբամագնիսաչափների կիրառությունը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով հայտնաբերելու քողարկված տեխնիկայի կուտակումները:

ՌԻՎԱՏԻ կարևոր մարտավարական խնդիրներից է նման դաշտերի «քողարկումը»՝ դրանց հնարավորին չափ նվազեցման կամ լրիվ վերացման միջոցով:

Ռազմական օբյեկտների մագնիսա-

կան դաշտերի նվազեցման ուղղությամբ գործնական աշխատանքներն ավելել էին դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և վերաբերում էին դրանց ապամագնիսացմանը անիդրումային ականներից նավերը պաշտպանելու նպատակով: Հետագայում դրանց գումարվեց սուլվանավերը մագնիսաչափական եղանակներով հայտնաբերումից պաշտպանելու խնդիրը:


Ռազմական տեխնիկայի ստատիկ մագնիսական դաշտերի աղբյուրներն են ֆերամագնիսական կոնստրուկցիաները, որոնք, մագնիսանալով Երկրի մագնիսական դաշտում (ԵՄԳ), այդ դաշտն աղավաղում են՝ առաջ բերելով տեղական մագնիսական խտտորումներ:

Ինչպես հայտնի է, բոլոր նյութերի մագնիսական հատկությունները պայմանավորված են հիմնականում էլեկտրոնների սպինային և մասամբ՝ նրանց ուղեծրային մոմենտներով: Էլեկտրոնների սպինային մոմենտները միմյանց նկատմամբ կողմնորոշված են վուգահեռաբար: Ֆերամագնիսական նյութերի մոլեկուլային կառուցվածքի առանձնահատկությունների հետևանքով այդ նյութերում էներգետիկորեն ավելի շահավետ է այն վիճակը, որում ողջ նյութը մասնատվում է յսպակ կոչված դոմենների (ոստանների), որոնց չափերը մոտ 10^{-3} — 10^{-4} մմ են և որոնցում բոլոր մագնիսական մոմենտները մեկ կողմ են ուղղված, իսկ այդ տեղամասերը մագնիսացած են միմյանց հագեցում:

Էներգիայի նվազագույնության ըսկըպրունքին համապատասխան բյուրեղներում դոմենները միմյանց նկատմամբ

կողմնորոշվում են վուգահեռ, հակապուգահեռ և 90° անկյամբ: Նման կողմնորոշումը, ի հաշիվ փոխապոկեություն, տարածվում է հարևան բյուրեղների վրա և, վերջին հաշիվով՝ ֆերամագնիսի ողջ հաստությամբ: Այսամագնիսացված վիճակում մագնիսացման գումարային վեկտորը հավասար է 0-ի (նկ. 1, ա):

Արտաքին H մագնիսական դաշտի



նկ. 1. Շեղման, պտտման և հարագործընթացի որակական պատկերները

կիրառման դեպքում սկսվում են գերապանցապես շեղման գործընթացները, որոնց պայմաններում արտաքին դաշտի ուղղությանը մոտ ուղղություն ունեցող դոմենները ընդարձակվում են ի հաշիվ հարևան՝ սակավ շահավետ կողմնորոշված դոմենների կլանման (նկ. 1, բ):

Արտաքին H մագնիսական դաշտի լարվածության աճման համեմատ սկզբում են գերակշռել պտտման գործընթացները, այսինքն՝ դոմենների մագնիսացածության I վեկտորը պտտվում է կիրառված դաշտի ուղղությամբ: Հվոր դաշտերի դեպքում ամբողջ ֆերամագնիսը վերածվում է ասես մի ընդհանուր մեծ դոմենի:


Դաշտի հետագա աճման դեպքում դիտվում է ֆերամագնիսի մագնիսացման փոքր աճում՝ հարագործընթացի հետևանքով, այսինքն՝ ի հաշիվ ջերմային գործընթացների ներգործությամբ ապակողմնորոշված ատոմական մագնետիկների լրապտտման ըստ արտաքին դաշտի: Նկ. 1-ում բերված են շեղ-

ման, պտտման և հարագործընթացի որակական պատկերները հարթությունում:

Այսպիսով՝ մագնիսացման գործընթացի վեկտորական պատկերն ունի հետևյալ տեսքը. մագնիսացման վեկտորները կողմնորոշված են երեք փոխուղղահայաց առանցքների երկայնքով (նկ. 2):

Շեղման գործընթացներում ըստ մեծության և ուղղության փոփոխվում են մագնիսացման գումարային I_x, I_y, I_z վեկտորները, ուրեմն և՛ արդյունարար I վեկտորը: I վեկտորի կիրառման C_m կետը մնում է անփոփոխ, քանի որ այս դեպքում փաստորեն տեղի է ունենում դոմենների մագնիսացման վեկտորների պտույտ 180° -ով և նրանց միակցում այն դոմեններին, որոնք արտաքին մագնիսական դաշտի նկատմամբ շահավետ կողմնորոշված են:

Պտտման գործընթացներում փոփոխվում է տարածությունում առանցքների ուղղությունը, բայց պահպանվում է նրանց փոխուղղահայացությունը, ինչի հետևանքով մագնիսացման արդյունարար վեկտորի կիրառման կետը ևս



նկ. 2. Մագնիսացման գործընթացում մագնիսական վեկտորների կողմնորոշումները


մնում է անփոփոխ: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ վուգահեռ վեկտորների ուղղությունների՝ միևնույն անկյունով շրջվելու դեպքում դրանց համապոր վեկտորի կիրառման կետը չի փոխում իր դիրքը, եթե այդ վեկտորների կիրառման կետերի դիրքերը չեն փոխ-

վում և պտույտը կատարվում է զուգահեռ առանցքների նկատմամբ: Հետևաբար, արտաքին մագնիսական դաշտը նյութի մագնիսական վիճակը փոխում է այնպես, որ տարրական մագնիսացումների արդյունարար վեկտորը, փոփոխման ենթարկվելով ըստ նշանի, մեծության և ուղղության, չի փոխում իր կիրառման C_m կետի կորոդինատները ֆերամագնիսի նկատմամբ արտաքին մագնիսական դաշտի նշանի, մեծության և ուղղության ցանկացած փոփոխման դեպքում: Արդյունաբար վեկտորի կիրառման կետը կոչվում է մագնիսական կենտրոն: Տարրական մագնիսացումների արդյունարար վեկտորը, որը մագնիսական դաշտի՝ շարքի վերածման ժամանակ հանդես է գալիս որպես այդ շարքի առաջին անդամ, կոչվում է մագնիսական բաղադրիչ կամ մագնիսական երկրենտ (դիպոլ):

Ելնելով մագնիսական կենտրոնի դիրքի անփոփոխության դրույթից և ելքային դեպքից, երբ ֆերամագնիսը մագնիսացած է մինչև հագեցման աստիճան և ամբողջապես վերածվել է մեկ դոմենի, կարելի է պնդել, որ մագնիսական կենտրոնը համընկնում է մարմնի ֆերամագնիսական վանգվածների կենտրոնին: Դա ակնհայտ է կանոնավոր ձևի մարմինների համար, ինչպիսիք են, օրինակ, ձողաձև մագնիսը, մագնիսական սլաքը, գլանը և ձվածրարդը: Սակայն բարդ ձևի և մեծ տարածության իրական մարմինների դեպքում մագնիսական կենտրոնի դիրքը ճշգրտվում է հատուկ չափումներով:

Այսպիսով՝ մարմինների ապամագնիսացման հիմնական պայմանն է կորոդինատների պարտադիր միատեղումը: Դա նշանակում է այդ մարմնի մագնիսական կենտրոնի միատեղում ապամագնիսացնող փաթույթների մագնիսական կենտրոնին, որը նույնպես գրտնըվում է այդ փաթույթների երկրաչափական կենտրոնում (կոնտուրի, սղենոիդի կենտրոնում և այլն) և իր դիրքը չի փոխում դրանցով անցնող հոսանքի մեծության և ուղղության ցանկացած

փոփոխման ժամանակ: Հակառակ դեպքում, կիրառելով մի արտաքին ապամագնիսացնող դաշտ, մենք մագնիսացում կստեղծենք մյուս երկու ուղղություններով և՛ նայած փաթույթի մագնիսական C_m^0 և մարմնի մագնիսական C_m կենտրոնների միջև եղած հեռավորությանը: Նկ. 3-ում պատկերված է այն դեպքը, երբ հոսանքով հորիզոնական



Նկ. 3. Երկայնական մագնիսացման առաջացումը հոսանքով հորիզոնական կոնտուրի ուղղաձիգ մագնիսական դաշտի արդեցությամբ

կոնտուրի ուղղաձիգ մագնիսական դաշտը մագնիսական կենտրոնների փոխշեղվածության հետևանքով առաջացնում է երկայնական մագնիսացում:

Գործնականում հաստատված է մի օրինաչափություն, ըստ որի մարմնից՝ նրա երկարության 2—3 չափին հավասար, իսկ մեծ մասամբ՝ 0,5 չափին հավասար հեռավորությունների վրա մագնիսական դաշտը պայմանավորված է միայն մագնիսական երկրենտի դաշտով, այսինքն՝ մարմնի ձևի բարդության հետ կապված բոլոր հարմոնիկներն արագ մարում են և այդ հեռավորությունների դեպքում արդեն չեն ազդում դաշտի ձևավորման վրա: Նման մի բան նկատվում է նաև ձգողության մեջ: Մարմնի անմիջական մոտակայքում ձգողության ուժի չափման ժամանակ ստեղծվում է մի բարդ պատկեր, որը մերձակա վանգվածների ձգողության արդյունք է: Սակայն հեռավորության աճման համեմատ ձգողության ուժն արդեն արտահայտվում է որպես մարմնի վանգվածների կենտրոնում կիրառված համազոր: ՈՒստի բարդ ձև ունեցող մարմինների մագնիսական դաշտի վերլուծությունը

պետք է սկսել հեռավոր մագնիսական դաշտից՝ այդ մարմնի երկարության 2—3 չափին հավասար հեռավորության վրա: Մինչև այդ հեռավորությունները մագնիսական դաշտը կոչվում է մերձավոր, և նրա համակշռումը չպետք է ազդի հեռավոր, այսինքն՝ երկրեեռային դաշտի վերա, որը հեռավորության համեմատ ավելի դանդաղ է նվազում:

Բացի այդ պետք է հաշվի առնել, որ թույլ մագնիսական դաշտերում, ինչպիսին է ԵՄԳ-ն, այսինքն՝ մագնիսայման կորի սկզբնական գծային հատվածում, դոմենների շեղման և պտտման գործընթացները հետադարձելի են, և արտաքին դաշտի վերապման դեպքում մարմնի մագնիսական դաշտը վերադառնում է իր սկզբնական վիճակին: Մագնիսական դաշտի այդ մասը կոչվում է մակաձևական (ինդուկցիոն) բաղադրիչ:

Ինչպես հայտնի է, Երկրի մագնիսական դաշտն ուղղված է մագնիսական Հարավից դեպի Հյուսիս: Ընդ որում, Երկրի աշխարհագրական հյուսիսային բևեռի մոտ գտնվում է հարավային մագնիսական բևեռը, և հակառակը՝ աշխարհագրական հարավային բևեռի մոտ՝ հյուսիսային մագնիսական բևեռը: Երկրի մագնիսական դաշտի լարվածության ընդհանուր վեկտորը երկրագնդի մակերևույթի ցանկացած կետում կարելի է վերածել ուղղաձիգ Z և հորիզոնական h բաղադրիչների: h բաղադրիչը ֆերամագնիսում առաջանում է այնպիսի մակաձևական բաղադրիչ, որը կախված է հորիզոնական հարթության մեջ մարմնի կողմնորոշումից: Օրինակ՝ դեպի մագնիսական հյուսիս կամ հարավ կողմնորոշման դեպքում մակաձևությունը իր առավելագույն արժեքն է ձեռք բերում երկայնական ուղղությամբ, իսկ մակաձևության լայնական բաղադրիչը O -ի է հավասարվում: Գեպի արևմուտք կամ արևելք կողմնորոշման դեպքում, ընդհակառակը, առավելագույն արժեքն է ստանում լայնական բաղադրիչը: Մագնիսայման կորի սկզբնամասի գծայնությունից ակնհայտորեն բխում է, որ բոլոր միջանկյալ ուղեգծերում մակաձևության

երկայնական բաղադրիչը փոփոխվում է $\cos \varphi$ -ին համեմատ, իսկ լայնականը՝ $\sin \varphi$ -ին համեմատ, որտեղ φ -ն ուղեցույցի մագնիսական սլաքի հյուսիսային ծայրով և օբյեկտով կազմված անկյունն է: Առանձնացնել մակաձևության լայնական ու երկայնական բաղադրիչները կարելի է մագնիսական դաշտի լարվածության հաջորդական չափումով երկու փոխուղղահայաց ուղղություններով (օրինակ, դեպի հյուսիս և արևմուտք) և համապատասխան կետերում չափումների արդյունքների հետագա հանումով: Մակաձևության ուղղաձիգ բաղադրիչը ուղեգծից կախված չէ: Այն ուղղված է ներքևից դեպի վեր (տանկի դեպքում՝ հատակից դեպի աշտարակ) և կախված է միայն աշխարհագրական լայնությունից:

Արտաքին մագնիսական դաշտի հետագա աճման դեպքում դոմենների շեղման և պտտման գործընթացները դառնում են անշրջելի, ինչի հետևանքով մագնիսայման — ապամագնիսայման գործընթացները դառնում են հիստերեզիսային (հապաղումային), այսինքն՝ արտաքին մագնիսական դաշտի արժեքների մինչև 0 նվազելու դեպքում ֆերամագնիսում պահպանվում է հաստատուն մագնիսացում (նկ. 1):

Հիստերեզիսային ապամագնիսացումը հարմար չէ պրոցեսի բարդության և մնացորդային մագնիսայման ցածր կայունության պատճառով: Այդ առումով նախապատվելի է անհիստերեզիսային ապամագնիսացումը, որի դեպքում ֆերամագնիսի սեփական երկբևեռային մագնիսական դաշտը հասցվում է O -ի, երբ բացակայում է արտաքին մագնիսական դաշտը: Գրան կարելի է հասնել նշանափոխ մարող մագնիսական դաշտի կիրառմամբ, որին կուգահեռ կատարվում է նաև Երկրի մագնիսական դաշտի համակշռումը: Նշանափոխ դաշտը, ասես, «խարխլում» է դոմենների մագնիսական կապերը, և դրա հետևանքով անշրջելի գործընթացները վերանում են: Կիսափորձնական ճանապարհով որոշվում է, որ նշանափոխ մարող

դաշտ ստեղծելու համար անհրաժեշտ է, որ փաթույթներում հոսանքի հաճախականությունը լինի 1—3 Հց, իսկ մարման նվազակարգը (դեկրեմենտ), այսինքն՝ մագնիսական դաշտի լարվածության երկու հաշորդական նույնանշան լայնությունների հարաբերությունը, հավասար լինի 1,36-ի:

Մետաղներում (ֆերամագնիսներում) մագնիսայման գործընթացների վերը կատարված բնութագրումները ռազմական տեխնիկայում ապամագնիսայման կիրառման տեսական հիմք են ծառայում: Գործնականում ապամագնիսացումը, ինչպես վերը նշել ենք, վաղուց ի վեր կիրառվում է ռազմական գործում, հիմնականում սուզանավերը հայտնաբերումից պաշտպանելու նպատակով:

Ռավմական տեխնիկայի մագնիսական դաշտերի նվազեցման նշված խնդիրը պետք է ուղղված լինի հետևյալ հիմնահարցերի լուծմանը:

1. Ապամագնիսայման հատուկ ըստենդներն ստեղծում (այդ ստենդները կարող են լինել կա՛մ շարժական, կա՛մ ստացիոնար, կա՛մ էլ միաժամանակ ն՛ շարժական, ն՛ ստացիոնար): Որպեսզի բացառվի անթույլատրելի ներգործությունը չափման և ապամագնիսայման գործընթացի վրա, նշված ստենդները պետք է պատրաստված լինեն ոչ մագնիսական նյութերից: Ստենդները պետք է լրակազմված լինեն անհրաժեշտ միակցիչ սարքերով և մինչև 1000 Ա հոսանք անկրակապող կալարերով (կաբելով):

2. Անհրաժեշտ են հաստատուն հոսանքի աղբյուրներ, որոնց հպորությունը հնարավորություն տա միաժամանակ երկու փաթույթներում էլ մինչև 1000 Ա հոսանքներ ստեղծելու:

3. Անհրաժեշտ են բարձր զգայունության եռաբաղադրամաս մագնիսաչափական սարքեր:

4. Ջրահատեխնիկայի բարդ ուրվապատկերը, եզրանց մասերի, օրինակ՝ հրանոթային փողերի առկայությունը բացառում են մերձավոր մագնիսական դաշտերը մինչև ընդունելի սահմաններ նվազեցնելու հնարավորությունը: Հա-

կատանկային ականները նախատեսված են անմիջականորեն տանկի հատակի տակ պայթելու համար, այսինքն՝ մի քանի տասնյակ սանտիմետր հեռավորության վրա: Այդ հեռավորությունների պայմաններում գործնականում անհնարին է մագնիսական դաշտն այնքան նվազեցնել, որ նա դառնա ականի մագնիսական կապուղու զգայունության շեմային արժեքից փոքր: Ուստի խոսք կարող է լինել միայն երկբևեռային բաղադրիչի համակշռման մասին, այսինքն՝ տանկի իրանից 5—7 և ավելի մետր հեռավորության մասին՝ լրահատեխնիկան հրթիռների ինքնուղորդման և անբամագնիսաչափական հայտնաբերման սարքերից պաշտպանելու համար:

5. Ապամագնիսայման ստենդները պետք է հնարավորություն տան՝

— հոսանքով փաթույթների միջոցով ստենդի մագնիսական կենտրոնում երկրի մագնիսական դաշտի ուղղաձիգ և հորիզոնական բաղադրիչները մինչև 0-ական արժեք համակշռելու,

— ստենդի մագնիսական կենտրոնը զրահատեխնիկայի մագնիսական կենտրոնի հետ համատեղելու,

— հուսալի կերպով չափելու մագնիսական դաշտի երկբևեռային բաղադրիչները և ապամագնիսայված տեխնիկայի մագնիսական կենտրոնի դիրքը,

— նշանափոխ մարդ մագնիսական դաշտի ներգործությամբ կատարելու ապամագնիսացում՝ միաժամանակ համակշռելով երկրի մագնիսական դաշտը և այդպիսով երկբևեռային մոմենտի հաստատուն բաղադրիչը մինչև 0 նվազեցնելով:

6. Մակածական բաղադրիչների համակշռման համար սկզբունքորեն պետք են զրահատեխնիկայի վրա ստացիոնար տեղակայված փաթույթներ՝ օժտված այնպիսի ավտոմատ կառավարող սարքերով, որոնք հնարավորություն տան դրանցով բաց թողնելու հաստատուն հոսանք, որը երկայնական և լայնական փաթույթներում փոխվի, համապատասխանաբար, $\cos \varphi$ -ի և $\sin \varphi$ -ի օրենքով, իսկ

հորիզոնական փաթույթում՝ աշխարհագրական լայնությանը համապատասխան, այսինքն՝ ըստ Երկրի մագնիսական դաշտի ուղղաձիգ բաղադրիչի մեծության: Սակայն գործնականում արյւսիս կոնստրուկտորական լուծումն անիրագործելի է, ուստի առավել հարմար լուծում կարող են դառնալ ուղղաձիգ բա-

ղադրիչի վերահամակշռումը (ոչ լիահամակշռումը)՝ նախատեսվող մարտական գործողությունների վայրի աշխարհագրական լայնության հաշվառումով, ինչպես նաև շարժման գերադասելի ուղեգծերի վերաբերյալ վրահատելիսիկայի հրամանատարներին սրվող հանձնարարականները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Фейнман Р., Лейтон Р., Сэнгт М. Фейнмановские лекции по физике, вып. 7. Физика силовых сред. М., «Мир», 1966.
2. Парселл Э. Электричество и магнетизм. Берклеевский курс физики, т. II. М., «Наука», 1975.
3. Вонсовский С. В. Магнетизм. «Наука», 1984.
4. Латышев А. П. Теория размагничивания ч. I. ВМА, 1960.
5. Овакимян А. Т. Методика анализа магнитных полей кораблей. ВМФ, 1983.

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

ЗАЩИТА ВОЕННОЙ ТЕХНИКИ ОТ ОБНАРУЖЕНИЯ И ПОРАЖЕНИЯ ПО МАГНИТНЫМ ПОЛЯМ

А. Т. ОВАКИМЯН, подполковник

РЕЗЮМЕ

Средства поражения и обнаружения военной техники по магнитным полям получают в последнее время все большее распространение. Магнитные каналы используются во взрывателях противотанковых мин, в минометных минах, аппаратах самонаведения и взрывателях ракет, а применение высокочувствительных аэромагнитометров позволяет эффективно обнаруживать скопления замаскированной техники.

Источниками статических магнитных полей военной техники являются ферромагнитные конструкции, которые, намагничиваясь в магнитном поле Земли (МПЗ), искажают его, вызывая локальные магнитные аномалии.

Как известно, магнитные свойства всех веществ обуславливаются, в основном, спиновыми и, частично, орбитальными моментами электронов. Спиновые моменты электронов ориентированы параллельно друг относительно друга. Благодаря особенностям молекулярного строения, в ферромагнитных материалах энергетически выгодным становится состояние, при котором все вещество разбивается на так называемые домены размером около $10^{-3} - 10^{-4}$ мм, в которых все магнитные моменты направлены в одну сторону и которые намагничены до насыщения.

Исходя из минимума энергии, домены в кристаллах ориентируются друг относительно друга параллельно, антипараллельно или под углом 90° . Подобная ориентация за счет взаимодействия распространяется на соседние кристаллы и, в конечном итоге, на всю толщу ферромагнетика. В размагниченном состоянии суммарный вектор намагничивания равен нулю.

С приложением внешнего магнитного поля H начинаются преимущественно процессы смещения, при которых домены, в которых направление намагниченности близко к направлению внешнего поля, разрастаются за счет поглощения соседних, менее выгодно ориентированных доменов.

С увеличением напряженности внешнего магнитного поля H начинают преобладать процессы вращения, т. е. поворота векторов намагниченности доменов в направлении приложенного поля. При сильных полях весь ферромагнетик превращается как бы в единый большой домен.

При дальнейшем увеличении поля наблюдается небольшое увеличение намагничения ферромагнетика за счет парапроцесса, т. е. за счет доворачивания по внешнему полю атомных магнетиков, дезориентированных тепловыми процессами.

При процессах смещения меняются по величине и направлениям суммарные векторы намагничения I_x , I_y , I_z , а значит, и результирующий вектор I , однако точка приложения вектора I остается неизменной.

При процессах вращения меняется направление осей в пространстве, но сохраняется их взаимная перпендикулярность, за счет чего точка приложения результирующего вектора намагничения также остается неизменной. Следовательно, внешнее магнитное поле меняет магнитное состояние вещества так, что результирующий вектор элементарных намагничений меняется по знаку, величине и направлению, но точка его приложения, называемая магнитным центром, сохраняет свои координаты неизменными относительно ферромагнетика при любом изменении внешнего магнитного поля. Результирующий вектор элементарных намагничений называется дипольной составляющей или магнитным диполем.

Из неизменности положения магнитного центра и краевого случая, когда ферромагнетик намагничен до насыщения и превращен целиком в один домен, следует, что магнитный центр располагается в центре ферромагнитных масс тела. Это очевидно для тел правильной формы. Однако у реальных тел сложной формы и большой протяженности положение магнитного центра уточняется по специальным измерениям.

Таким образом, основное условие размагничивания — совмещение координат, т. е. совмещение магнитного центра тела с магнитным центром размагничивающих обмоток, совпадающим с их геометрическим центром.

Уже на расстояниях в 2–3 глины от тела (в большинстве случаев — на расстояниях в 0,5 глины) магнитное поле определяется полем магнитного диполя, т. е. высшие гармоники, связанные со сложностью формы, быстро убывают, на этих расстояниях не оказывая влияния на формирование поля. Следовательно, анализ магнитного поля тел сложной формы необходимо начинать с дальнего магнитного поля, т. е. с расстояния в 2–3 глины тела. До этих расстояний магнитное поле называется ближним и его компенсация не влияет на дальнее (дипольное) поле, медленнее убывающее с расстоянием.

Сложная конфигурация бронетехники, наличие выступающих частей, например, оружейных стволов, исключает возможность снижения ближних магнитных полей до приемлемых уровней. Противотанковые мины рассчитаны на срабатывание непосредственно под днищем, т. е. на расстоянии нескольких десятков сантиметров от корпуса бронетехники. На этих расстояниях нереально снизить величину напряженности магнитного поля до значений ниже порога чувствительности магнитного канала мины. Речь мо-

жет идти только о компенсации его дипольной составляющей, т. е. о расстояниях в 5—7 м и более от корпуса с целью защиты от аппаратуры самонаведения ракет и аэромагнитометрического обнаружения.

Исходя из изложенного, стенки размагничивания должны позволять:

— с помощью обмоток с токами компенсировать до нуля вертикальную и горизонтальную составляющие магнитного поля Земли в магнитном центре стенда;

— совмещать магнитный центр стенда с магнитным центром бронетехники;

— надежно измерять дипольные составляющие магнитного поля и положение магнитного центра размагничиваемой техники;

— производить размагничивание с помощью знакопеременного затухающего магнитного поля при одновременной компенсации магнитного поля Земли.

MILITARY ENGINEERING

THE PROTECTION OF MILITARY EQUIPMENT FROM SPOTTING AND NEUTRALIZATION BY MAGNETIC FIELDS

A. T. HIOVAKIMIAN, Lieutenant-Colonel

SUMMARY

The means of destruction and the discovery of military equipment by magnetic fields have become common lately. Magnetic channels are used in the fuses of anti-tank mines, mortar mines, self-guided equipment and the fuses of missiles. The use of highly-sensitive aerial-magnetic meters, however, makes it possible to efficiently find concentrations of camouflaged equipment.

The sources of static magnetic fields of military equipment are ferro-magnetic bodies, which are magnetized by the magnetic field of the Earth. This causes distortions, causing local magnetic anomalies.

The magnetic characteristics of substances are conditioned by the spin and partly, by the orbital moments of electrons. The spin-moments of electrons are oriented in parallel. The special features of the molecular construction of ferro-magnetic materials are such that it is energetically profitable to break up the whole into individual domains (measuring about 10^{-3} to 10^{-4} mm) in which all the magnetic moments are aligned and fully magnetized.

On the basis of minimal energy, the domains in the crystals are oriented in parallel, in anti-parallel or at an angle of 90° .

Such an orientation spreads to neighboring crystals and finally, to the whole mass of the ferro-magnetic substance.

In the de-magnetized condition, the total vector of the magnetized material is equal to zero.

With the application of an external magnetic field H , the processes of displacement start, during which the domain progressively approximates the orientation of the external field. The domains develop by subsuming the neighboring, more weakly oriented, domains.

With an increase of the intensity of an external magnetic field H , the processes of rotation predominate. The vectors of the magnetized domains are oriented in the direction of the applied field. Under strong fields, the whole ferro-magnetic mass converts to an indivisible, large domain.

With a further increase of the field, the magnetization process increases a little at the expense of the larger process: the final rotation along the external field of the atomic magnets which are disorientated by heating processes.

During the processes of displacement, the total vectors of magnetization I_x , I_y , I_z change their value and direction. The resultant vector I also changes, therefore, though the application point of vector I remains unchanged.

During the processes of rotation, the orientation of the axes changes in space. They remain, however, orthogonal thereby ensuring that the application point of the resultant vector of magnetization also remains unchanged.

Consequently, the external magnetic field changes the magnetic condition of a substance on such a way that the resultant vector of elementary magnetization changes sign, value and direction, but its application point—called the magnetic center—maintains its coordinates regardless of the variation of the external magnetic field. The resultant vector of elementary magnetization is called a dipole constituent, or magnetic dipole.

On the basis of an invariable localized magnetic center, and on reaching the limiting condition of a fully magnetized body made up of just one domain, it follows that the magnetic center is situated in the center of the ferro-magnetic mass. This is obvious for regularly shaped bodies. But real bodies with irregular forms have a magnetic center which is subject to specific dimensions and forms.

The main condition for de-magnetization, therefore, is the required relationship of the body's magnetic center to the center of the de-magnetization windings: the coordinates of these two centers must coincide in space.

Practically, at a distance of two or three times the dimensions of the body (or half the dimensions of the mass) the magnetic field is determined by the field of the magnetic dipole. All the high harmonics, connected with the form's irregular shape, decrease rapidly and, at these distances, do not influence the creation of the field.

Consequently, it is necessary to begin the analysis of an irregularly shaped body's magnetic field, from the farthest field to a distance equivalent to two to three times the length of the body. This latter range is considered to be proximal, and its compensation does not influence the distant one. This dipole field decreases more slowly with distance.

The complex, irregular configuration of armored equipment, the presence of projections (for example, gun barrels) exclude the possibility of decreasing the proximal magnetic fields to acceptable levels. Anti-tank mines are designed for use just below the bottom of the tank: at a distance of a few tens of centimeters from the body of the armored equipment. At these distances it is impractical to decrease the intensity of the magnetic field to values below the sensitivity of the mine's magnetic channel. One may consider only the compensation of its dipole constituent. This is equivalent to the distance of at least five to seven meters from the body so as to protect it from self-guided missiles and spotting by aerial magnetic equipment.

Based on the above, the array of de-magnetization equipment must:

- decrease (with the help of electric current windings) to zero the vertical and horizontal components of the Earth's magnetic field in the array's magnetic center,*
- coincide the array's magnetic center with that of the armored equipment,*
- reliably measure the dipole constituents of the magnetic field and the location of the magnetic center of the de-magnetization equipment, and*
- iteratively de-magnetize the magnetic field while simultaneously compensating for the Earth's magnetic field.*

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐԱԵՐԿՐԱԲԱՇԽԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԵՐԶԱԿԱ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Ա. Ն. ԱԶԻԶՅԱՆ, փոխգնդապետ, Ա. Ռ. ԴԱՎԹՅԱՆ, կապիտան

Հայաստանի տարածքում ռազմական տեղագրության ու քարտեզագրության բնագավառում կատարված հետազոտությունների մասին խոսելիս անհրաժեշտ է ուրվագծել Ռուսաստանում ռազմական տեղագրության ու քարտեզագրության եւ տեղագրական պորամաների ստեղծման պատմությունը, քանի որ Հայաստանի վերջին դարերի պատմությունը սերտորեն միահյուսված է Ռուսաստանի պատմության հետ:

Ռազմական նպատակներով տեղանքի ուսումնասիրում կատարվել է դեռևս վաղ անցյալում, այդ թվում եւ Հին Ռուսիայում: Այն ժամանակներում չափերով ոչ մեծ ռազմադաշտը դիտարկվում էր մեկ-երկու դիտակետից: Չորսպետը կարող էր անձամբ տեսնել ու գնահատել հակառակորդի ուժերը, տեղանքը, սեփական պորքերին և հրամաններ արձակել՝ ղեկավարվելով տեղանքում գտնվող կողմնորոշիչներով: Տեղանքի մասին փաստաթղթեր այն ժամանակներում համարյա չէին կազմվում: Սակայն պորքերի տեղաշարժ կազմակերպելու համար անհրաժեշտ էին տրվյալներ տեղանքի բավականաչափ մեծ հատվածների անցանելիության և տեղաշարժի երթուղիներում գոյություն ունեցող կողմնորոշիչների վերաբերյալ, ինչպես նաև հակառակորդի դիրքերի թաքնված մատույցների, ջրամատակարարման և այլ գործոնների վերաբերյալ: Տեղաշարժի ժամանակ լայնորեն օգտվում էին տեղանքին լավ ծանոթ պորայտնավարների ծառայությունից:

Հրապենի ստեղծման հետ արմատապես փոխվեց ռազմական գործողությունների վարման ձևը, ընդարձակվեցին

ռազմադաշտի սահմանները: Մարտի մասին որոշում մշակելու, պորքերի դիրքերը և դասավորությունը ընտրելու, պորքերի կառավարումը կազմակերպելու համար անհրաժեշտ դարձավ բավապահի տրվյալներ ունենալ տեղանքի մեծ շրջանների մասին: Հրապենի լայն կիրառության հետ կապված՝ ծագեց տեղանքի ամրաշինական սարքավորման անհրաժեշտություն, որն իր հերթին հանգեցրեց ռազմական ճալտարագործության առաջացմանը: Առաջ եկավ նաև տեղանքի առանձին հատվածների, հատկապես քաղաքների շրջանների և բերդերի հատակագծերի ու գծապատկերների մշակման անհրաժեշտություն: Ռուսաստանի տարածքի մեծ մասի առաջին ընդհանուր քարտեզը կազմվեց XVI դ. երկրորդ կեսում: Այն կոչվեց «Մեծ գծագիր»: Սակայն գծագրերի, հատակագծերի և քարտեզների ստեղծումն այն ժամանակ կրում էր դեռևս անկանոն բնույթ:

Ռուսաստանում պլանավորված քարտեզագրումն ու տեղանքի մասին տրվյալներով պորքերի կազմակերպված ապահովումն սկսվեցին Պյոտր I-ինի դարաշրջանում: Այդ ժամանակ երկրի տարբեր տարածաշրջաններ ուղարկվեցին հատուկ արշավախմբեր, որոնց առջև քարտեզներ ստեղծելու խնդիր էր դրված: Կազմվեցին աստղագիտական-երկրաբաշխական և տեղագրական աշխատանքների վարման առաջին հրահանգները: Չորքերի տեղաշարժի երթուղիների, դիրքերի, ռազմադաշտի գծահանման աշխատանքներ կազմակերպելու համար բանակների և այլ պորամիավորումների հրամանատարների տրամադրության տակ դրվեցին պորաբնա-

կարանային կորամասի և ճարտարագործական կորպուսի սպաներ¹:

1797 թ. ստեղծվեց քարտեզների դեպոն: Դրանով իսկ սկզբնավորվեց ոչ միայն ռուսական բանակի ռազմատեղագրական ծառայությունը (ՌՏՕ), այլև ողջ Ռուսաստանի տեղագրաբերկրաբաշխական ծառայությունը: Քարտեզների դեպոնին կից կազմակերպվեց տեղանքի վերաբերյալ այնպիսի փաստաթղթերի հրատարակումը, որոնք մինչ այդ հրատարակվում էին արտասահմանում: 1800 թ. քարտեզների դեպոնին կցվեց գիտությունների ակադեմիայի աշխարհագրական դեպարտամենտը: 1810 թ. քարտեզների դեպոն դրվեց վիսլորական նախարարության ենթակայության տակ, իսկ 1812 թ. վերանվանվեց ռազմատեղագրական դեպոն:

1816 թ. սկսվեցին երկրաբաշխության սկզբունքների հիման վրա կազմակերպվող մեծամասշտաբ գծահանումներ: 1821 թ. մշակվեց քարտեզների և հատակագծերի դասակարգման համակարգ: 1822 թ. ռազմատեղագրական դեպոնի հետ մեկտեղ գլխավոր շտաբին առընթեր ստեղծվեց փնվորական տեղագրագետների կորպուսը, որի վրա դրվեց երկրաբաշխական և տեղագրական աշխատանքների կատարումը բանակի համար: Մասնագետներ պատրաստելու նպատակով նույն թվականին փնվորական տեղագիրների կորպուսին առընթեր բացվեց տեղագրական ուսումնարան: Կորպուսի համար բարձրագույն որակավորման կադրերի պատրաստում կազմակերպվեց նաև Դորպատի համալսարանում (1824 թ.) և Պոլկովոյի աստղադիտարանում (1838 թ.): 1854 թ. գլխավոր շտաբի փնվորական ակադեմիայում բացվեց երկրաբաշխական բաժին, որտեղ ուսուցումը տևում էր 4 տարի:

Ջինվորական տեղագիրների կոր-

¹ Այստեղ օգտագործված է լեվաբանական բառարանների կողմից հանձնարարվող «գծահանում» տերմինը, թեև գրականության մեջ օգտագործվում է նաև «սանույթ» տերմինը (տես, օրինակ՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 11, էջ 645):—*Խմբ.*

պուսը տեղագրաբերկրաբաշխական առումով ռազմական գործողությունների թատերաբեմերի վաղորոք պատրաստման աշխատանքներին կուզահեռ լուծում էր նաև կորբերի ռազմական գործողությունների տեղագրաբերկրաբաշխական ապահովման խնդիրը: Կորպուսի կազմում ստեղծված տեղագրական և երկրաբաշխական ջոկատները հաջողությամբ մասնակցեցին ռուս-պարսկական (1826—1828 թթ.), ռուս-թուրքական (1828—1829 թթ.) և Ղրիմի (1853—1856 թթ.) պատերազմներին:

XIX դարի առաջին կեսում տեղագրական աշխատանքներ սկսվեցին Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանի այն շրջաններում, որոնք մտնում էին Ռուսական կայսրության կազմի մեջ: Սակայն աշխատանքների մեծ մասը կատարվում էր աչքաչափային և կիսագործիքային եղանակով: Միայն 1828 թ. Կովկասում սկսվեցին պարբերական գրծահանումներ, երբ Կովկասյան բանակի կազմում ընդգրկվեց և Անդրկովկասի առանձին շրջանների գծահանման ուղղությամբ աշխատանքներ սկսեց այդ նպատակով ուղարկված հատուկ տեղագրական ջոկատը: Նույն նպատակով 1832 թ. շտաբին առընթեր ստեղծվեց նաև տեղագիրների վաշտ: Գծահանման աշխատանքների ժամանակ (դրանք հիմնականում կատարվում էին տեղագրական գործիքների կիրառմամբ) նախ և առաջ կազմվում էր երկրաբաշխական ցանցը. դա արվում էր չափված բազիսների հիման վրա: Այնուհետև հաղորդակցման գլխավոր ուղիները և գետերի հունները գծահանվում էին գործիքային եղանակով: Ընդամենի մանրամասների գծահանումը տարածվում էր ճանապարհների երկու կողմի վրա (մինչև 3 կմ), իսկ ճանապարհների միջև եղած տարածությունները գծահանվում էին աչքաչափային եղանակով:

Կախված շրջանի կարևորությունից՝ կիրառվում էին գծահանման 1:21000, 1:42000, 1:84000 մասշտաբներ, քաղաքների և բերդերի հատակագծերի համար կիրառվում էին 1:11800 և ավելի մեծ

մասշտաբներ: Կովկասի (այդ թվում Հայաստանի տարածքի) գծահանման յուրահատկությունն այն էր, որ դա իրականացվում էր գործիքային եղանակով, իսկ ռելիեֆը պատկերվում էր հորիզոնականներով (սկսած 60-ական թթ.):

Անդրկովկասում 1835—1846 թթ. ընթացքում տեղագրական գծահանման ենթարկվեց մոտ 247000 կմ² մակերեսով տարածք: Այդ աշխատանքներում մեծ դեր խաղացին Ի. Ի. Խոճկոն և Ի. Ի. Ստեփանյանը:

Քարտեզագրման առումով Կովկասի տարածքը քարտեզներում իր պատկերումն ստացավ նույնպես XIX դարի առաջին կեսում: 1819 թ. Թիֆլիսում լույս ընծայվեց Վրաստանի «Մանրամասն քարտեզը»՝ բաղկացած 12 թերթից: Այն 1817 թ. կազմվել էր փոխգնդապետ Վերխովսկու կողմից և 1819 թ. փորագրվել էր գլխավոր շտաբին առընթեր ռազմատեղագրական դեպոյում: Այդ քարտեզում Վրաստանի հեն մեկտեղ ներկայացված էին նաև նրան միակցված հողերը: Քարտեզի մասշտաբը մեկ մատնաչափում 15 վերստ էր, հրատարակությունը բազմազույն էր, նշված էին քաղաքները, գյուղերը, այլ բնակավայրեր, վարչական սահմանները, հաղորդակցության ուղիները:

1823 թ. Ս. Բրոննակին հրատարակեց Կովկասի հողերի քարտեզը, որում ընդգրկված էր նաև Մեծ Հայքի մի մասը: 1834 թ. Կովկասյան կորպուսի գլխավոր շտաբում կազմվեց «Կովկասյան երկրամասի քարտեզը»՝ մեկ մատնաչափում 20 վերստ մասշտաբով: Այս քարտեզում պատկերված էին նաև սահմանակից տարածքները: 1838 թ. հրատարակվեց 24-թերթանոց «Կովկասյան երկրամասի մանրամասն քարտեզը»՝ 10-վերստանոց մասշտաբով, այն կազմված էր գեներալ Խովսկի ղեկավարությամբ: Քարտեզը վերահրատարակվեց 1842 թ.՝ մեկ մատնաչափում 5 վերստ մասշտաբով:

Բացի այդ, Թիֆլիսում XIX դ. 40—60-ական թվականներին լույս տեսան Կովկասի, նրա առանձին տարածքների և սահմանակից պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի մի քանի քար-

տեզներ. 1842 թ.՝ մեկ մատնաչափում 20 վերստ, 1843, 1847 և 1854 թթ.՝ մեկ մատնաչափում 10 վերստ, 1852 և 1865 թթ.՝ մեկ մատնաչափում 5 վերստ մասշտաբներով:

Այս գործին էապես նպաստեց այն հանգամանքը, որ դեռևս 1854 թ. Կովկասյան բանակին առընթեր ստեղծվել էր տեղագրական բաժին: Այնուհետև նման բաժիններ ստեղծվեցին մեծ թրվով վինվորական օկրուգներում: 1863 թ. ռազմատեղագրական դեպոյն վերանվանվեց գլխավոր շտաբի ռազմատեղագրական մաս, այնուհետև՝ գլխավոր շտաբի ռազմատեղագրական բաժին (ՌՏԲ), որը դարձավ տեղագրաերկրաբաշխական աշխատանքների պլանավորման և կազմակերպման կենտրոնական մարմին: 1863 թվականից վինվորական տեղագրիչների կորպուսը դարձավ Ռուսաստանում միակ կազմակերպությունը, որն ընդհուպ մինչև 1918 թ. կատարում էր տեղագրական, երկրաբաշխական և քարտեզագրական աշխատանքներ: XIX դարի երկրորդ կեսում նոր տեխնիկայի (օրինակ՝ կիպրեզել հեռաչափի) և տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ էապես աճեցին քարտեզագրության տեմպերը և բարելավվեց քարտեզների որակը. դրանք դարձան ավելի ճշգրիտ, ակնառու և դյուրընթեռնելի: Ռուսաստանում առաջին անգամ քարտեզների վրա ռելիեֆն արտահայտվեց հորիզոնականների միջոցով:

Քուրախի և Բաքվի նահանգներում տեղագրական գծահանումներ սկսվեցին 1866 թ.: Այստեղ գծահանումներն արվում էին սեղանի եղանակով, որի համար անհրաժեշտ է առնվազն 3 հենակետերի առկայությունը: Հատակագծերում ռելիեֆն արտահայտված էր հորիզոնականների միջոցով՝ 5 սաժեն հեռավորությամբ հատվածքներով: Կիրառվում էին գծահանումների հետևյալ մասշտաբները. բնակավայրերի համար՝ 1:16800, լեռնային շրջանների ջրակեցված տեղերի համար՝ 1:42000, լեռներում անմատչելի տեղերի համար՝ 1:84000:

1870-ական թվականներին սկսվեցին

նան Բաթումի և Կարսի շրջանների գծահանումները՝ 1:42000 մասշտաբով: Այս աշխատանքներն ավարտվեցին արդեն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո:

Ի դեպ, Հայաստանի, նրա աշխարհագրական առանձնահատկությունների նկատմամբ Ռուսաստանի ռազմական հատուկ հետաքրքրությունը հասկանալի է դառնում ռուսական բանակի գլխավոր շտաբի գնդապետ Վիբերգի հետևյալ հետաքրքիր բնութագրության շնորհիվ. «Հանդիսանալով լեռնային, բավականին կտրտված սարավանդ, որը գերիջուում է Ասիական Թուրքիայի մյուս բաժինների վրա, և գտնվելով այդ բաժիններն իրար հետ միացնող բոլոր ուղիների հանգույցում՝ Հայաստանը կազմում է ասես մի կողպեք, որը եզրափակում է թուրքական տերությունները Փոքր Ասիայում և արգելակում է Ռուսաստանի մուտքն այնտեղ. այդ կողպեքի կախարդական բանալին էրպրումն է»²:

1868 թ. կազմվեց և Թիֆլիսում հրատարակվեց Կովկասի քարտեզը՝ մեկ մատնաչափում 40 վերստ մասշտաբով: Դրա նախաձեռնողներն էին Կովկասի պինվորական օկրուգի ռազմատեղագրական բաժինը և աշխարհագրական ընկերության կովկասյան բաժինը, աշխատանքները կատարվում էին Ի. Ի. Ստեբնիկովու ղեկավարությամբ:

1869 թ. Կովկասի պինվորական օկրուգի ՌՏԲ-ն Թիֆլիսում հրատարակեց Կովկասի քարտեզները՝ մեկ մատնաչափում 10 վերստ մասշտաբով, 22 թերթի վրա, 5 վերստ մասշտաբով՝ 55 թերթի վրա: 5-վերստանոց քարտեզներ հրատարակվեցին նաև 1871 թ. (28 թերթանի) և 1892 թ. (58 թերթանի):

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին ռազմական գործողությունների թատերաբեմը ապահովված էր հիմնականում փոքրա-

մասշտաբ քարտեզներով: Մեծամասշտաբ քարտեզներ, հակառակորդի պորքերի տեղաբաշխման շրջանների քարտեզներ, թուրքական բերդերի հատակագծեր, գրաֆիկական փաստաթղթեր ըստ պորքերի շարժման երթուղիների և Դանուբի ու ջրային այլ արգելքների գետանցների տեղապնման արդյունքների պետք եղավ ստեղծել արդեն ռազմական գործողությունների ընթացքում: Այդպես սկիզբ դրվեց հատուկ քարտեզների ու մարտական գրաֆիկական փաստաթղթերի ստեղծմանը և դրանցով պորքերի ապահովմանը: Այս պատերազմում առաջին անգամ ռուս պինվորական տեղագիրներ Ռեուտովը և Մեմյոնովը իրագործեցին հրետանու կրակի տեղագրական նախապատրաստումը:

Ռուս պինվորական տեղագիրները պատմության մեջ առաջինը տեղագրական քարտեզների վրա հրետանային ցանց վրադրեցին, ինչն էականորեն հեշտացրեց նշանապույման գործը: Ի դեպ, ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում առաջին անգամ կատարվեց հակառակորդի դիրքերի և տեղանքի օդարուսանկարահանում օդապարիկներից: Դրա նախաձեռնողը ևս ռուս սպա էր՝ Վ. Ֆ. Նայդյոնովը:

Ռուս-թուրքական պատերազմը մեկ անգամ ևս ապացույցեց այն աշխատանքների կարևորությունը, որոնք կատարվում են ռազմական գործողությունների թատերաբեմը տեղագրական առումով նախապես պատրաստելու ժամանակ, ինչպես նաև պորքերի մարտական գործողությունների տեղագրաբերկրաբաշխական ապահովման նպատակով: Չինվորական տեղագիրների կորպուսի այն աշխատանքները, որոնք իրագործվեցին պատերազմի նախօրեին և ընթացքում, տեսական և գործնական կարևոր եզրակացությունների հիմք դարձան:

1890-ական թվականներին Անդրըկովկասում շարունակվեցին քարտեզագրական աշխատանքները: Չինվորական օկրուգի ՌՏԲ-ն ձեռնամուխ եղավ 2-վերստանոց քարտեզի կազմմանը, որի համար հիմք ծառայեցին 1-վերստանոց

² Вибегр. Военно-географическое и статистическое описание Кавказского военного округа. Стратегический очерк Кавказско-турецкого театра военных действий. Тифлис, 1911, с. 32.

գործիքային գծահանումները: Առանձին տարածքների տարբեր քարտեզներից բացի, հրատարակվեցին նաև օտար երկրների տարածքների «ժամանակավոր» հրատարակության քարտեզներ: Գրանց համար հիմք ծառայեցին արտասահմանյան երկրների քարտեզները: Այդ եղանակով կովկասյան ՌՏԲ-ն վերահրատարակեց Ասիական Թուրքիայի 1:2520000 մասշտաբի անգլիական քարտեզը, 1905—1915 թթ.՝ Փոքր Ասիայի (արևելյան մասի) 6-թերթանի քարտեզը՝ 10-վերստանոց մասշտաբով: Արևմտյան մասի քարտեզը 9 թերթի վրա նախապատրաստվեց Պետրոգրադում՝ Փոքր Ասիայի գերմանական քարտեզի հիման վրա: Քարտեզների նկատմամբ Կովկասյան ռազմաձևարտի մուսայած պահանջումները բավարարվում էին տեղում՝ կովկասյան ՌՏԲ-ի կողմից:

Հարկ է նշել, որ XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակներում ռազմական գործողությունների կովկասաթուրքական թատերաբեմում ինչպես գլխավոր շտաբի, այնպես էլ Կովկասի պինվորական օկրուգի շտաբի սպաների կողմից կատարվեցին բազմաթիվ ռազմատեղագրական հետազոտություններ, որոնք լույս էին տեսնում «Կովկասի պինվորական օկրուգի ռազմաաշխարհագրական և վիճակագրական նկարագրություն: Ռազմավարական ակնարկ» խորագրով: Գրանցում ոչ միայն տրվում էր Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի աշխարհագրական և տեղագրական խոսքային նկարագրությունը, այլև վերլուծվում էին սպասվող բախման երկու կողմերի՝ Ռուսաստանի և Թուրքիայի ռազմական գործողությունների հնարավոր ռազմավարական տարբերակները, նրանց ուժեղ և թույլ կողմերը, ռուսական բանակի մատակարարման հարցերը և այլն: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ապագա մարտնչող բանակների նկատմամբ բնակչության (հատկապես Արևմտյան Հայաստանում և սահմանամերձ գոտում) սպասվելիք վերաբերմունքին և հնարավոր աջակցությանը: Գրա վերաբերյալ համընդհա-

նուր եզրակացությունը համընկնում էր գլխավոր շտաբի գնդապետ Վիբերգի այն կարծիքին, որ «հայ բնակչությունը, որին Թուրքիան դրել է առաջին հարվածի տակ, ռուսական տիրապետության 35 տարիների ընթացքում ձեռք բերած տնտեսական հաջողությունների համար քրդերի արյունարբու վրեժխրդությունը պայմաններում, բնականաբար, միավորման է ձգտում: «Գաշնակցություն» կուսակցության ջանքերով սահմանամերձ գոտու ողջ հայ բնակչությունը համախմբվեց՝ կազմելով մի ամբողջություն, և ստացավ մարտական կազմակերպում: Այդ հայկական միլիտիական [իմա՝ ժողովրդական, աշխարհագրային] բանակի գաղտնի գոյություն ունեցող, գաղտնի վարժեցվող «շարային զորամասերը», անտարակույս, օժտված են հակակառավարական կազմակերպության հատկանիշներով...Սակայն, գտնվելով անմիջականորեն սահմանի մոտակայքում և իր գոյությունը փրկելով քրդական ասպատակության սարսափներից, հայերը դժբախտով իսկ դառնում են մեր պետական սահմանի համար առաջին մարտնչողները»³:

1919-ից մինչև 1941 թ. տեղի էր ունենում ռազմատեղագրական ծառայության ձևավորում ԽՍՀՄ-ում. պինվորական տեղագիրները և երկրաբաշխագետները մեծ ծավալով աշխատանքներ կատարեցին նախապատերազմյան տարիների կառույցներում:

1923 թվականից ռազմատեղագրական ծառայությունը ձեռնամուխ եղավ մետրական համակարգի և մասշտաբային նոր շարքի կիրառմամբ քարտեզների կազմմանը, 1925 թվականից՝ մեծամասշտաբ քարտեզների բազմակի հրատարակմանը, իսկ 1927 թվականից սկսեց ներդրել օդալուսատեղագրական նկարահանման համակցված եղանակը: 1928 թ. ընդունվեց բարձրությունների միասնական համակարգ երկրի ամբողջ տարածքի համար: 1932 թ. ստեղծվեց մի փորձնական տեղագրական մոտոցոկատ, որը հատուկ նախատեսված էր փոքրերի

³ Վիբերգ, նշ. աշխ., էջ 24:

մարտական գործողությունների տեղագրաներկրաբաշխական ապահովման հարցերի հետազոտման և մշակման համար:

Ռազմատեղագրական ծառայությունը ընդհանուր առմամբ պատրաստ էր պատերազմի դաժան փորձություններին: Պատերազմի նախօրեին ծառայության մարմինները, պորամասերը և հիմնարկությունները համալրված էին բարձր որակավորում ունեցող կադրերով:

1941—1945 թթ. պատերազմի ընթացքում ռազմատեղագրական ծառայությունը հաջողությամբ լուծեց պորքերի մարտական գործողությունների տեղագրաներկրաբաշխական ապահովման բոլոր խնդիրները:

Պատերազմի տարիներին ռազմաճակատների տեղագրական ծառայությունները կատարեցին հետևյալ աշխատանքները.

— հրատարակեցին 38 մլն. օրինակ քարտեզներ և գրաֆիկական փաստաթղթեր,

— պորքերի ապահովման նպատակով ռազմատեղագրական ծառայության թիկունքային պահեստներից ստացան 468,2 մլն. օրինակ տեղագրական քարտեզներ, որոնցից 329 միլիոնը հանձնեցին պորքերին,

— որոշեցին 168 հազ. տեղագրաներկրաբաշխական և հրետանային կետեր,

— իրականացրին հրետանու մարտակարգի 62 հազ. տարրերի կապակցում,

— կատարեցին հրետանու համար 30 հազ. նշանակետերի, հենանիշերի և կողմնորոշիչների հավաստանշում,

— ապագադրականացրեցին 563 հազ. օդալուսանկար:

Պատերազմի տարիներին ռազմատեղագրական ծառայությունը ձեռք բերեց պորքերի մարտական գործողությունների տեղագրաներկրաբաշխական ապահովման մեծ փորձ, որը հիմք դարձավ այդ բնագավառում տեսության և պրակտիկայի հետագա զարգացման համար:

Ռազմաճակատների և կենտրոնական ենթակայության տեղագրական պորամասերի ջանքերով պատրաստվում

էին բլանկային, անագլիֆային և ռելիեֆային քարտեզներ, տեղանքի մանրակերտներ, քաղաքների, երկաթուղային հանգույցների, օդանավակայանների հատակագծեր, տարբեր լուսափատաթղթեր, հրատարակվում էին հետախուզական և կողավորված քարտեզներ, ճանապարհային ցանցի և ձմռան պայմաններում ավտոմոբիլային ճանապարհների քարտեզներ, հրետանային քարտեզներ, հակառակորդի արգելափակոցների, ճարտարագործական կառույցների և կրակային համակարգի 1:50000 մասշտաբի քարտեզներ, անցանելիության քարտեզներ, հակառակորդի պաշտպանության խորքում շտաբների, պահեստների և պաշտպանական բնագծերի տեղաբաշխման 1:100000 մասշտաբի քարտեզներ, անտեսանելիության դաշտերի գծապատկերներ, ջրագրության և ջրատեխնիկական կառույցների, ջրային բնագծերի ու գետանցման հատվածների գծապատկերներ, դիմադրական հանգույցների հատակագծեր: Պատրաստվում էին նաև մարտական գրաֆիկական փաստաթղթեր (կրակային պլանշետներ, ՀՎ-ի պորամասերի համար կրակային քարտեզ, ջրածածկման գծապատկերներ, տեղանքի մասին տեղեկագրեր և այլն):

Ռելիեֆային քարտեզների ու տեղանքի մանրակերտների ավելի ու ավելի մեծ պահանջարկ էր զգացվում: 1-ին Բելոռուսական ռազմաճակատի տեղագրական ծառայությունը 10 օրվա ընթացքում պատրաստեց Բեռլինի՝ 1:5000 մասշտաբի ռելիեֆային մանրակերտը, որի չափերն էին 1,5×1,7 մ: Այն հեշտ տեղափոխելի էր և լայն կիրառություն գտավ եպրափակիչ գործողությունների ժամանակ: Այդ ծառայությունը պատրաստեց նաև Բեռլինի՝ 1:15000 մասշտաբի ռելիեֆային հատակագիծը:

Ռազմաճակատների տեղագրական ծառայություններն ակտիվորեն մասնակցեցին նաև օդալուսանկարների ապագադրականացման, օդային լուսանկարման նյութերի հիման վրա նշանակետերի կորդինատների որոշման գործին,

ընդամին՝ օդալուսածառայության հետ համատեղ:

Հետպատերազմյան տարիներին զորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովման տեսության և պրակտիկայի վարճացումը կանխորոշված էր գիտատեխնիկական նվաճումներով (այդ թըվում և՛ ռազմական գործում), ռազմագիտության վարճացմամբ: Հայտնի է, որ այդ տարիներին առաջ եկան զինված պայքարի մի շարք նոր միջոցներ (տարբեր նախանշանակման հրթիռներ, հայտնաբերման և նշանառման ռադիոտեխնիկական միջոցներ, ՁՈՒ-ի բոլոր տեսակներում և բոլոր գորատեսակներում կիրառություն գտած ուղեվարական միջոցներ, զորքերի կառավարման ավտոմատացված միջոցներ), որոնց համար անհրաժեշտ էին տեղագրաներկրաբաշխական տվյալներ: Էսպես մեծապես տեղագրաներկրաբաշխական տվյալներին ներկայացվող պահանջները, աճեց դերանց ծավալը, փոխվեցին ՌՏՕ-ի կողմից կատարվող տեղագրաներկրաբաշխական աշխատանքների բնույթն ու բովանդակությունը:

ՌՏՕ-ի ստորաբաժանումներն ու վորամասերը այժմ սպառազինված են տեղագրաներկրաբաշխական սկզբունքորեն նոր տեխնիկայով՝ հողակային թեոդոլիտներով, հեռաչափներով, էլեկտրոնային հաշվողական համակարգերով և այլն: Տիեզերքի յուրացման բնագավառում ձեռք բերված նվաճումների շնորհիվ ՌՏՕ-ի համար հնարավորություն ստեղծվեց լուծելու ընդհանրական խնդիրներ: Ներկայումս ՌՏՕ-ն ունի մեծ և բարդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ամեն ինչ:

Արդի ժամանակաշրջանում զորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովումը հրամանատարներին, շտաբներին և զորքերին այնպիսի տեղագրաներկրաբաշխական տվյալների հաղորդման ուղղությամբ իրականացվող միջոցառումների համալիր է, որոնք որոշումների կայացման, զորքերի համագործակցության կազմակերպման և զորքերի կառավարման ժամանակ անհրաժեշտ

են տեղանքի ուսումնասիրման և գնահատման համար, ինչպես նաև զենքի և մարտական տեխնիկայի առավել արդյունավետ օգտագործման համար:

Առավել կարևոր տեղագրաներկրաբաշխական տվյալներ են՝ տեղանքի բնույթի մասին տեղեկությունները, ընդհանուր երկրային ձվածրարդի, Երկրի ձգողական դաշտի պարամետրներն ու 1942 թ. կողորդիսատային համակարգի կողմնորոշման տարրերը, պետական երկրաբաշխական ցանցի, հատուկ երկրաբաշխական ցանցերի կետերի կողորդիսատները և այլն: Այս տվյալները զորքերին հաղորդվում են տեղագրական և հատուկ քարտեզների, երկրաբաշխական կետերի կողորդիսատների և ծանրաչափական կետերի ցանցերի, տեղեկանքների, ցուցակների և այլ ձևերով:

Տեղագրաներկրաբաշխական տվյալների նկատմամբ կարևորագույն պահանջներն են ճշգրտությունը և հավաստիությունը, իսկ զորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովման նկատմամբ՝ պատեհաժամությունը:

Չորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովման ուղղությամբ հիմնական աշխատանքներն իրագործում են ՌՏՕ-ի վորամասերը և մարմինները: Որոշ աշխատանքներ հրամանատարները և շտաբները կատարում են իրենց ենթակա զորքերի ուժերով (վորամասերի և ստորաբաժանումների ապահովումը քարտեզներով, զորքերի մարտակարգի տարրերի կապակցումը և այլն):

Չորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովման գլխավոր խնդիրն է տեղագրաներկրաբաշխական քարտեզներով նրանց ապահովումը, քանի որ քարտեզը զորքերի կառավարման համար հիմնական փաստաթղթերից մեկն է:

Խնդիրներից կարևորությամբ երկրորդը հրթիռային զորքերի, հրետանու, ավիացիայի, ռադիոտեխնիկական և ուղեվարական միջոցներ սպասարկող ստորաբաժանումների ապահովումն է աստիճանագրական-երկրաբաշխական և ծանրաչափական տվյալներով: Դա հնարավորություն է տալիս էսպես մեծացնելու

պենքի և մարտական տեխնիկայի կիրառման արդյունավետությունը:

Չորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովման կարևոր խնդիրներին էն նաև տեղանքի մասին լրացուցիչ կամ հատուկ տեղեկություն բովանդակող քարտեզների ու լուսամասատաթղթերի ըստեղծումը և հանձնումը պորքերին:

Այս խնդիրների հաջող լուծման պայմաններն են՝

— ռավամատեղագրական ծառայության մարմինների և պորամասերի մարտական ու մոբիլիզացիոն բարձր պատրաստությունը և կարողությունը՝ ժամանակակից պատերազմի բարդ իրավիճակներում իրականացնելու պորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովում,

— տեղագրաներկրաբաշխական առումով ռավամական գործողությունների թատերաբեմի նախապատրաստման ուղղությամբ միջոցառումների իրագործումը,

— տեղագրական հետախուզության անընդհատ վարումը,

— պորքերի տեղագրաներկրաբաշխական ապահովման ուղղությամբ միջոցառումների համաձայնեցումը շահագրգիռ վարչությունների (բաժինների, բաժանմունքների) հետ,

— տեղագրական ծառայության ստորաբաժանումների և պորամասերի միջև համագործակցության կազմակերպումը և պահպանումը,

— տեղագրական ծառայության պորամասերի ու ստորաբաժանումների անընդմեջ և հաստատակամ կառավարումը,

— պորքերի տեղագրական պատրաստման հմուտ կազմակերպական-մեթոդական ղեկավարումը:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, թե ներկայիս ռավամական գործողությունների հաջող կազմակերպման համար որքան մեծ նշանակություն ունի ռավամատեղագրական նախապատրաստումը, որն իրականացվում է ռավամատեղագրական ծառայության ուժերով: Այդ նկատառումով պատահական չէ, որ հայկական պետականության վերականգնումը և ՀՀ ՁՈՒ-ի ստեղծումը

անհրաժեշտ դարձրին նաև ռավամատեղագրական ծառայության կազմավորումը: Եվ 1992 թ. սեպտեմբերին Հայաստանում առաջին անգամ ստեղծվեց ռավամատեղագրական ծառայություն: Հետագայում այդ ծառայությունը վերակազմավորվեց ՀՀ ՁՈՒ-ի գլխավոր շտաբի ռավամատեղագրական բաժնի: Այդ ՌՏԲ-ն իր գործունեությունը ծավալեց նախկին բանակային ռավամատեղագրական պորամասի բազայի վրա: Այդ պորամասի խնդիրը չէր եղել տեղագրական քարտեզների կազմումը և հրատարակումը, քանի որ տեղագրաներկրաբաշխական տվյալներով և նյութերով ապահովումը կատարվում էր կենտրոնացված եղանակով:

Հայաստանի տարածքում տեղաբաշխված պորամիավորումներին և պորամասերին տեղագրական քարտեզներով և այլ տեղագրաներկրաբաշխական նյութերով ապահովում էր Անդրկովկասյան վինվորական օկրուգի ՌՏԲ-ն: Տեղագրական քարտեզները կազմվում և հրատարակվում էին Թբիլիսիի ռավամատեղագրական ֆաբրիկայում, իսկ դրանց առաքումը պորքերին կատարվում էր Ղապախ քաղաքում գտնվող կենտրոնական բազայից:

ՀՀ ՁՈՒ-ի ԳԵ-ի ՌՏԲ-ի առջև ծառայած էր մի առաջնահերթ խնդիր՝ ամենակարճ ժամկետներում պատրաստել վինվորական մասնագետներ՝ քարտեզագիրներ տեղագրական քարտեզներ կազմելու և հրատարակելու համար. խոսքը հատկապես վերաբերում էր Հայաստանի այն տարածքներին, որոնց տեղագրական քարտեզները չկային:.

ՌՏԲ-ն այդ խնդիրը հաջողությամբ լուծեց: 1993 թ. մայիսին սեփական ուժերով և միջոցներով կազմվեց և հրատարակվեց առաջին տեղագրական քարտեզը:

Սկսած 1993 թվականից մինչև օրս ՌՏԲ-ի կողմից հրատարակման են պատրաստվել և հրատարակվել մեծ թվով տեղագրական քարտեզներ, որոնք առանց հապաղման հասցվել են պորքերին:

Այս գործում մեծ ներդրում ունե-

յան կապիտան Վարյանը, ենթասպա Գրեչուխան և շարքային Միքայելյանը:

Ռազմական տեղագիրները մասնակցել են նաև տեղանքի մանրակերտների ստեղծմանը, ինչպես նաև ռելիեֆային քարտեզների պատրաստման, երկրաբաշխական չափումների կատարման և մի շարք այլ տեղագրաերկրաբաշխական աշխատանքներին:

Տվյալ փուլում ՌՏՖ-ի հիմնական խնդիրն է կորքերի անխափան ապահովումը անհրաժեշտ քանակությամբ տեղագրական քարտեզներով: Այդ խնդրի հաջող կատարման համար ՌՏՖ-ն պետք է իրականացնի մի շարք միջոցառումներ, որոնցից առավել կարևորներն են.

— քարտեզագրական սարքավորման հպորության մեծացումը,

— ռազմական տեղագիրների պատրաստման մակարդակի բարձրացումը,

— անցումը ԷՀՄ-ների կիրառության տեղագրական քարտեզների կազմման և հրատարակման նոր տեխնոլոգիաներին և երկրաբաշխական կետերի կոորդինատների ցանկերի ստեղծումը,

— տեղագրական քարտեզների նորացումը երկրաբաշխության և քարտեզագրման ինստիտուտի հետ համատեղ,

— ռազմական տեղագրության գծով պարապմունքների անցկացման մեթոդիկայի կատարելագործումը,

— երկրաբաշխական կետերի կոորդինատների որոշումը արբանյակային ուղեվարավան համակարգերի կիրառմամբ:

Սակայն դրանք այլ ուսումնասիրության նյութ են:

ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

1. Лисовский. Закавказье. Часть I. Местность. 1896.
2. Гиппиус. Отчет о поездке 1889 г. Сборник маршрутов в Турецкой Армении, Курдистане и Сирии. 1892.
3. Аверьянов-Добошинский. Краткий военный обзор Кавказско-Турецкого театра военных действий. 1905.
